



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1669-1678

17

4-64

10/20/50
NO 204

ԳՐԻՅԱԿՆԵՐ

Ի ԵՐՈՅԵԿԵՆ ՄԵՐԳԻՐ

ԿԱՄ

ԱՌԵՐԿՆՈՒԹԻՒՆԻ ԵՒ ՄՈՒՈՒԹԻՒՆԻ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ԳԱՂՂԱԿԱՆԷ

68

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՂԻՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՆԿԵՆՏԻՍԵԱՆ

1863

9072-111

111

111


9-

ԳՐԻՅԱԿՆԵՐ

Ի ԱՐՈՅԱԿԱՆ ՄԱՐԳՐ,

ԿԱՄ

ԱՌՆԻՆՈՒԹԻՆԻ ԵՒ ՄՈՒԹԻՆԻ



ԹԱՐԳՄԱՆԵԱՑ Ի ԳԱՂՂԻԵՐԵՆԵ

ՈՒԹԵՆՍ ԹԵՒԵՆՍԵՆ

ՆԱԽԻՆ ՅԱՆԱԿԵՐՏԱՑ Ն. ՎԱՐԺԵՐԱՆԻՆ

ՄԵՌՈՒՄ ԵՒ ԵՄՈՒՄ ԳՐԱՅԻՆՆԵՐ

ԽԱՍԳԻՒՂԻ

ՅԱՅԻՆ ԵՒ ԵՄՈՒՄ ԳՐԱՅԻՆՆԵՐ

ՄԱՐԿՈՍ ԵՒ ԵՄՈՒՄ ԳՐԱՅԻՆՆԵՐ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՂԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻԻԿԵՆՏԻՍԵԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐԽ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԱՏԹԵՈՍԻ ԱՌԱՋՆՈՅ

Ի ՊԱՏՐԻԱՐԻԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՍ

Կ. ՊՕԼՍՈՅ ՏԵՂԱՊԱՀՈՒԹԵԱՆ

ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ

6457-57

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

1881

Ն Ե Ր Ա Տ Ո Ի Թ Ի Ի Ն


Արևելե Ազգիս բարոյական օգուտ մը ընելու նպատակաւ, գրեթէ կարողութեանս ներածին չափ աշխատութեամբ «Վարոյական մարդը» կոչուած գրքոյկը Վաղղիերէն բնագրէն Հայերէնի թարգմանելով՝ ՚ի լոյս ընծայելու փութացայ : Այլ ՏԸ Վրիլէոնին բարոյականի վրայ յօրինած այս գրքոյկը՝ համառօտութեամբ հանդերձ, պարզ խնաստաներով և ազգու եղանակաւ առաքինութիւնն իր սիրուն ևռանգներովը, և անկէ յառաջ եկող բարոյական արդիւնքները կը նկարագրէ. այն վսեմ արդեւնքները որ զմարդ երկնաքաղաքացի կ'ընեն : Այն ճարտարութեամբ նաև մարդուն աչքին առջև կը բերէ այն ժանտագէմ մտութիւնները և ա՛նոնցմէ ճնած բիւրապատիկ աղէտները որոնք զմարդ բնականութեան կարգէն հանելով՝ ՚ի դասս անբան անասնոց կը խոնարհեցնեն. ուստի հարկ չէ ըսել թէ այս գիրքը երկու մասերու բաժնուած է. առաջին մասը առաքինութիւններ կը բովանդակէ, երկրորդ մասը՝ մտութիւններ :

Այս տեսակի գիրք մը, որուն առհասարակ ամեն հասակի մարդկան օգտակար ըլլալն յայտնի է, ըստ մեզ առաւել ուսմանց աստարեղին մէջ այն ինչ թեւակոխող ուսումնասէր պատանեկաց կար-

զարու յարմար գիրք մը կրնայ համարուիլ : Իւր
 քոյականը ուսմանէ աւելի կ'արժէ , ուսմանց աղե
 է . պէտք է որքան որ , տղայք անդամին իրենց
 մասաղ հասակին անոր սկզբունքներն իրենց սրտե
 րուն մէջ սերմանն , ի վարժս ուսմանց յառաջա
 դէ՛մ ըլլալու ինչ յանքեր որ կ'ընեն , նոյն ջանքը
 և թերեւս աւելին , դիրենք բարոյականի և առա
 քինութեան մէջ վարժելու համար ընեն :

Մենք այս պատճառները մեր մտքին առջև
 ունենալով , մեր կրտսեր եղբարց բարոյական օգուտ
 մը ընելու գիտաւորութեամբ , մեր գոյզն աշխա
 տութեան երախայրիքն անոնց բարւոյն նուիրել
 յօժարեցանք . աներկբայ ըլլալով որ իրենք եւս
 կատարեալ հաճութեամբ և ներողամիտ ոգւով մեր
 փոքր աշխատութիւնն ընդունելով մեր յոյսը ՚ի գե
 րեւ չին հաներ :

ՔԵԹԵՈՍ ԹԱՌԵՈՍԵՑ



ԲԱՐՅԱԿԱՆ ՍԵՐՅՐ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Գ Լ ՈՒ Խ Ա .

Երկիր-դ՝ Եր-այ և Գր-ու-նի-ան զրայ :

Ա՛վ մարդ , որ ՚ի պատկերի գերազայն
Երկիրն ստեղծուած ես , ինչ պիտի ըլլայ ար-
դեօք քու բարձր վախճանդ : Արկնից հրաշա-
կերտները , լուսոյ այն Արկնաւորները , միայն
քու բնակած այս վաքրիկ երկրագունայ լու-
սաւորելու հաճար ստեղծուած են :

Ա՛վ խորհուրդ արարչութեան : Ա՛վ բա-
ւական է երբէք քեզ հասու ըլլալ . այն Աստ-
ուածային բոցը , որ դքեզ կը շնչաւորէ , ան-
մահ բանականութիւնը՝ որ դքեզ կ'առաջ-
նորդէ , նիւթեղէն մարմնոյ մը հետ միաւոր-
ուած է . միութիւն մը որ անհաս է , քան
զի՛ Եւ-հարնականի մարմն մէջ ծնած է , և ա-
նոր գաղանկիքը նա միայն գիտէ :

Ա՛վ նախահայր իմ , սրչափ մեծ էիր գու-
երք Արարչին ձեռքէն ելար : Նա դքեզ հա-
ճութեամբ տեսաւ . դուն անկէ այս երկիրը
քեզ նման արարածներով լեցունելու հրա-
ճ

մանք , և անմահութիւնք բեղմնաւոր ընելու
սքանչելի դորութիւն մը ընկալար : Քու հա
զիդ , որ աներեւոյթ դորութեամբ մը նիւ
թոյ արգելաններուն մէջ փակուած էր , չի
կրցաւ գէտ 'ի իր աղբիւրը սլանալ . հողւոյդ
նուրբ բոցը 'ի վեր ամբառնալ 'ի զուր կը
ցանկար . իր վրայ ծանրացող զանգուածը
զնա երկրիս վրայ արգիլեց և հոն հաստատեց :

Քեզ ընկեր մը հարկաւոր էր , որպէս զի
քեզ սիրէր . այն էակն ալ որուն Արարիչը
չունչ և կենդանութիւն տուաւ , բուն խել
քենէ առնուեցաւ :

Վեղեցիկդ Ալա , դու երեւցար , շնորհքն
ու գեղեցիկութիւնն ալ քեզի հետ երևցան :
Այն ատեն դու քու բոլոր առաքինութիւն
ներդ ունէիր , դուն ալ , Հայր խմ , քու ան
մեղութիւնդ : Աստուած կը խօսի , զձեզ
ձեր գործքերուն աէր կ'ընէ , զձեզ խմաս
տութեամբ և դորութեամբ կը վառէ , և
ձեզնէ կրասպասէ այն պատիւը զոր երախտեացը
համար անոր մատուցանել պարտաւոր էիք :

Աստուած ձեր սրտերն այնպէս յարգա
րեց , որ զինքը սիրէք , այսինքն ազատ . քան
զի առանց ազատութեան սիրել ինչպէս հը
նարէ : Ձեր արդիւնքը լոկ հնազանդութիւնը
պիտի ըլլար , որուն փոխարէն ձեզի յաւիտե
ւեական երջանկութիւն մը պիտի տրուէր :

Բայց եղիւ կ , ալ Հայր խմ , ոչինչն ու փա

Չին, որոցմէ դուն ՚ի գոյ ելար, քու աչուք
ներեդ անտես եղան: Հոգարտութիւնը ե-
րեւցաւ, և անմահ ոգւոյդ դորութիւնը՝ Աս-
տուծոյ հաւասարելու անհեղեղ խորհուրդ
մը քու մտացդ մէջ յղանալ տուաւ:

Աճիրը կատարուեցաւ, մարդն իր աստի-
ճանէն ինկաւ, երկիւղը հոգւոյն վրայ տի-
րեց, առաքինութեանցը հետ մուտքութիւններ
խառնուեցան, խղճին խայթը երեւան ելաւ:

Այն ատեն մարդը կարծեց թէ ամեն բան
կորոյս. բայց Արարչին բարերարութիւնն
անիկայ անկոյս չ'թողուց:

Այսպէս եղան մեր նախածնողք, և հոս
առաջին դարը կը լմննայ:

Արկրորդ մարդն աշխարհք եկաւ, ապա-
կանեալ բնութիւնը բոլոր մարդկութեան
անցաւ:

Ահա նկարագրել ուղած մարդս: Բայց
ի՛նչպէս կրնամ նկարել անանկ պատկեր
մը որուն շարժմունքներն այնպէս բաղմադի-
մի են և արագ արագ կը փոխուին: Անոր
ըլլալով քան զօր և թեթև քան զհողմ, և
իր կերպարանքը փոխելու մէջ առասպելեալ
Պրտեսէն ճարտար և հնարագետ ըլլալով,
երբ կը կարծես թէ բռնեցիր, և ահա խոյս
կուտայ: Անմահ ոգի, որ անոր շունչ և
կենդանութիւն ես, կեցուր աղէ՛ վայր մի այն
փախատական նիւթը, ճանչցուր ինձ անոր ա-

ուարինու թեանցը , կրկնե ու մարտ թեանցը
սկզբու նքները :

Օրուան լոյսը հաղիւ թէ մարդուն տը
կար աչու ընկրուն կը ծագէ , և ահա մարդը
հեծու թեամբք և արտասուօք իր գոյու թիւ
նը կը յայտնէ :

Մարդուն իր առաջին տարիներուն մէջ
բրած գործքերուն բարին ալ գրեթէ ակա
մայ են : Քանզի ինչ որ ընէ արեան թերա
գրու թեամբք կրնէ . արդարեւ հոգին ինչպէս
ձերու թեան , նոյնպէս մանկու թեան հասա
կին մէջ զգացումներով կը կառավարուի .
բայց մարմնայն գործարանները մանկու թեան
մէջ այնպէս փափուկ են՝ որ հոգին զգացու
թեանց ձեռքով թեթե տպաւորու թիւններ
և եթ կրնայ ընդունի :

Պարզ՝ այսպէս իր մանկու թեան խառա
րին մէջ նկատելով , օրուան մը նոր ծագած
աղօտ այգուն պատկերն է : Նրեղակը , դեռ
ակար բլալով երկրիս ան մասին մէջ զոր այն
ինչ լուսաւորելու սկսած է , գիշերուան խա
ւարը մեղմով և տակաւ կրնայ փարատել :

Վի սքանչելեացս , ան ոգին որ այսպէս ի
մանկու թեան հաղիւ աղօտ նշայլ մը կուտայ ,
թերեւս օր մը բարտ արեղերք իր լուսով
սքանչացունէ :

Ի՞նչ է այն աներեւոյթ զօրու թիւնը , որ
այս անմահ հոգւոյն եռանդը մեղմացունել

էր թուի, մինչդեռ նիւթը գործարանները
 էր դորացնէ : Մարդու բանականու թիւնը,
 թէպէտեւ տղայու թեան ասե՛ն թմրած և
 հանդարտ է, տակաւին մի և նոյն սկզբու նը-
 ներով անոր կ'առաջնորդէ, մարդ իրեն հա-
 մար բարի կարծածը էր սիրէ և էր մնառէ,
 իսկ իրեն համար չար կարծածէ՛ն ալ էր վախ-
 նայ և էր խորշի : Ա՛յ թէ հոգին բարի բան մը
 տեսնելով՝ խնդայ, իր ուրախու թիւնը էր
 յայտնէ, եթէ չար բան մը զգայ, աղաղակ-
 ներով և արտասուօք օգնու թիւն էր կար-
 դայ, աս է մանկու թեան լեղուն : Այ միայն
 այսչափ, այլ և շարէ վանելու էր ջանայ, և
 այս ջանքը բարկու թիւնն է, բարկու թիւնը
 էր սեւէ, մինչև որ դդայարանքներն անոր
 աւելի հեշտ առարկայ մը բնծայեն, որով
 զննքը խռովող շարիքը անհետ ըլլայ :

Մարդ՝ քանի որ առիթն ասնէ, այնչափ
 իր գործարանները էր գորանան, որով մեծա-
 մեծ իրաց պատկերներ ըմբռնելու բաւական
 կ'ըլլայ :

Այ՛ թէ իր դդայու թիւններն անոր հաճելի
 առարկաներ ընծայեցնեն, բանականու թիւ-
 նը՝ անոր հեշտու թիւնն զգալ կուտայ այն-
 պիսի հանդարտութեան մը մէջ՝ որ անոր ի-
 մաստուն և խաղաղ աստրժակներ վայելել
 կուտայ :

Այ՛ թէ մտքին ընծայուած առարկան մտուէ

կերպացոյցանք ունի, խառնապայտ կիրքեր խառն
երեւան կելլեն, և իրենց բոլոր դորութին
ու հրատարակող դգայութիներէն փոխ կ'առնեն:

Նյն ատեն մարդ այնպիսի յուզման մը
մէջ կը գտնուի, որուն պատճառը ինքն ան
գամ չ'գիտէր, և սա է այն ատուր վայրկեա
նք յորում բանականութիւնը, դգայութիւն
ներն, առաքինութիւններն և մարութիւններ
ըը կը կռուին: Մարդ էթէ այն կրկն գէմ
գնէ, ճշմարտասպէս մարդ է. այն ատեն իր
էութեանը մեծութիւնը և բանականութեան
յարթանակը կը վայելէ: Նպա էթէ կիրքե
րուն անդի տայ, կը կործանի վատանուն, և
այնպիսի կրկն կը մատնուի, որոնք իր խառ
նուածքին, կարողութեանը և տկարութեան
ամենէն աւելի յարմար են:

Չգայութիւնները զհոգին կը յուզեն, և
հոգւոյն առջեւը մատուցուած առարկան զնա
կը հրատարէ, կը տագնապէ կամ կը զարմա
ցնէ: Հրատարակող կը ստիպէ որ բարի երեւ
ցած բանին ետեւէն երթայ, տագնապը խոր
շել կուտայ ան բանէն որ վնասակար կ'երեւի.
Իսկ զարմանքը համը ապշութի կը շուարեցնէ:

Հոգւոյն բուռն շարժումը որ դգայու
թեանց միջոցաւ կը յուզուի, կը կը կոչուի,
առարկան առ որ հոգին սաստկութիւն կը բեր
ուի, կիրքերու յատուկ բնաւորութիւն և
որոշ կերպ մը կ'ընծայէ:

Մարդուս կրօնը, մարտ թեանցն, ու առ
ուսրինու թեանցը վրայ խօսելէ առաջ մեկ
նեկը այն առաջին շարժումները՝ որոնք մար-
դուն վրայ կ'երեւնան, իբր թէ անոր սիրտը
տեսարան կը հանեն :

Այս առաջին շարժումներն են Երկ-ը,
Յոյսը, Գիտ-ի-նը ու Դժոխքը :

Երկիւղը, (միտքս հասկցնելու համար այս-
պէս ըսեմ) առ 'ի չգոյէ բարւոյն կը ճաննի .
Հոյսն ալ բարին հրաւիրող վախաքն է :
Այս զգացումները զորոնք հոգին ամենէն ա-
ռաջ կ'իմանայ, բնաւ չեն հեռանար : Անոնց
բունն սաստիութիւնը մեր զօրութեանը
կամ տկարութեանը համեմատ կ'աճի կամ կը
նուաղի : Արեան ջերմութիւնը կամ հան-
դարտութիւնը, ան զգացումներէն յառաջ
եկած գործքերուն աւելի կամ նուաղ սաստ-
կութիւն կուտան :

Կարճամիտ և փոքրոգի մարդուն վրայ, եր-
կիւղը սոսկում կ'ըլլայ, հոգւոյն ամենէն ա-
ղէտալի զառանցանքն աս է, և մարդուն բա-
նականութիւնն անկէ առնելով, զմարդն իբր
բոլոր հնարքներէն կը մերկայնէ : Մահացու
պատկերներ մարդը շուրջ կը պատեն, այն-
պէս որ բիւրապատիկ սոսկալի կերպերով ըլ-
մահը կը տեսնէ, բոլոր տեսածն ուրիշ բան
չէ, եթէ ոչ արհաւիրք և սուր . ինք իր
ստուերէն անդամ կը զարհուրի :

Սոսկու մը մինակ , եթէ մարդոց սրտին վրայ տարածուէր , զանանք ջնջելու բաւական էր : Այս սոսկու մն է զոր Իսրայէլի ահաւոր Աստուածը ամբողջ Ազգերու կը սպառնար :

Ո՛վ յոյս , դուն մեր սրտերուն համար այն ես , ինչ որ՝ օրը երկրիս համար է : Ամենայն ինչ քեզմով կ'ապրի . առանց քու քաղցր լուսոյդ ամենայն ինչ կը դադարէր :

Յուսահատութիւնը՝ սրտմուծեանն և մտքնուծեանն հնարած բառն է . բնուծեան մէջ յուսահատութիւն չկայ . յուսահատութեամբ գործող մարդուն մտքը՝ պէտք է որ բռնաբար մթնցած ըլլայ . յուսահատութիւնը մինակ սա մի՞ճակի մէջ կրնայ արդար կարծուիլ , բայց մարդ մը որուն բանականութիւն մթնցած է , մարդ չէ . անոր բոլոր գործքերը մարդու բնուծեանէն օտար են . բարոյագէտ մը այնպիսի մարդու մը վրայ բարոյականութեան շուն կամ նկարագիր չ'կրնար գտնել :

Յոյսը՝ ամենէն երջանիկ մարդուն անդամ հեշտութիւնն է . ամենէն թշուառ մարդուն ալ նեցուկ է . Յոյսը հոգւոյն ջահն է , և յուսայ վերջին նշոյլը մարդուն վերջին հառաչանքն է :

Իսկ , վսեմ երգիչ մարդուն անկմանը . անտարակոյս այս ճշմարտութիւնն էր որ ըզքեզ վառեց , երբ ձեռքդ մեզի մէկ գծով դժոխոց սոսկալի պատկերը նկարեց :

Յոյսը դժոխքէն անհետ եղաւ , ան որ
ամեն տեղ իւր Գրանդի :

Տկար մարդը յոյսն իր հետը իւր տանի ,
անտէհերն անոր հետ իւր կռուի . և ամենէն
յուսահատ վայրկենին մէջ երկուքն ալ յոյ-
սը իրենց ընկերին գթութեանը մէջ իւր տես-
նան : Ահլը Գորոսին պէս՝ իբր թագաւոր ,
միւսը Վիտեսին պէս՝ իբրև գերի : Աթէ կան
անանկ վիճակներ ուր ամեն յոյս հատած իւր
տեսները և բնութիւնը իւր կրէ ու իւր հեծի
այն ամեն մահը յոյս մըն է :

Վիշտը մարդուն բնական եղած է , մար-
դուն հետ իւր ծնանի , և մեր նմաններուն վը-
րայ բնութեան աղաղակը՝ գթութիւն իւր ծը-
նուցանէ . ասիկայ սկիզբ մըն է բարերարու-
թեան . և ամեն մարդոց բնական է : Եւ այց
որովհետև մարդս գրեթէ միշտ կերպ մը անձ-
նասիրութեամբ ուրիշին վրայ գթալու իւր
յօժարի , անոր համար շատ անգամ մոլու-
թիւնն առաքինութեան իւր ծառայեցնէ :
Մարդուն թշուառութեան պատկերը , ամեն
հասակի մէջ , կենդանի և յաւէժական դաս
մըն է . քանզի թշուառութիւնները իւր սով-
րեցնեն թէ մարդ իկ իրարու կարօտ են . բը-
նութեան առաջին և ամենէն նուիրական կա-
պը աս է . և թէպէտ գթութիւնը երբէք ա-
ռանց ցաւ և երկիւղ զգալու չկրնար շարժիլ
բայց և այնպէս մեծանուն ոգիներու համար ա-
մենէն մարդը բերկրութեան աղբիւր է :

Անօթխածութեան վրայ :

Այրեւցիր , սիրելիդ անօթխածութիւն ,
 եկ , բնութիւնը դեղեցկացուր : Աթէ յաղ-
 թութեան ճակատը պատկերու համար մար-
 դիկ սարգենին ընտրած են : Արկինք դքեղ
 ընտրած է որ առաքինութեան պաղարջուն
 նշան ըլլաս : Մինչ բարկութիւնը դմարդ տը-
 դեղ կը կացուցանէ , քու անմահ ձեռուը-
 ներդ անմեղութեան ճակատը կը պատկեն .
 ամբարիշտ է ան մարդը որ աստուածեղէն
 ծագումդ կ'ուրանայ , և դքեղ մարդու մը-
 սաց ճնունդ , մարդկան գիւտ կը կարծէ .
 թող այնպիսի ժպիտէր իր յանցանացն անօ-
 թէն դեղնի : Եւայց քու ծագումդ աւելի
 սուրբ է : Մեր հողւոյն բնածին է , և մեր
 միտքը կը վկայէ թէ դուն կաս :

Մարդս առաքինութիւններ և մուլութիւն-
 ներ ունի . եթէ առաքինութիւններ ունի
 անշուշտ խղճի խայթ ալ ունի : Խղճի խայթ
 չէր ըլլար , եթէ անօթ ու անօթխածութիւն
 չըլլար :

Առաջին մարդը պատուէն ինկաւ , շիկնե-
 ցաւ , սրտաբեկ , երկիւղալից անօթահար :
 Այն աստուածաւար նետը բոլոր մարդաց
 սրտին մէջ վարսեալ մնաց :

Ամօթխածու թիւեր ու բիշ բան չէ, եւ թէ
 ոչ հոգւոյն իր մէկ անարդ դործոյն վրայ աւ
 մընալ: Արամհետե միաքը մարմնոյն հեա
 կապուած է, զգայու թիւնները կրնան հոգւ
 ոյն այնպիսի առարկաներ մասուցանել, ու
 բնիք հոգին կը նուաստացնեն՝ այն ասե՛ն հոգւ
 ոյն աղնու թիւեր ամօթ կը կրէ. արիւնք
 կը բորբոքի, և դէմքը կը կարմրի: Այլ բնու
 թեան վիճակին մէջ հոգին բնաւ չար չի դի
 տեր. ուստի և այն վիճակին մէջ բան մը ա
 նոր էութեանն աղնու թիւեր և մեծու
 թիւեր չի կրնար նուազեցնել:

Պարզ և մաքուր բնութիւն, քու անմե
 ղութիւնդ վայրավար կը փնտռենք: Այն եր
 ջանիկ ժամանակն այլ ևս չկայ: Օքեղ կը
 ցանկային դանել այն վայրենի աղբայ մէջ
 որոնք երկրիս ուրիշ մասերուն անձանօթ են:
 Վուք, թափառական աղգեր, արդարեւ մե
 նէ վայրենի էք, բայց մեղի չափ մոլի չէք.
 եթէ դուք ալ մեղի պէս յանցաւոր էք, մե
 ղի պէս ալ խղճի խայթ և ամօթ կ'ըզգաք:
 Վուք սլարդ բնութեան օրէնքներովը կ'ապ
 րիք, բայց այն բնութիւնը ոչ ձեր կլիմային
 ոչ ալ ձեր շնչած օդոյն մէջն է. ձեր սրտե
 րուն մէջն է, ձեր սրտերն ևս ապականեալ
 են: Արդարեւ կիրթ աղգերն իրենց մոլու
 թիւններն ձեղի հաղորդած չեն, բայց մոլու
 թեանց սերմերը, սկզբունքներն ու սրտ

ճատ ներք զուր ձեր սրտերուն մէջ ունիք :

Թերեւս կան մարդիկ որ վայրի դադան ներու նման անտառներու մէջ կը թափառին : Այս մարդիկը որ Աստուծոյ բարկութեանը մէջ ծնած կը թուին, ոչ մեր զեղխութիւնը և ոչ մեր տխարքները կը ճանչնան : Արնան առանց թաղաւորի և առանց օրինաց աղբիլ, բայց առանց բանականութեան և առանց խղճի ըլլալ երբէք չեն կրնար . միշտ իրենց սրտին մէջ կը դանակն անաչառ դատաւոր մը, սուրբ հաճոյքներ, յանցաւոր յօժարութիւններ խղճի խայթ և սրտի տաղնապ :

Անոնք որ սառնամանեաց մէջ ծնած են, հանդերձի համար վայրի դադաններու մորթը կը զգենուն . իսկ անոնք որ տապախառն երկնից տակ են, թռչնոց փետուրներու վրայ կը ծածկուին :

Այլ, ամօթը՝ մերկութեան մէջ չէ, այլ մերկութեամբ նշանակուած սպակերփն մէջ . այն սպակերփն՝ որ զմեզ անասնոց կը նմանցընէ, կամայ և ակամայ մեղի ինկած և վատ թարած մարդուն մեծութիւնը կը յիշեցնէ : Այլութեան յանդգնութիւնը ամօթը կը մարէ, այլ ամօթոյ աղբիւրը հոգւոյն մէջ է, անոր մէկ կայծը հոգւոյն շունչ տալու բաւական է :

Արեւի ամօթխածութիւն, գեղեցկութե

Հնարհ.ք ընծայելու դու միայն բաւական ես :
 Դու որ գրեթէ միշտ մեր հողւոյն ճշգրիտ
 պատկերն ես , կը նմանիս սուրբ և վճիտ աղ-
 բեր մը , որ իր յատակը դանուած նիւթե-
 ըր պայծառ և յատակ կ'երեւցնէ : Դուն ա-
 մեն աչուքներու հրապուրիչ ես . ուստի երբ
 խնաստունը դքեղ կը տեսնէ , առաքինու թիւ
 տեսած կը կարծէ , իսկ ղեղձ մարդն կը կարծէ
 թէ ղեղխու թիւն և փափկու թիւն կը տեսնէ :

Վ՛ի ամօթխածու թիւն , ընծայ մըն ես
 դուն , զոր երկինք մեր ծնած աստեւը մեղի
 կուտայ . քու պարզ և պայծառ շնորհքներդ
 մեր անմեղու թեանը զարդ կ'ընէ , և եթէ
 արժան է ըսել , դուն ես առաջին ծածկոյթը
 որով բնու թիւնը մեր հողին կը պատէ :

Դուք մոլու թիւններով արժեալ մարդիկ ,
 դուք ամեն օր այս առաքինու թիւնը ձեր սրտ-
 տից մէջ սկարացած կը տեսնէք . ամօթխա-
 ծու թիւնը զոր հողմոյ թեթեւ շունջ մը կը
 զարհուրեցնէ , ձեր կիբքերը իբրեւ ահապին
 փոթորիկներէ կը յուզուին :

Յունաց պատմու թեանը մէջ կը կարդանք
 որ , այն երկրին մէջ կղզի մը կար , որոյ բնա-
 կիչներն իրենց ամօթխածու թեանը պատուա-
 կան կոթողներ թողուցած են :

Տարափոխիկ հիւանդու թեանէ մը երկրին
 մէջ տխուր մաղձոտու թի մը ձարակ կը գտնէ .
 այս ախար մանուանդ մանուկ աղջկանց կը

ճարակի : Զիւ անդու թէ սաստիկ տիրած աստե
նք, թշուառ աղջկու նք իրենց կեանքէն անդ ամ
կը տաղանիան , և իրենք զիրենք կը սպաննեն :

Բատաւ որներն 'ի դուր սպաննու թեան
առջեւն առնելու կը ջանան . ամեն արգելք
անօգուտ կ'ըլլայ . անձնասպաններուն թիւը
օր ըստ օրէ կ'աճի : Օտրակոյտը հրաման կը
հանէ որ այնուհետեւ ով որ ինքզինք սպան
նելու յանդգնի , խայտառակու թեան համար
գին մերկ հրապարակը դրուի :

Աղջկու նք այս հրամանէն կը սոսկան , ան
բանը որ օրէնքը չ'կարաց ընել , ամօթխածու
թիւնն ըրաւ . և ան առաքինի արարածները
ինքնակամ կոտորածէն ապրեցան :

Արկու մանկամարդ բրիտանեաց աղջկու նք
հեթանոս բուրմերէ կռապաշտու թեան հը
րաւ իրուելով , անոնց գաղանային բարկու
թեանը զոհ ըլլալու վտանգին մէջ կը գլու
նուին : Անոնց մայրը զարհուրելով , երկու գլու
տերացը հեռ ծովուն եզերքը կը փախչի , պէտք
է որ մեռնինք կ'ըսէ անոնց : Աղէկ , մեռնինք ,
կ'ըսեն արտասուածոր աչօք երկու օրիորդ
ները . հապա եթէ մեր մարմինները մերկ ծո
վուն եզերքը գտնուի՞ն : Իսկոյն իրենց հան
գերձները կազմելով , իրենց մերկու թեան պա
տրասպարան կ'ընեն , այնպէս որ ալիքներն իրենց
մարմինն չ'մերկացնեն . յետոյ երեքն ալ ծովը
կը նետուին 'ի տես խումբ մը լիաի զինուորաց
սրոնք ան անմեղներուն հետամուտ էին :

Գ Լ Ո Ի Ի Գ .

Բարեբարութեան վրայ, որ մարդոցն առաջին
առաջինութեանն է :

Մարդասիրութիւնը՝ առաքինութեանց
կարգը դնել՝ արդարեւ մարդուս մեծ անօթ է .
քանզի մարդասիրութիւնը մարդուս է ու թիւ
է մանաւանդ քան թէ մէկ առաքինութիւնը .
մարդ ըլլալ և մարդասէր չըլլալ՝ բնութեան
օրինաց հակառակ դոյացած ըլլալ է :

Մարդասիրութիւնը՝ մարդու պարտաւոր
ութիւնները կատարել է . ապա առաքինութեան
թիւն մը չէ, այլ պարտաւորութիւն :

Բայց բարեբարութիւն այնպէս չէ . առաքինութեան
պաշտօնն անոր մատուցանելու
պարտաւոր ենք . և երանի թէ շարութիւնը
թողուր, որ բարեբարութիւնն իր աւերքերը
սիրելով խաղաղութեամբ ուրախ ըլլար :

Բարեբար մարդը կրնայ երջանիկ ըլլալու
բաղձալ, բայց չի կրնար երջանիկ ըլլալ, քանի
որ ուրիշներուն թշուառութիւնը կը տեսնէ :
Ար տառապի հոգւով երբ մարդոց վիշտերը
կը տեսնէ, և մինչև որ վիշտերը չկարճեցնէ
կամ չսփոփէ հանգիստ չի գտներ :

Տխուս կ'ողբար և կը հեծէր, երբ թշուառ
մը կը տեսնէր :

Բայց ես չեմ փառայիր անոնց՝ որոնք

մարդաօրու թիւն բառը միշտ շրթունքնե-
րուն վրայ է . իբրև օրէնսդիր կը խօսին , բո-
լոր աշխարհի վրայ կը ցաւին , բայց ուրիշ
բան չեն ըներ , եթէ ոչ աղօթել որ մարդոց
բաղմադիմի թշուառութիւնները վերնան .
արդարև ունայն իղձեր . քանզի տեսնելով
թէ թշուառութեանց բոլորը սփոփել անհը-
նար է , ասիկայ իրենց բարուր կ'ընեն որ բը-
նաւ թշուառութիւն մը չ'սփոփեն , երջան-
կութեան վրայ գեղեցիկ գեղեցիկ կը ճառեն ,
մինչ բաղմաթիւ կարօտներ առանց օգնու-
թեան անոնց աչքին առջև հոգի կ'աւանդեն :

Բարերար մարդը , որ ցոյց ընել չի սիրեր ,
իր դիւցազնական գործքերը մութի մէջ կը
գործէ : Բոլորտիրք գանուող թշուառներուն
վրայ իր երախտիքը սփռելով գոհ և ուրախ
է . իսկ ան թշուառներուն համար զորոնք չի
տեսներ , կը մխիթարուի խորհելով թէ անոնց
համար ալ իրեն նման բարերարներ կը գըտ-
նուին : Ինքը միշտ թշուառներուն վրայ կը
խորհի , ուստի իրեն նման չի խորհողներուն
երջանկութեանը վրայ կը խնդայ :

Կս առ սիրուն բարերարութիւնը տեսայ ,
և բոլոր ընթացքին մէջ անոր հետամուտ ե-
ղայ , և զարմանացս պատմութիւնը մարդոց
կ'ուղեմ պատմել :

Դու բարեկամս , որոյ առաքինութիւնը
ղեւ ստեղծ կը բարբառէր , և որոյ կոյրատեանը

վրայ տակաւին կ'ողբան . բնաւ չի պիտի մտա-
նամ այն երջանիկ օրերը յորս քու հպատակ-
ներուդ մէջ քեզի հետ կը շրջէի . երբէք թա-
ղաւ որ մը ինձի ան աստիճան մեծ չ'երևցաւ :

Այն մեծ մարդը , իր սիրուն կնոջն սիրե-
լին էր , և իր զաւկներուն պաշտելի : Անոր
խաղաղ հոգին բուռն կիրքերը կը մերժէր . իր
քաղցր փիլիսոփայութեանը մէջ ուրիշ պէտք
չէր գիտեր , եթէ ոչ ուրիշներն իր բարե-
բարութիւններուն հաղորդ ընել : Չկար թըշ-
ուսա մը որ անոր ծանօթ չըլլար . մանաւանդ
ձերերը՝ որոնք անոր սրտին սիրելիներն էին .
քանզի զանոնք տեսնելով իր նախնիքը տե-
սած կը կարծէր : Անոր անկեղծութիւնն ու
զուարթութիւնը անոր ճշմարիտ հեշտակա-
նութեան աղբիւր էր . զեղիութիւնը մեր-
ժելով՝ շուրջ հիւրասիրութեան ասպնջական
եղած էր . զինք խրախուսող ձայնը՝ թշուա-
ռին աղաղակն էր : Անգամ մը տեսայ որ տը-
ղոցը հետ իր գեղերն ու ագարակները կ'եր-
թար , և իր առատութիւնը գետի նման հօ-
սելով , բոլոր ան երկիրը կը պտտէր . անոր
անցնելու ատեն այգեգործն իր գործէն կը
դադրէր , մշակն իր արօրը կը թողուր , և
երկրագործ մանկտին իրենց ձեռքն եղածը հոն
արտին մէջ նետելով , անոր ոտուրներն համ-
բուրելու կը վաղէին : Աւրախութիւնը անոնց
գիմացը վրայ նկարուած էր . աշուրներնին

6457.57

իրենց անբոջք վրայ, անոր ետեւէն կը դիտէին
անբնդ հաս, և երբ այլ ևս չէին տեսանէր,
բազկատարած յերկինս, զնա կ'օրհնէին, և
նարէն իրենց աշխատանայը կը դառնային:

Արբ շինական զբաղմունքները կը դադրե-
ին, բոլոր երիտասարդները թմբկօք և սրնքօք
անոր բոլորաիրը կ'առնէին, տարիաւորք ի-
րենց տարիածունները, և տարիածուք իրենց
տարիաւորներն անկէ կը խնդրէին: Իսկոյն
ամուսնու թիւնները կը կատարուէին, երջան-
կու թիւնը կը յաջորդէր. բարերարին զաւկը
ներուս նոր հպատակներ կը պատրաստուէին.
որպէս զի անոնք ալ իրենց հպատակները եր-
ջանիկ ընեն:

Նա ասոնք են բարերարու թեան գործ-
քերը: Հիմա անոր բուն խօսքերն ալ կու-
ղեմ մէջ բերել. բայց ո՞տայր թէ այն խօս-
քերը բոլոր մարդոց սրտերուն մէջ դրոշմուէ-
ին: Պատասխարան մը շինել կը խորհի, և իր
բոլոր իշխանու թեան մէջ գտնուած հիւանդ-
ներու և ծերերու համար եկամուտ կը պատ-
րաստէ: Նս առաջադրու թեան մեծու թիւնը
ու օգտակարու թիւնը անոր երկիւղ պատճա-
ռեց մահուանէ, որմէ բնաւ չէր վախնար:

Տղաքը կը ժողովէ ու կ'ըսէ. «Նուք զգա-
« յուն ծնած էք. թշուառներուն համար
« միշտ արտասուք թափեցէք, և երկինք որ
« իր պարգեւներովը զիս լիացուց, զիս ձեր

“ առաքինու թեանը վկայ ըրած է :

“ Տեսէք սա թշուառները, որոնց աչուք-
“ ները զձեզ կը դիտեն : Միշտ կ'ըսէի անոնց .

“ Օ, աւկըներու ս վատահ եղէք : Արդեակք իմ,
“ ձերու թեանս համար կը հոգամ, խոստացէք

“ որ առաջադրու թիւնս պիտի կատարէք, ձեր
“ հայրը խաղաղութեամբ կը մեռնի ” :

Տղաքը երդում ըրին . շինուածը կանգնե-
ցաւ ու բարերարութեան նուիրուեցաւ :

Այս երջանիկ Հայրը՝ ամեն օր իր տղոց-
մէն իր առաքինու թեանցը վարձքը կ'ընդու-

նէր : Տեսայ որ օր մը աչուքներէն քաղցր ար-
տասուք կը հոսէին . երբ կրտսեր որդին այս

խօսքերը Հօրը կ'ըսէր . Հայր, երթանք մեր
բարի մարդիկը միտիթարենք :

Ի՛նչ զգացում, ի՛նչ առաքինութիւն,
ի՛նչ մարդիկ :

Փղձկեւով կը յիշեմ այն խօսքերը զոր
Սկիւթացի մը Աղէքսանդրին ըսաւ :

Եթէ դու՛ն Աստուած ըլլայիր մարդոց այդչափ
չափի՝ չէիր ընէր :

Արկիւղը, Յոյսը, Կթութիւնը, Բարե-
բարութիւնը սիրոյ արդիւնք են . մանաւանդ

բարեբարութիւնը, որ հանդարտ առաքի-
նութիւն մըն է . իմաստուն սէր մը կը պա-

հանջէ, և զմեզ սիրոյ և բարեկամութեան
ընդունակ կ'ընէ :

Գ Լ Ո Ւ Խ Գ .

Մերոյ վրայ :

Մերը՝ իր առարկային հետ միանալու սաստիկ փափաքն է : Աս փափաքը զգայու թեանց աւելի կամ նուազ հրապուրանօքը ևս աւելի կը սաստկանայ :

Օգայու թիւնները մեր հոգին կը կաշկանդեն, բայց հոգին միշտ խոյս տալու և ազատելու կը ջանայ :

Աթէ միտքն ան կապերը խորտակելու կարող ըլլար, երկրի վրայ սէր չէր ըլլար : Բայց ան կապերուն ծառայ ըլլալով, այլայլու թեամբ կը սիրէ նիւթ մը որ իրեն պէս հոգի ունի, զգալու և սիրելու բնութեան է :

Հաճու թիւն զգալու սէրը՝ սրտին ՚ի բնէ զգայուն ըլլալուն վրայ կ'աւելնայ . զգայունը աւելի զգայուն կ'ընէ, և սրտին առ զգայուն բնութիւնը կ'աճեցնէ մինչև ան վայրկեանը՝ ուր սրտին անհաստատութիւնն ու թեթեւութիւնը նոյն զգայուն բնութիւնը կ'եղծանէ :

Վարդը նարէն հոգի առնել կ'ուզէ, և առ հոգին իրեն արժանի առարկայի մը ձեռքով առնել կ'ուզէ : Աս զգացումը առաջ կը բերէ սէր՝ և բարեկամութիւն :

Արուի և իգի տարբերութիւնը, և սե-

բունդ յառաջ բերելու ցանկու թիւնը՝ բա-
րեկամու թեան քաղցրու թեանը վրայ քաղց-
րիկ զգայու թեանց սաստիկ հեշտու թիւններն
ալ կը յաւելուն, և կիրքերը սրոնք աս վիճա-
կէն կը զարթնուն, սիրոյ զայրացումն ու մո-
լեզնու թիւնը կը պատճառեն :

Աւնայնու թիւն մը որ մարդուն բնական
է, սիրոյ հետ կը խառնուի, և անոր կը ցուցը-
նէ որ սիրած առարկային սիրտը պիտի ստա-
նայ. աս յոյսը մարդուն հպարտու թեանը ա-
ւելի կը նպաստէ : Վարդ իր աս ցնորքը կը
պաճուճէ և կը գեղեցկացնէ. իրեն ոսոխներ
տեսնել կը կարծէ, և անոնց հետ կուտելու
կը պատրաստուի. երեւակայացած առարկա-
յին վրայ բնու թեան ամեն գեղեցկու թիւնը
կը գտնէ, և բոլորովին իրեն սեպհականելու
կը փափաքի :

Սիրոյ աս գործերն այնպէս այլ և այլ են
ինչպէս մեր բնաւորու թիւնը : Աթէ սիրուած
առարկան աղնիւ է, զգայու թեանց հրապոյ-
րը, եթէ այսպէս ըսել արժան է, անոր վրայ
ամեն բան առաքինու թիւն կը կարծէ : Իսկ
եթէ սիրուած առարկան միջին բան մըն է,
զգայու թեանց պատրանքը, անոր վրայ ար-
դարեւ հրէշ մը կը տեսնէ, բայց ան հրէշն ալ
սիրելոյն վայելչու թեանը և սիրողին զգացած
հեշտու թեանը առջեւ են աներեւոյթ կ'ըլլայ.
քանզի սիրելոյն, վայելչուին ու սիրողին

հեշտու թիւնը՝ հրեշտակէ կամ կը գեղեցկացնէ :

Հասարակ միտք մը սիրոյ կիրքէն այնպէս կը կուրնայ, որ սիրելը ոյն ամէն մէկ մտլու թիւնը՝ մէյմէկ առարկանու թիւն կը կարծէ. քանզի մարդս երբէք չ'կրնար հաւատալ թէ սիրած առարկան ատելի է, ուստի որովհետեւ կը հաւատայ թէ սիրոյ արժանի է, անոր կ'ընտանեւայ, անկէ կ'ախորժի, անոր համա կրու թիւնը կը դգայ, մինչև որ բոլորովին անոր կը նմանի :

Քարեկամու թեան հաստատուն քլայուն, սիրոյ ալ իշխանու թի ստանալուն պատճառն առ է որ երկուքն ալ քարեկամու թիւնն ու սէրը, արդիւնք են այնպիսի դգացմանց որոնք մեղի հետ կը ծնանին :

Վարդս՝ կը ցանկայ, կը վախնայ, կը յուսայ, սիրտը մարդուն յոյս կուտայ թէ նոր գոյու թիւն մը պիտի ստանայ, սիրոյ սաստկու թեան կամ նուազման աստիճանները կախում ունին ան գաղտնիարէն՝ զոր հոգին ղինք իրեն ձգող առարկային վրայ կ'ունենայ : Վարդ տեսնելուն պէս ան առարկան՝ որուն համար կը կարծէ թէ ղինք երջանիկ պիտի ընէ, խնոյն վտեմ դգացումներ կ'ունենայ, որոցմով ինք իրմէ կ'ելլէ :

Ալ սէրը չ'գիտէր, զանիկայ չ'կրնար սահմանել, և ան որ կը կարծէ թէ սիրոյ սահ-

ճանը կրնայ տալ, սէրը քիչ ճանչցած է :

Կայ իմաստուն սէր մ'այ պնդաբար առարկաներու համար զգրոնք Նախախնամութիւնը մեզի սահմանած է :

Նեկարգ սիրոյ պատճառներն ու արդիւնքները ճանչնալ աւելի դիւրին է :

Մոլութեան ընթացքը սաստիկ և միշտ անհաստատ է :

Ընդհակառակն առաքինութեան ընթացքը հանդարտ և անյողդոզ է :


Փափուկ և առաքինի սրտի մը մէջ, սիրոյ զգացու մը միշտ մաքուր և յատակ է. կարծես թէ ուրիշ բանի համար չերեւար, եթէ ոչ հոգիներ շինելու համար :

Եթէ մարդ ինքզինք չափէն աւելի զգացալիս հեշտութեանց կուտայ, միտքը կ'իջնայ և կը վատթարանայ. բայց ազնիւ սիրոյ հուրը որ զհոգին կը վառէ, մինակ բորբոքելով կ'անցնի իր առարկան, առանց անկէ արդիւնելու :

Հրապուրիչ ազգ կանանց, երանի թէ քու սոսկալի արուեստէդ զրկուած ըլլայիր : Նատենն ալ տակաւին շնորհաց ու բնութեան տէր պիտի ըլլայիր : Արարիչը զքեզ ըրած է որ էրիկ մարդուն հաճոյ ըլլաս. իսկ էրիկ մարդը ստեղծած է որ զքեզ սիրէ, ոչ թէ զքեզ հրապուրէ. բայց երկուքդ ալ ըրած է որ ձեր սիրոյն երեւելի առարկաներն ըլլաք :

Օգտայու թեանց հրապուրանաց մեջ, տակաւ
ւին իր սրատկերն է զոր ձեզի կը ներկայացը-
նէ, այն է սէրը. յարգեցէք սէրը որպէս զի
ձեր կապերը նուիրական ըլլան :

Վուք, կանայք, էրիկ մարդուն ընկերն էք,
և գեղեցիկ գեղեցիկ առաքինութեանց հետ
բիւրապատիկ խայծեր ալ ունիք, ելէք բը-
նութեան ձեռքէն, ընտիր ընտիր ծաղկնե-
րով զարգարուեցէք, և իմաստնոց աէր ըլլա-
լու եկէք : Սիրուն ամօթխածութիւնը ձեր
աչու ընկերուն փայլունը թող մեղմացնէ, իր-
րեւ բարեկամ և բարերար մատուցէք անոնց
այնպիսի սիրտ մը որ սիրել գիտէ, ձեր գե-
ղեցիութեան հրապոյրքը թող զանոնք մանաւ-
ւանդ առաքինութեան յորդորէ. Մատուցոյ
նոր երկրպագուներ, և Հայրենեաց դիւցա-
ղուններ պատրաստեցէք :



Գ Լ Ո Ւ Խ Ե .

Բարեկամութեան վրայ :

Ես չեմ ընդունիր իբր բարեկամ ան մար-
դը որ ինձի կ'ըսէ թէ ուրիշ բարեկամ մ'ալ
ունի : Եթէ ըսածը ճշմարիտ է, անոր խըն-
դակից կ'ըլլամ. բայց կը սխալի եթէ կը յու-
սայ թէ իմ և ուրիշի մ'ալ բարեկամ կրնայ
ըլլալ :

Ճշմարիտ բարեկամ մը մարդուս սրտին
բաւական է . բայց եթէ օտար մը աս յարա-
բերութեան մասնակից ըլլայ , բարեկամու-
թեան երջանկու թիւնը տանջանքի կը փոխուի :

Բարեկամութեան վրայ մարդոց սովորա-
կան կարծիքը , խիստ շատ անգամ կամ կարի
բարձր է , և կամ յոյժ տկար , ոմանք կը կար-
ծեն թէ՛ բարեկամութիւնը ոչ անօտր ոչ ալ
դժուարին բան մըն է , ուրիշները բարեկա-
մութիւնը կը նկատեն իբր աստուածու թիւն
մը՝ որ երկրի վրայ չ'կրնար բնակել :

Եթէ առջինները բարեկամութեան ար-
տաքին երեւոյթներուն վրայ կը խօսին , այն-
պէս ըսելու իրաւունք ունին . քանզի մար-
դիկ բարեկամութեան ստուերագիծը կամ
պատկերը մինակ ունին , բարեկամութեան
առ աչօք տեսիլն է որ ամեն տեղ կը պատի :

Իսկ երկրորդ կարծիքն ունեցողները , բա-
րեկամութիւնը նկարելու համար բաւական
ազդու գոյներ չ'գտնալով , իրենց երեւակա-
յութեանն անձնատուր կ'ըլլան , և կը խաբ-
ուին . քանզի անոնց նկարածն առ աչօք տե-
սիլ մը , ցնորք մըն է մանաւանդ քան թէ
բարեկամութիւն :

Եւ յայտն մարդիկ բարեկամութիւնը իւ-
րաքանչիւր ըստ իւրում զգացման , մտածե-
լով , կը կարծեն թէ անօտր ճշմարիտ էութիւ-
նը ճանչնալու լաւագոյն միջոցը դատած են .

բայց ես ոչ մէկ մասին ստորժանացը , ոչ ալ
միւս մասին քիչ զբայուն սրտին կը վստահիմ :

Դատ անդամ լսած եմ որ մարդիկ այն-
պիսի կերպով բարեկամութեան նկարագիրը
կ'ընեն , որ կը վախնամ թէ սա աղնիւ առա-
քինու թիւնը մեր մէջը իջնելու խորշի և դար-
չի : Ար սահանջուի որ բարեկամ մը , միայն
և լսկ , մէկու մը յարի , իր յօժարու թեան
յը և ակտորժանացը իսպառ անհագ քլայ իրմէ ,
իր շահերէն , իր կամքէն բացէ 'ի բաց մեր-
կանայ , միով բանիւ . իր բարեկամին համար
ամենայն ինչ զոհէ :

Այսպիսի պատկեր մը հանելէ ետքը , ինչ
երանդով կրնան պաճու ճել , եթէ ճիշդ կեր-
պարանքը տալ կը կամին , աստուածեղէն
բարեկամութեան՝ որով երկինք անդամ կը
տոչորին :

Այ , բարեկամութեան պատկերն ան չէ :

Այթ մարդ առաքինու թիւններ ունի՝
տկարու թիւններ ալ ունի . բարեկամութեան
պարտք է որ բարեկամին տկարութեանցը
ժուժկալէ . իսկ անոր առաքինութեամբքը
վայելել՝ անոր հեշտու թիւն է :

Բարեկամութիւնը սրտի ուղղու թիւն մի-
այն կը սահանջէ , ինք հեղ , մարդասէր , զգա-
յուն ըլլալով՝ կարի խիստ առաքինութիւն
ներէ , ինչպէս նաև կարի բարբոքեալ կիրքե-
լի կը խորշի :

Ըրդարե բարեկամութեան ասելի հա-
ասարակաց բան չկայ :

Իսկա՛ն ճշմարտութիւն մըն է որ ասպա-
կանեալ մարդոց մէջ չի կրնար տեսել մնալ ,
ուստի ասպինի մարդոց քակը փնտռել պէտք
է , և եթէ իմաստուն մարդ մը գտնել հա-
զիւ թէ հնար է , որչափ ևս ասաւել երկու
բարեկամ գտնել դժուարին է : Ի՛սցյ վեր-
ջապէս երկու իմաստուն կրնաս գտնել , բայց
աս բաւական չէ :

Երկու իմաստուն թերեւս իրար կը յար-
գեն , իրար սիրով կը տեսնեն . բայց , իրա-
րու կարեկից ըլլալ , իրարմէ ակարժիլ ալ
պէտք է . պէտք է որ ուժգին ձգմամբ իրար
յանկուցանեն . բարեկամութեան հանդոցը
կամ կասն աս է :

Բարեկամութեան ըրածը , մեծարանքը
չի կրնար բնաւ ընել :

Բարեկամութիւնն աղնուական և վսեմ
է . հաւասարութիւն կ'ուզէ . ստոր համար
երեւելի բանաստեղծ մը Կողղիոյ թագա-
ւորներէն մէկուն փրայ խօսելով կ'ըսէ .

« Հենրիկոս զբարեկամութեան աս զփորձ
զաղնիւն բոցոյ .

« Բարեկամութեան՝ որ ձիրն է երկնից
և հեշտանք ոգւոց մեծամեծաց .

« Բարեկամութեան՝ զոր թագաւորք , ա-
պաշնորհքն անուանիր ,

« Թշուառք են և հեգք զի գիտեն ոչ
 զբարեկամութեան յարգանս :

Մարդ իրեն բարեկամ մը շինել վայրասպար
 կը ջանայ . բարեկամութիւնը մեր ցանկութեանցն առարկան ըլլալու է . բայց դուն ուրեք մեր փնտռելով կրնանք գտնել . բարեկամութիւնը գանձ մըն է , զոր շատ անգամ գիտուածը մեզի գտնել կուտայ . երջանիկ վայրկեան մըն է , անմահ գէպք մը . մերթազնուական գործով մը կը յայտնուի , մերթ լոկ խօսքով մը որ զմեզ կը գրաւէ , և խօսողին հոգւոյն մեծութիւնը մեզի կը բանայ : Իսկոյն հետամուտ կ'ըլլանք , մտադիր կ'ըլլանք , մեզի նմանութիւն մը կը գտնենք . անոր բնութիւնն ու բնաւորութիւնը կ'ըմբռնենք . վերջապէս իրար կը ճանչնանք , և այսպէս բարեկամ մը գտած կ'ըլլանք :

Արբեմն իրարու համար ծնած երկու մարդիկ , իրարու կը հանդիպին : Հեշտ յօժարութեամբ մը իրար յանկուցանելով , իրարու անձնատուր կ'ըլլան . իրարմով կը խանդաղատին , և իրարու վրայ այնպիսի նրմանութիւն մը կը գտնեն որ իրենց զարմանալի կը թուի . իւրաքանչիւր իր անձը իր բարեկամին մէջ իբրև ջինջ և վճիտ հայելուոյ մէջ , կը տեսնէ . վայր մը իրար կը կորսնցնեն , և իսկոյն նորէն իրար կը գտնեն . մէկտեղ ըլլալով միշտ երջանիկ են , ուստի

և իրարու հարկաւոր : Այս միտ թիւնը սա-
 վորու թեամբ նուիրական կ'ըլլայ , և երջան-
 կու թիւնը՝ զոր ամեն վայրկեան նորէն նորէն
 կը դգան , ան միտ թեան տեղողու թիւնը կը
 մշտնջենաւորէ : Անոնց ճաշակները , յօժա-
 րու թիւնները , առաքինու թիւնները , կեր-
 քերը կը սքողին , իրենց խորհուրդներն ի-
 րենց համար անարդար են . մէկուն միամտ-
 քը միւսին կամքն է , բայց ասով և ոչ մէ-
 կուն ազատու թիւն կը բռնաբարուի :

Վիտեն թէ մարդիկ են , ուստի իւրա-
 քանչիւր իր տկարութենէն առանց ամչնա-
 լու , ամեն մէկուն մեծանձն ոգին բաց և
 յայտնի կ'երևայ : Աւրաքանչիւր կը ցուցնէ
 ընկերին իր հոգւոյն զսպանակները որովք
 հոգին կը շարժի . դիտեն թէ կան այնպիսի
 վայրկեաններ ուր իրենց միտքը պիտի նսե-
 մանայ , և իրենց իմաստութեան դադաթն
 է իրար իրարու իմաստութեան մասնակից
 ընել :

Բարեկամութեան վրայ իմ կարծիքս աս
 է : Այլ թէ կը սխալիմ , սիրելի առաքինու թիւն
 առը ինձի բարեկամ մը՝ որ դքեղ ինձ ա-
 լելի աղէկ ճանչցունէ :

Այլ թէ այս կեանց մէջ քաղցրու թիւններ
 կան , բարեկամութիւնն է որ դանտիք մեզի
 կուտայ : Աւրաստութիւններ չեն նու աղիւր ,
 եթէ ուրիշ մը անոնց մասնակից ըլենք ,

իսկ վիշտելոր թեթևագոյն կ'ըլլան , եթէ
ուրիշ մը մեզի վշտակից գտնենք :

Գաղղիոյ կրօնական պատերազմներուն ա-
տեն , ազնուական Գաղղիացի երիտասարդ
մը՝ Կալվինական դօրաց խմբի մը հրամանա-
տար էր . հակառակ կուսակցութեան դօրա-
ցը վրայ կը քալէ : Արիւնահեղ կռուէ մը
ետքը՝ Կալվինականք կը յաղթուին : Արիտա-
սարդը կարեւոր խոցուելով՝ մեռածներուն
մէջ կը գտնուի :

Հռոմէական կղերէն մէկը՝ որ կռիւ ե-
ղած տեղւոյն մօտ կը բնակէր , վիրաւորն ու-
րիշ երեք վիրաւորեալ պաշտօնակալաց հետ
իր սուներ կը ստանի . քահանային ինամքովը
վիրաւորեալները կը բժշկուին : Ակեղեցա-
կանին հեղութիւնն ու առաքինութիւնն
այնպէս ազդու եղան , որ չորս Կալվինակա-
նաց սիրտը տարակոյս ինկաւ :

Ազնուական երիտասարդը հաղիւ թէ ա-
ռողջացած էր , քահանային ըսաւ . դուն ալ
ան մարդոց պէս կը խորհիս որոց դէմ կըռ-
ուեցանք : Այո՛ , ըսաւ առաքինի եկեղեցա-
կանը . անոնք կըսեն թէ ճշմարիտ քրիստոն-
եաց են , ինչպէս որ ես ալ եմ : Անք ալ բը-
րիստոնեաց ենք , ըսաւ Կալվինականը . բայց
ձերիններն անգութ են : Դուն մեր երջան-
կութիւնը կուզեմ , ուրեմն մեզի պէս կը
խորհիս : Այ , ըսաւ , դուք մոլորութեան

մէջ էք, իսկ անոնք մեղքի մէջ են. դուք Աւետարանին հողին աղէկ չէք հասկնար, անոնք անոր պատուէրները չեն կատարեր :

Այնպէս յայտարարեմք յայս խօսքերն այնպիսի քաղցրութեամբ և ծանրութեամբ կ'ըսէր, որ երիտասարդը զարմացաւ, և հիացմամբ գոչեց. ես քու վարդապետութիւնդ չեմ գիտեր, ես իմինիս մէջ ճնած եմ : Քայց այնչափ իմաստութեան հետ՝ ի՞նչպէս կարելի է որ ձեր կողմը մտորութիւն ըլլայ : Աս ճշմարտութիւն կը փնտռեմ, առաքինութիւնը միշտ սիրած եմ, բայց դուն ինձի առաքինութիւնը պաշտելի ըրիր : Քահանայէն ինդրեց որ վարդապետութիւն մը ընէ, և պարզ ու հըռ սիրաւ հաւատաց առջև բացուեցաւ :

Արեք պաշտօնակալները չի համոզուեցան բայց տարակուսի մէջ լցնալով, և զարմանօք իրենց տեղը գացին :

Ազնուական երիտասարդն աս նոր առաքելոյն հետ այնպիսի սերտ մտերմութեամբ կապուեցաւ, որ իր օրերն անոր հետ անցընել որոչեց : Անոր դարձին և խանդաղատական բարեկամութեանը լուրը շուտով տարածուեցաւ : Ապրիլինականք՝ որոնց հզօր ապաւենն էր, սաստիկ ցաւ զգացին :

Անոնց մէջէն կատաղիները գտան իրէ ժամ՝ առնել խորհելով, սրտեցին որ երկժամ և

անոր աչքին առջևն անոր մեծարոյ բարե-
կամն սպաննեն :

Արեք պաշտօնակալներէն մէկը՝ որ վեր-
քերէն բժշկուած էր, դաւաճանութիւնն
խմանալով՝ կը սարսափի, և պատգամաւորի
ձեռամբ դաւաճանութիւնն ու ժամադրու-
թեան օրը իր հին հրամանատարին կ'իմացնէ :

Արիտասարդն առ լուրն առնելով կը լռէ .
իր բարեկամին տունը կերթայ, անոր եր-
կայն պարեգօտը կը հագնի, շարժու մներն
անոր շարժմանցը, ձայնն ալ անոր ձայնին
նմանցնելով դաւաճաններուն դիմացը կ'ել-
լէ, անոնց մէջ կը մանէ, ինք զինք անոնց կը
յայտնէ . ամէնը կը սոսկան ու կ'այլայլին :

« Օարկէք, ըսաւ անոնց, սպաննեցէք
« զիս, բայց խնայեցէք անոր կենացը որ իմ
« կեանքս ազատեց : »

Այս աստիճան հասնող առաքինութիւ-
նը՝ ոճիր մը անհետ ընելու կարող է :

Դաւաճանները, ասչու թեամբ բռնուե-
լով, իրենց մեծին ոտքը կ'իյնան : Անոր մեծ
հոգին զանոնք վատթարութենէն կը կանգ-
նէ, կը փափաքին տեսնել այն մարդը՝ որ ազ-
նուական երիտասարդն այն աստիճան մե-
ծութեան հասուցած էր : Արիտասարդը զա-
նոնք իր բարեկամին կը տանի, և անոնք որ
դաւաճան էին, իրենց դարձովը եկեղեցա-
կանին առաքինութիւնը մեծարեցին :

Խոհեմութեան վրայ :

Խոհեմութիւնն իր լոյսը ճշմարտութեանն միայն կը սպասէ : Միպուածներն ու դարերն իրարու կը կապէ . անցեալն ու ներկայն զմարդիկ , անոնց բնութիւնն ու բարքը անոր կը ճանչցնեն . և մարդկային սրտին միակերպ և հաստատուն ընթացքովը իր տեղեկութիւններն ու դատողութիւնները մինչև ապագան կը տանի :

Խոհեմութիւնը ամէն իմաստուն դործոց հոգին , և ամէն առաքինութեան խորատուն է : Յամբ կը վիճի , հանդարտութեամբ կը դատէ , բայց ջերմ եռանդով կը գործէ :

Մուն ուրեք անձնատուր կ'ըլլայ դիպուածին՝ որ երբեմն խոհեմութեան խորհուրդները կը շփոթէ : Մայց թէպէտ անակրնկալ պատահարներ՝ ան յառաջադրութիւններն ընդունայն կ'ընեն , այլ երբէք անոր հնարքները չեն կրնար սպառել : Խոհեմութիւնն անցողդոդ և քաջ , իր ձախողութեանցը մէջ մեղի կ'ընծայեցնէ մեծ դորասպետի մը պատկերը որ զօրքը վտանգաւոր ճակատէ մը ետ կը բաշէ :

Մարդիկ իրենց ծնած աստեղ աստի-
նաթեանց և մարտեանց սերմեր կ'առ-
նեն. թէ աստիստեղիւնք և թէ մարտե-
թիւնք իրենց յառաջացման ասջին սահման
մը կը տեսնեն. բայց խոհեմու թիւնը պարա-
բեր որթոյ նման իր ոստերը կը տարածէ. ա-
մեն հասակի մէջ կ'աճի ու կը մեծնայ :

Ինչպէս շնորհքն ու գեղեցկու թիւնը ե-
րիտասարդու թեան սեփհականու թիւններն
են, այնպէս ալ խոհեմու թիւնը պատկառե-
լի ծերու թեան մը զարդն ու ձիրքն է :

Կերևի թէ բնու թիւնն՝ աս աստիստե-
թիւնը հարց կը շնորհէ, որպէս զի անով ի-
րենց զաւկներուն աւելի հարկաւոր և ա-
ւելի սիրելի ըլլան :


Խոհեմու թիւնը՝ ծերունին իր Հայրեն-
եացն օգտակար կ'ընէ, և անոր օրերն անոր
համար կը պաշտպանէ, որպէս զի անոր աշ-
խատու թիւնները պսակէ :

Արանի ժողովրդոց, սրոնց իշխանը իմաս-
տուն ծերունի մըն է. ծերունի մը՝ որուն
հանձարը դեռ կորովի է : Այնպիսին իր մէկ
հանդարտ նայուածքովն առոյգ երիտասարդ-
ներ հայրենեաց պաշտպանու թեան համար
կը վառէ, զանոնք կը մեղմացնէ և ուզած
աստեղը ղէնընկէց կ'ընէ :

Այնպիսի ծերունուց մը իմաստու թիւնը
ժողովրդոց երջանկու թեանը համար օրէնք

ներ կուտայ, և անոր անաչառ Արդարութիւնը օրէնքը մեծարելի կ'ընէ :

Խաճեմուծիւնն անոր ճակտին վրայ հովանի է, և անոր երախտիքներն շատ անգամ յաղթութենէ մ'ալ աւելի են :



Գ Լ Ո Խ Խ

Արդարութեան վրայ :

Արդարութիւնը բոլոր առաքինու թեանց բովանդակութիւնն է, և մարդուն՝ գէպ իր անձը և իր նմաններն ունեցած պարտքերը կատարելու վրայ կը կայանայ :

Սեր խօսքը կատարեալ Արդարութեան վրայ չէ : Քանզի երկրի վրայ կատարեալ արդարութիւն չկայ, բայց ան որ իր անձին հրամայել և կիրքերը նուաճել գիտէ, մեր փնտռած արդարն է, կամ մանաւանդ ճշմարտապէս մարդոց թագաւորն է, գէթ նոյնպիսի ըլլալու մինակ արժանի :

Եթէ աշխարհիս պետութիւնը ճշմարիտ արդար մարդոց բաժնել հնար ըլլար, կարծեմ մարդկութեան վրայ բաւական բարձր համարում մը ունեցած կ'ըլլանք, եթէ դրնելու ըլլանք թէ տիեզերաց չորս կողմերուն նայելով չորս պետութիւն պիտի ըլլար :

Աւր է այն արդար մարդը: Աշխարհ զնա տեսած ատեն ուրախութենէն պիտի ցընծար. ան մարդն սպարէն, կամայ ակամայ, իր ժողովրդոցը տիրապետ պիտի ըլլար, և անոր տիրապետութիւնը որ մարդոց աղաւտութեանն այնպէս հակառակ է, կառավարութեան աս տեսակը՝ որոյ անունն անդամ մարդիկ կը դողացնէ. մարդիկ երջանիկ ընող մի միայն կառավարութիւնը պիտի ըլլար:

Արդար մարդու մը գիտութիւնն է ճանաչել, թէ մինչև ինչ աստիճան իր անձը պարտի սիրել: Անձին սիրոյ սահման մը դնելն՝ արդարութեան յաղթանակն է. այլոց դէմ ունեցած պարտաւորութիւնը արդարին սրբտին նուիրական օրէնքն է: Արդարը գիտէ թէ իրեն նմաններուն համար եղած ըլլալով, զանոնք ալ կը պարտաւորի մասնակից ընել իր անձին սիրոյն՝ որ իրեն բնութենէն տրուած է. ուրիշները ամոլիւ չու համար իր բարեբարութիւնը, պաշտպանելու համար իր քաջութիւնը, երջանիկ ընելու համար բարի օրինակներ և առաքինութիւններ աւոնց պարտական է:

Ամէն մարդ իրեն թագաւորն է. եթէ Արդարութիւնը իրեն հետ կը թագաւորէ, բոլոր թագաւորներէն մեծ է. մարդութիւններ ունի որոնք պարտի զսպել: Այլ թէ կիրքերը ըմբոստանան և ընդվզին, ապստամբ և

խառնակայց Տպատակներ են, որոնց պարտի վերստին չափ և տանձ դնել:

Արդարին բարձր խմաստութիւնը՝ անոր մեծամեծ ճշմարտութեանց լուսոյն մէջ քալել կուտայ: Դամանակը՝ որ թեթև հոգիներու համար երկար և տաղակալի է, արդար մարդուն համար օդին մէջ սլացող նետէ արագ է. և որովհետև ժամանակը կեցրնել անհնար է, իր կեանքին ժամերը մեն մի առաքինութեան գործով նշանաւ որ կ'ընէ: Աողբայ այն անխմաստ մարդոց վրայ, որ անդարար ծխոյ մրրիկներէ կը յափշտակուին: Մարդուն վրայ ուրիշ բան չի տեսներ, բայց եթէ անոր մահն ու անմահութիւնը. գիտէ թէ ամէն բան չինկած՝ մենք պիտի լինանք. և թէ աշխարհիս մէջէն կ'անցնինք այնպէս՝ ինչպէս որ ամալ մը երկնից վրայէն:

Իր օրերը դիպուածոյ և ունայնութեան մատնելը՝ իր անձին յետին ծայր անիրաւութիւն ընել է:

Ինչ որ զգայութիւնները մեղի կը մատուցանեն, ցնորք են որ անհետ կ'ըլլան. ժամանակն ու առաքինութիւնն միայն այն պիտի ստացուած են, որ մեզ կը սխառչաճին. ապա մեր ժամերուն յարգը գիտնանք. ժամերը, թեպէտ անցաւ որ են, բայց մեր գործքերուն ականատես ըլլալով կ'անցնին, և մեր գործքերուն աւանդապահներն են.

մենե առաջ երթալով՝ զանոնք վերին Ար-
դարութեան կշռոյն մէջ կը դնեն :

Արդար ըլլալը՝ մարդկային խնայող
թեան ամենէն գիւցադնական սկզբունքները
գործադրել է . ամենէն խռովալից կենաց
մէջ իրեն համար խաղաղ նաւահանգիստ
պատրաստել է :

Արդար մարդն ինք իրեն բաւական է .
բարեկամներ և խնայողներ իր մէջը կը
գտնայ . այնպիսոյն համար միայնութիւնը
բիւրապատիկ հեշտականութիւններ ունի .
անոր աշխատութիւնը դուարձութեամբ վի-
է . և հոգին հեշտական մտածութեանց մէջ
ընկղմելով՝ իր խորհուրդներովը կը սնանի :

Նոյնութիւնը հասարակ մարդու մը հա-
մար քող մըն է , որ անոր տկար աչուրներէն
կը ծածկէ Աստուծոյն մեծասքանչ մտաւո-
րութիւնը որ բնութեան նեցուկն է :
Արդարը զԱստուած ամէն տեղ կը տես-
նէ . արդարոյն այնպէս կը թուի թէ Աս-
տուծոյ անմահ աջը բոլոր աշխարհիս շրջա-
նակին մէջ կը պտտի . մարդոց երջանկու-
թեանը համար երկինք և երկիր իրարու կը
շիւ կը պահէ : Նոյնութիւնը արդար մար-
դուն համար գիրք մըն է , որ այլևայլ նկար-
գրովք մարդուս պարտքերն անոր կ'իմացնէ :

Նոյնութեան գործողութիւններն յամբ ,
բայց անտերիսը են . և բնութեան ար-

գիւնքները շուտով հասուն կ'ընեն : Արդա-
րը կրտէ . խոհեմութեան կանոնաւոր շար-
ժումն սցապէս են . ապա մարդկային մտաց
յառաջագիմութիւնն ալ սցապէս պարտի ըլ-
լալ :

Արեգակը բոլոր տիեզերաց համար կը
ծագէ . իր ճառագայթները կ'արձըկէ , մի-
անգամայն կը մեղմացնէ . Արդարութեան
պատկերն է :

Տիւր բնութեան հողի կուտայ . բոլոր
արարածները շարժման մէջ են . զովացեալ
երկիրը իր անուշահոտութիւնները կը բու-
րէ , երփն երփն ծաղիկներով կը ներկուի ,
օրը մարդիկ աշխատութեան կը կոչէ , և գի-
շերուան ընդթիւնը զանոնք 'ի քուն կը հը-
րաւիրէ :

Արդարն այս փառաւոր տեսարանին մէջ
կը տեսնէ որ մարդս տառապանաց համար
ճնած է , և հանգիստն ու զուարճութիւնը
անոր աշխատանացը ստուգն են : Օ՞րիս իր
ալէկոծութիւններովը՝ հոգւոյն և հոգւոյ կիր-
քերուն օրինակը կ'ընծայեցնէ : Օպրագին
Ովկիանոսը որ երկիրը կլանել կը սպառնայ ,
Յաւիտենականին զետեղած աւազի քով կը
կենայ և կը խորտակի : Այն գաղտնի զօրու-
թիւնը , որ ալիքները կ'ընկրկէ , մարդկային
բանին մէկ նմանութիւնն է . բանին , կ'ը-
սեմ , այն անմահ զօրութեան՝ որ մեր կեն-

դանու թիւնը և հագին է, և որով մենք
մեր զգայու թեանցը շատի գնելու կարող ենք:

Վայրենի տեղեր, ձեր միացնու թեանը
մէջ ի՛նչ գաղտնիքներ կան: Կարծես թէ
բնու թիւնը կամեցաւ ձեզ աշխարհիս ու-
րիչ մասերէն աւելի սիրալի գուներով նը-
կարել: Դուք արդարին նուիրական երկիւղ
մը կ'ազդէք, դուք ձեր սոսկալի գեղեցիու-
թիւններով զոր ձեր մէջ սենիք, անոր կ'ի-
մացնէք թէ իմաստունը պարտի երբեմն
զինք ամիտփել, ինք իրեն գալ, և թէ ով
որ երբէք ձեր մթին առանձնու թեանը մէջ
քալած չէ, բնու թեան տեղեակ չէ:

Ձեր լու թեանը մէջ է որ մարդ իր Ա-
րարչին հետ խօսելու կը համարձակի: Այն
խաղաղ վայրկեաններուն մէջ Տէրն իր արա-
բածին սիրտը կ'իջնէ, հոն լոյս կը բերէ, և
այս երջանիկ խաղաղութիւնն է որ Արդա-
րութեան թագաւորել կուտայ:

Վարդուս ամենէն աղնիւ ուսումը՝ ան-
տարակոյս իր անձին ծանօթ ըլլալն է. քան-
զի աս ծանօթութիւնն է որ զմարդ կը մեր-
ձեցնէ Աստուծոյ որ զնա իր պատկերին նը-
ման ըրաւ:

Այս խորին ուսման մէջ է որ մարդ իր ու-
շնչութիւնը կը տեսնէ: Իսկ և իսկ աս ան-
մահ զօրութիւնը որ զմարդ շնչաւորող զօ-
րութիւնն է, անոր իր գոյութիւնը զգալ կու-

տայ : Աստուծոյն քայքայիս զնա զէպի երկնիս
 կիսիս կը տանի , ուր անոր զեղբունն է : Արդարն ,
 իր էութեանը վրայ պարծեալով , ազատ
 եւ անձնիշխան , իրմէ վեր ուրիշ բան չ'տես-
 ներ , բայց միայն զ'ստուծ :

Այլոր աշխարհակալաց վառ ստիբու թիւնը
 մէկտեղ գայ , այնչափ լայնատարած չէ որչափ
 արդարայն որանն աղեխ իղձերը : Ինչպէս որ
 ինք իր էութեանքը մարդկային բնու թեանը
 մէկ մասն է , այնպէս կը հաւատայ թէ բոլոր
 մարդիկ ալ իր էութեանը մէկ մասն են . կը
 փափաքի որ իր նմաններն երջանիկ ընէ , որ-
 պէս զի անով իր երջանկու թիւնն ալ կատա-
 րեալ ընէ : Այս աղնուական զգացումը ար-
 դարին հոգւոյն կարօտու թիւն մըն է , զոր
 անդադար հաճեցնել կ'ուզէ :

Արդարը չարախօսու թիւնը իրմէ հեռու
 կը տանի , զրաբարտու թիւնը իբրև զօձ կը
 ջախջախէ : Անոր հոգին սուրբ աղբիւր է ,
 որուն յատակու թիւնը ոչ կը պղտորի , ոչ ալ
 երբէք կը ցամքի : Անոր խոհեմու թիւնը զնա
 նենգաւոր մարդոց դարաններէն կը պահե-
 եւ սրտին քաջու թիւնը չարերուն յարձակու-
 մը կը վանէ :

Անոր բոլոր բարկու թիւնն ուրիշ բան չէ ,
 եթէ ոչ աղնուական ցառում մը , հարստա-
 հարեւոյն աղաղակէն կը բորբոքի , զնա պաշտ-
 պանելու կը վազէ , զնա տեսնելուն պէս

կեղծաւորին դիմակը կիյնայ, և ճշմարտութիւնը զանմեղն անոր կը ցուցնէ. Արդարը զանմեղն օրէնքով կը ծածկէ, և անոր բուրրութիւնը սուր կը շողացնէ:

Անաչառ դատաւորներ որ մարդոց Արդարութի կ'ընէք, դուք մեր աչաց առջև արդոյ էք: Դուք մենէ պատիւ ընդունելու արժանի էք: Հայրենեաց համար պատերազմողն իր փառքը շատ անգամ դիպուածին պարտական է. բայց ձեզի փառք չնորհողն առաքինութիւն է. դափնին պատերազմողին համար է, ձեզի համար մեր սրտերն են:

Յաւիտենական արդարութիւն, որ մեր դատաւորներուն վրայ կը հսկես, զանոնք քու աստուածային լուսովդ լուսաւոր է: Մարդիկ են և մարդիկ յաճախ մարդուս համար է: Բայց եթէ անոնց մէջ կայ անաստիճան չարագործ մը՝ որ կաշառով արդարութիւնը կը ծախէ, անոր անունը երկրիս վրայէն ջնջէ. Թող իր մտացը խղճէն պատուաւի. Թող որքին աղիողորմ ձայնն անոր հանգիստը խռովէ. Թող ան թշուառին ստուերը, սրուն անմեղ արիւնը թափել տուաւ, մինչև գերեզման անոր ետևէն երթայ, Արդարութեան օրը զնա զարթուցանէ:

Մ. րո-նեան վրայ :

Մ. րու թիւնը կամ Քաջասրտու թիւնը բո-
լոր առաքինու թեանց միացեալ զօրու թիւնն
է : Մարդ առաքինու թեան վրայ գաղափար
մը ունենալու համար , անոր այլ և այլ սեպ-
հականու թիւններ աուաւ , և եթէ այսպէս
ըսել արժան է , անիկայ մասնաւոր առաքի-
նու թիւններու բաժնեց , և մէկուն ըսու
Մ. րդարու թիւն , միւսին Համեստու թիւն ,
ուրիշ մէկուն Մ. րու թիւն , այլոյն հանդերձ :

Քայց առանց բոլոր առաքինու թիւնները
մասամբ իւրիք ունենալու , անոնց մէկը միայն
ունենալ այնպէս դժուարին է , ինչպէս բուն
առաքինու թեանէն մոլու թիւն մը շինելը դժ-
ուարին է : Մ. րաքինու թիւնը բաժնելը՝ զնա
եղծանել է : Մ. րաքինու թիւնը իր սկզբանը
նայելով մի , անբաժին , և նոյն իսկ իր սկզբ-
բանը պէս յաւիտենական է : Մ. րաքինու
թեան գործերն արդարեւ այլ և այլ նշաննե-
րով կ'երևան :

Մ. րաքինու թեան կատարելու թիւնը նոյն
ինքն Մ. րատուած է . և սրովհետեւ մենք անոր
մէկ տկար պատկերն ենք , ուստի փոքր 'ի շա-
տէ առաքինի մարդ մը կրնանք ըմբռնել .
բայց չենք կրնար ըմբռնել մարդ մը որ մի

միայն առաքինութիւն ունի, ան ալ անար
մուտ թեանցը հետ շփոթած է :

Մենք հոս Արիութեան վրայ կը գրենք .
Արիութիւնն արդարեւ առաքինութիւն է ,
բայց առաքինութեան էութիւնն աղէկ չը-
ճանչնալ է , կարծել թէ առաքինութիւնն
ակդբունք է այնպիսի երևելի գործոց , որոնք
ամենէն անկարգ կիրքերէ յառաջ կուգան :

Արութիւն և Քաջութիւն անունները
մեր մարին մէջ գիւրաւ կը շփոթին , բայց
եթէ կ'ընդունինք որ բանը գաղափարաց ան-
ճիշդութիւնը կը մերժէ , չենք կրնար չըն-
դունիլ ևս թէ բառերը մարդոց մէջ ըստ
հաճայից դրուած են : Ինձի կ'երևի թէ ազ-
գերուն նախապաշարմանը նայելով , մարթ էր
գործածել քաջութիւն բառն այնպիսի գործ-
քերու համար որոնք սաստիկ և յանդուգն
են և Հայրենեաց օգտակար :

Իսկ Արութիւն բառով կ'ուզենք նշանա-
կել հոգւոյն այն զօրութիւնը որ մեծամեծ
մարդիկ կը կազմէ :

Եթէ յանդուգն գործքեր Տէրութեան
կամ Ազգի մը փառք են , ինչո՞ւ ուրեմն զա-
նոնք մտութեան կնքովը նուիրական ընենք :
Առաքինութիւնը մինակ ժողովուրդ մը չի
պաշտպանել . առաքինութիւնը ժողովրդոց
հրամայելու և նորօք յաղթելու համար է .
և եթէ հայրենիքն ուրիշ պաշտպան չունե-

նար, բայց ան սակաւաթիւ մարդիկը որոնք
ճշմարտապէս արի են, մենք վաղ շղթանե-
լու մէջ կ'ըլլայինք :

Ես բնաւ չեմ ուզեր Քաջութեան ան-
ուամբը ղեղձանիլ, և այնպէս մթադնել ան
ճշմարիտ պատկերը զոր ճշմարիտ Արու-
նք մեզի կ'ընծայէ, քանզի Քաջութիւն բառն
անասնոց վայրենի գործքերը նշանակելու հա-
մար պիտի գործածեմ :

Եթէ այս բացատրութիւնները քանի մը
խիստ ընթերցողներ կը վերաւորեն, թող
գիտնան որ, նոյն ինքն Ասկրատ երբ Ասիեւստ
ներուն դէմ կը կռուէր, բառերն անոնց
ընտրութեանը կը թողուր : Ես մեծ մարդը
բաւական կը համարէր որ անոնք իրաց ճիշ-
մարտութիւնը խառնակելու և գաղափարնե-
ները շիտթելու համար բառեր չ'գործածեն :

Մարդոց գործքերը ողջմտութեամբ դա-
տելու համար, պէտք է զանոնք նկատել ան
սքանձառներուն համեմատ՝ որոնք այն գոր-
ծերը յառաջ կը բերեն, և ան սաւրկանե-
լուն համեմատ՝ որոնք ան գործքերը կը զա-
տեն կամ կ'որոշեն :

Մահուանէ չ'վախնալ, անոր հաստատու-
թեամբ տանել, արհամարհել իսկ զնա, և
հաւաստի Քաջութեան ամենէն փառաւոր
պատկերը, բայց շատ անգամ ալ Քաջութիւն
ըստածը կայր յաւաստութեան մը կամ ա-

մեն արդեւք վանող անասնձ կրից արդիւնքն է :

Իսկ ճշմարիտ Արուժիւնն այնպիսի առաքինութիւնն է , որ միայն գովելի և օգտակար արդիւնք առաջ կը բերէ , միայն արդար և իմաստուն միջոցներով կը գործէ : Քաջութեան գործ մը որ աս սկիզբէն չբըղխիր , առաքինութիւն ըլլալէն կը դադրի : Անդամին յականէ պղտորած ըլլալով , Արուժիւնն չկրնար կոչուիլ . անանկ գործի մը մէջ իմաստունն ուրիշ բան չտեսներ , եթէ ոչ Արուժեան առ աչօք տեսիլը :

Ես այնպէս կը կարծեմ որ Քաջութիւնը մասնաւոր նշան կամ նկարագիր մը ունենալու է , կամ մանաւանդ թէ մէկ մարդէ միւս մարդ որոշ հանգամանք մը . հանգամանք մը՝ որ մեղի և բոլոր անասնոց հասարակ է . քանզի անոնց ալ մէկ մասը քաջ է , մէկ ուրիշ մասը վատասիրտ :

Քաջ անասնոց բնական ազդումն անոնց իրենց անագորոյն ախորժակը յադեցնելու կը ծառայէ :

Վարդուն բանը , այն է միտքը , զնա բարւոյն կը տանի . կիրքերն ու մոլութիւնները դէպ 'ի չարը կը խոտորեցնեն : Ինութիւնը , այսպէս ըսենք , աներկիւղ մարդուն սրտին մէջ առիւծուն ան մասը դրած է որ աս դառնանն ուրիշներէն կը զատէ : Վարծես թէ ասանկ մարդու մը քաջութիւնը անոր արեւտը մէջ է :

Ասիկայ ոչ առաքինութիւն է ոչ մուշ-
թիւն . բնութեան մէկ պարզեւն է , և ա-
ւելի միջոց մըն է որ մարդուն իր առաքի-
նութիւնները փայլեցնել կուտայ , կամ կիր-
քերն աւելի զարհուրելի կ'ընէ :

Անոր երկջոտութիւնը հոգւոյ ախտ մը չէ ,
այլ արեան յատուկ մէկ ջերմութեանը
պակասութիւնն է , և կամ այնպիսի մարմ-
նոյ կազմութեան մը՝ որ մարդուն կամքէն
կախում չ'ունի :

Մարդ մը կրնայ առաւել հանձարի տէր
ըլլալ , միանգամայն վատասիրտ , չափաւոր
մտքի տէր և գրեթէ ապուշ մէկը կրնայ յե-
տին ծայր քաջ ըլլալ :

Այս յատկութիւնը շատ անգամ անխո-
հեմութեան , փառասիրութեան և հպարտու-
թեան հետ միացած կրնայ ըլլալ :

Մինչև հիմա ըսուածներով մարդուն բը-
նական և ֆիզիքական Քաջութիւնը նկարա-
գրեցինք : Հիմա ջանանք ճշմարիտ Արու-
թեան նկարագիրը ճանչնալ , այսինքն՝ Վարո-
յական առաքինութիւնը , որ զօրութիւն կը
կոչուի :

Արութեան սքանչելի պատկերը կրնանք
դտած համարել այն կատաղի , այն մուկեզին
զինուորին վրայ , որ արիւն միայն կը շնչէ .
որուն համար պատերազմն ուրիշ բան չէ ,
եթէ ոչ ընկերը կորուսանել և եղծանել :

Անոր քաջութիւնը մտեգնութիւն է և ոչ ուրիշ բան . տենդ մըն է որ հոգին հիւանդ կ'ընէ , ոչ թէ հղօր և առաքինի :

Այս Արուածիւնը ցաւագար և վշտագին մարդու մը վրայ կրնանք գտնել , այնպիսին իր չարեացը ուրիշ վախճան չի տեսներ եթէ ոչ մահը : Անոր տխուր տագնապը օր ըստ օրէ կ'առաւելու . անոր միտքը որ մարելու մօտ է , ուրիշ բան չի ցուցնէր բայց տխուր լոյս մը . և ան լոյսն անոր ուրիշ բանի չի ծառայեր եթէ ոչ գերեզման իջնելու : Ասիկայ վատութիւն է , թէ առաքինութիւն . — Այ՛ , քաջութեան զառանցանքն է :

Էթանոտութեան իմաստունը կենաց բոլոր վիշտերուն հաստատութեամբ կը համբերէ : Երբ իր աղատութիւնը կորսնցնելու մօտ է , չի կրնար հանդուրժել , ինքզինքը կը սպաննէ : Աս առաքինութիւն է թէ մոլութիւն : — Այ՛ , քաջ հոգւոյ մը տկարութիւնն է :

Աւր է ապա Արուածիւնը : Սոկրատ աւնոր պատասխանը կուտայ : Արուածիւնը կ'ըսէ , իմաստնոյն հոգւոյն մէջն է :

Ինչ վսեմութիւն , ինչ լոյս կը յայտնէ , երբ Աթենացւոյ քաջերուն կը խօսի : Կամ ըսցնէ Յունաց ան սուտ փիլիսոփաները՝ որոնք մարդկային գիտութեամբք զեղծանելով , իրենց հայրենակիցներուն միտքն ու բարքը կ'ապահանէին : Առաքինութեանց երևուածին

տակ ուրիշ բան չէին ընծայեցներ եթէ ոչ
 մոլութիւններ, երջանկութեան օրէնք կու-
 տային, բայց իրօք ուրիշ բան չէին թողուր
 բայց յուսահատութեան աղբիւրներ: Անոնց
 համեատութեանն հիմք՝ հպարտութիւնն էր.
 անոնց արդարութիւնը ուրիշ բան չէր եթէ
 ոչ ստութիւն. և այն անմահ մարդը ցրցուց
 թէ անոնց Արութեանը մէջ տկարութեանէ
 և վատութեանէ ուրիշ բան չ'կար: Բայց վախ-
 ճանք Սոկրատայ համար տանջանք էր, իսկ
 տիեզերաց համար մոլորութիւնը:

Աիթէ մենք աւելի լուսաւորեալ ենք այն
 ազգէն:

Սոկրատայ խրատուն անասնք, և ան լայ-
 նախորհուրդ մտքին մտածութիւնը լուսաւոր-
 րենք. Սոկրատայ մտքին, կ'ըսեմ, որ հեթա-
 նոտութեան խաւարին մէջ յաւիտենական
 ճշմարտութիւններ տեսնելու ստեղծուած էր:

Ար կամքը կը յօժարի ան բաներուն մի-
 այն օրոնք իրեն ամենէն աւելի հաճոյ են:

Այլ բարին է որ մեր կամքին ամենէն աւելի
 հաճոյ է, և կամ ան բանը զոր կամքը բարի
 կը կարծէ: Չարին, իբրև չար, երթալ մար-
 դուս բնութեանը հակառակ է, և չ'կայ մարդ
 որ, երբ երկու շարեաց մէջ ընտրութիւնը
 ներու կը ստիպուի, մեծադոյն չարն ընտրէ,
 եթէ փոքրագոյնն ընտրելը իր ձեռքն է: Այլ
 օրովհետև հեշտութիւնը բոլի կը կարծենք

ցաւը՝ չար, մեր երջանկու թիւնը աս երկու-
քին մէջ ճշմարիտ ընտրու թիւն մը ընելէն
կատարմ ունի. քանզի մեր թշուառութիւնը
ուրիշ բանէ յառաջ չի գար, եթէ ոչ սա
ընտրութեան մէջ խաբուելէ: Աւրեմն մեր
թշուառութիւնները ազատութենէ կը ծա-
գին. քանզի ոչ որ թշուառ ըլլալ կ'ուզէ:

Այս անհատական սկզբան համեմատ, Սոկ-
րատ կ'ըսէ թէ Արու թիւնն ուրիշ բան չէ,
եթէ ոչ ճանչնալ թէ որ բաները սոսկալի են, և
որ բաները չեն. ասկէ կը հետեւի թէ, ընդհա-
կառակն, վատութիւնը սոյն այս բաները
չ'զխտնայն է:

Ճշմարիտ իմաստունն անցեալը, ներկան
և ապանին միշտ աչքին առջեւ ունի: Անոր
մի միայն իմաստութիւնը կը կայանայ սա գի-
տութեան մէջ. մեծութիւնն ու ընդարձա-
կութիւնը չափել ան բարեաց և չարեաց՝ ո-
րոցմէ պաշարուած է, և որոնց ակն ունի:
Այս գիտութիւնը անոր արութեանը չափն
է: Աեծամեծ բարեաց հետամուտ է նոյն
ըօրութեամբ որով մեծամեծ չարիքներէ
խոյս տալու կը յորդորուի: Ար անձին, գիտ-
ուածոց և իր կիրքերուն սէր է:

Այս ծանօթութիւնը ինչ աներկիւղ ա-
րութեան պատճառ է: Արդարեւ երկիւղն
ուրիշ բան չէ, եթէ ոչ չարիտի ճշմարտութե-
նը: Աւ ո՞վ է որ վախցած բանին ետեւէն վա-

զել կ'ուզէ, երբ հաստատու թեամբ կրնայ
կանխել երթալ այնպիսի քանի մը առջև որ-
մէ ամենեւին երկիւղ չ'ունի :

Սոկրատայ խորին դիտողութիւններէն կը
հեռուի որ, արին ու վատասիրտը մի և նոյն
սկզբամբ կ'առաջնորդուին, իրարմէ կը տար-
բերին այնու՝ որ արին գիտէ թէ բարիքն ու
չարիքն ինչ են, իսկ վատասիրտը երկուքին
ալ անտեղեակ է :

Մտաբան արին սոսկալի բաներո՝ անձնատուր
չըլար, քանզի չարիք են. հետամուտ է այն-
պիսի քաներու, որոնք թէ մեծամեծ բար-
եաց պատճառ են, և որոնցմէ քիչ վտանգ
կ'երեւի :

Վատասիրտն ալ նոյնպէս կը վարուի. ա-
տոր ալ նպատակը մի և նոյն է. ուստի երկուքն
ալ մի և նոյն սկզբունքն ունին. բայց արին
միշտ գիտութեամբ կը գործէ : Բարիքն ու
չարիքը հաշուելէ և կշռելէ ետքը, չի խաբ-
ուիր, քաջ գիտէ թէ ինչ ընել պէտք է.
քանզի հմուտ է թէ ինչ քան սոսկալի է, և
ինչ քան սոսկալի չէ :

Բնդհակառակն, վատասիրտն առանց գի-
տութեան կը գործէ, և ապահովութիւն կը
կարծէ ուր վտանգ կայ. և վտանգ՝ ուր ա-
պահովութիւն է. հանապաղ կը խաբուի,
և կարծելով թէ բարեաց հետամուտ է,
չարեաց կը հանդիպի :

Մարդոց մեծ մասն աս սկզբունքը չեն բն-
գունիր : Ար այնդ են ընդ հակառակը թէ մարդ
չարը կը գործէ , թէպէտ դիտէ թէ չար է .
և անկէ խորշիկն իր ձեռքն է . ասոր հակա-
ռակ կամաւ և դիտու թեամբ բարին գործել
կը մերթեւիք , թէպէտ բարւոյն հետամուտ
ըլլալու լիով իշխանութիւն ունինք : Աս ըս-
կըղբունքը պաշտպանողները կըսեն թէ մար-
դիկ իրեն ձգող հեշտութիւնն՝ այնպիսի հը-
րասոյր մ' ունի որ մարդիկ կը բռնադատուին
իրենց առողջ մտքին հակառակ բարին թու-
ղուլ և չարին հետամուտ ըլլալ :

Սակրատ հակառակը կը սնդէ , և ասպա-
ցոյց ալ կուտայ :

Աւանց հակառակութեան ճշմարիտ է որ ,
մարդ միայն իր բարիքը կուզէ :

Հեշտութիւնը բարիք է , ցաւը՝ չարիք .
ուստի հեշտութիւն մը որ ցաւերու կը տա-
նի , չարիք է :

Պնդել թէ մարդ դիտու թեամբ և կա-
մաւ չարին անձնատուր կ'ըլլայ , աս ըսել է .
թէպէտ բարին միայն մարդս իրեն կը ձգէ ,
բայց մարդ ՚ի բարւոյն կը խորշի և չարը կը
գործէ . իբր թէ մարդս բնութեան դէմ՝
հակառակ բնութիւն մըն է . արդարև ան-
տեղի խորհուրդ :

Յոյն փիլիսոփան մարդուս բարին թողլով
չարին հետամուտ ըլլալու զարմանալի հակա-

սութիւնը ոչ թէ զմարդ հրապուրող հեշտալի առարկաներուն, կամ սիրուն իրեն ձգող հեշտութեան կ'ընծայէ, այլ թիւր զգայութեան մը՝ որ զմարդ մոլորութեան մէջ կ'ընկրդմէ, և վտանգն անկէ կը թագուցանէ, մարդը տգէտ կը թողու սոսկալէ բաներու որովք պաշարուած է, և այնպիսի չարեաց որոնք մարդուն մտայուտ են:

Սակրատ մարդն իր ազատութենէն բնազի մերկանար, բայց ոչ ալ կը սնդէ թէ չար գործողն ահամայ կը գործէ, միայն կ'ըսէ թէ խաւարն ու մոլութիւնը մարդուն միտքը կը գրաւեն, և անկէ կ'առնեն ան խնայութիւնը՝ որ միայն կարող է բարեաց և չարեաց մեծութիւնը կշռել սորվեցնել:

Օրորիմակ, անժուժկալութենէ և անոր չափ անցնելէն դալու չարիքները կը տեսնենք, բայց մեր համոզումն այնպէս տկար է և բուն իրեն մեծութենէն այնպէս նուազ, որ գրեթէ ոչինչ տեսած ենք: Մենք մեզի, մեր կրիցը, մեր մոլութեանցը մասնուած ըլլալով, կը կարծենք թէ ամեն բան մեզ խաբելու դաւադիր է, չարիքը մարմնոյ խառնուածքի, պարագաներու և ճակատագրի կ'ընծայենք, որպէս թէ հարկ էր որ ըլլար: Աերկային անձնատուր ըլլալով սպագային համար չենք խորհիր. ուստի բանին լոյսն գրքեթէ 'ի սպառ մարած է:

Իմաստութեան այս գիտութիւնը երկնաւոր
տուրք մըն է : Աստուած միայն մարդիկ կրնայ
կրթել . և Սոկրատ ապաքէն սա հասկցնել
կ'ուզէ , երբեք չսէ թէ այս այնպիսի գիտու-
թիւն է զոր ուսանել անհնար է : Ի՛նչ մը-
տիկ ընենք Աստուած կը խօսի :

« Խորհուրդը , Արդարութիւնը , Իմաս-
տութիւնը , Վաշու թիւնն ու Օջրութիւնը
խմէ է . Ռազա-որի ինկա Ռազա-որէն , և օրէնսդիրս
ինկա զնէն օրէնս արդարութեան . Իշխանի ինկա ասն
հրամանս . և հզօրս երկրի ասնէն իրա-ու-նս » :

Ապաքէն Սոկրատ այս խօսքերը մենէ առաջ
լաած էր , ուստի ըսաւ թէ այս գիտութեան
մէջ կը բազմի Արքութիւնը , Արդարութիւնը ,
Համեատութիւնը , Արութիւնն ու Օջրու-
թիւնը :

Արդարեւ ճշմարտութեան այս գիտու-
թեանը մէջ է որ մարդ իր հեշտութիւնն ու
մխիթարութիւնը կը գտնէ , անկէ կ'առնէ
այն գիւցաղնակիան արութիւնը որ մարդուս
իր կիրքերը սանձել կուտայ : Անով մարդ իր
անձին տէր , համբերութեամբ կրել և հաս-
տատութեամբ մեռնիլ կը սովորի :

Այս ճշմարտութիւնը սխառեբազմոզներու
հայրենիք սխառապանողներու ոգի կուտայ .
այս ճշմարտութիւնը միայն մեծամեծ մար-
դիկ կը յարուցանէ . անաչառ և մեծարու-
գատաւորներ կը հանէ , սրոյ սիրար Արդա-

բուժեան և օրինաց տեղի է . ասոնք միշտ
կը սիրեն իրենց տեարքը թէ և անիրաւ ըլ-
լան . կը սիրեն նաև իրենց Հայրենիքը , թէ և
ասպաշնորհ ըլլայ :

Մտուգ Պէսի թագաւորը , իր արդա-
բուժեամբն և ժողովրդոց երջանկու թեամբը
երեւելի էր : Մահացու հիւանդու թենէ մը
բռնուեցաւ ան ասեն որ Սուստանացիք
(Տօրթուկէդ) հզօր բանակով մը Պէսի եր-
կիրը մտան : Թագաւորն իր զօրապետներն
ու իր եղբայրը կանչեց :

Նհաւասիկ , ըսաւ , անիրաւու թիւնն ու
բռնու թիւնը վանելու ժամանակ է . կը անս-
նեմ որ ժողովուրդս երկար ատեն պիտի չի
կրնամ պաշտպանել . խոհեմու թիւնը կը սլա-
հանջէ որ ճակատ տալու վտանգէն խուսա-
փիմ , բայց և այնպէս յաղթու թիւնն ասպա-
հով ընել պէտք է . քանզի մեր թշնամիներ
ըը անդգոյշ և անխորհուրդ մեր երկիրները
արշաւեցին : Ահնացս վերջին քանի մը օրերը
զանոնք տկարացնելու գործածել կ'ուզեմ .
մերթ անոնց վրայ յարձակել ձեւացնելով ,
մերթ ետ քաշուելով , թշնամին խաբենք որ
նաւերէն հեռանայ : Աղբայր իմ , բանակս
քեզի կը յանձնեմ , թշնամւոյն դէմ խաղայ ,
յետոյ ետ քաշուէ . քեզի տուած խորհուր-
դիս հետեւէ . աչքս միշտ քու վրայ պիտի
ըլլայ . բայց բնաւ կուսի մի բռնուիր . քան-

զի գեռ յաղթելու ժամանակ չէ : Արք կե-
նացս վախճանին մտնեամ, Վեղի դուխ ըւ-
լալու կուգամ. այն ատեն յաղթութեան կը
գիտենք, և վերջին օրս ժողովրդեանս ազա-
տութեանը կը նախրեմ :

Թագաւորին հրամանները կը կատարուին,
տկար թշնամին ծովեզերքէն հեռանալու կը
հրատարակի : Վերջապէս մեծ թագաւորին
գուշակած ժամը կուգայ : Թէպէտ տկար և
շնչապառ, գահաւորակի վրայ նստելով
բանակը կ'երթայ, ճակատ կը կազմէ, գունդ
գունդ կը պատի, կը յորդորէ, կը քաջալե-
րէ, և մարտի կը խրախուսէ : Վտանգը որ-
չափ մեծ է, նայնչափ քաջութիւնը կ'առա-
ւելու. իր զինաւորներուն հարուածներէն
երկու մեծամեծ թագաւորաց տապաստ իյնա-
լը կը տեսնէ : Թշնամին որեւ գառնալու յոյս
չունի, ուժը կրկնապատիկ կ'ընէ. և քաջու-
թեան սքանչելիք գործելով, Վոլուգի բանա-
կին ճախ թելը կը խորտակէ : Վոլուգ կը
տեսնէ, բնաւ չի կասիր, սուրը ձեռքը կըռ-
ւոյն մէջ կը յարձակի. արութեան այս վեր-
ջին գործը տկար թագաւորին ուժը կը սպա-
ռէ, թագաւորը կը մեռնի : Հազիւ իր զօ-
րապետներուն կրնայ պատուիրել որ իր մա-
հը գորքէն ծածուկ պահեն : Վատը բերանին
վրայ, հոգին կ'աւանդէ. իբր թէ քինովե-
րէն լռութիւն կը պահանջէ :

Բանակը յաղթեց, երբ թագաւոր չունէր։
Վատասիրտը որ կը փախչի, դեռ չին
կած՝ մեռած է. իսկ արին՝ մեռնելէն ետքն ալ
կ'իշխէ :

Վարդուս բոլոր զօրութիւնը քննեցինք,
այսինքն անոր առաքինութիւնները. հիմա
անոր կրիցը յարձակումները տեսնենք, կամ,
լաւ ևս ըսենք, մարդս իր տկարութեանցը
մէջ նկատենք :

Նոր կլիմա մը պիտի մտնենք. ան երկիրը
զոր կը թողունք, Վարդուս բանաւորու-
թեանը գաւառն է. բայց մարդ հոն քիչ
կը բնակի : Վարդուն բուն հայրենիքը, բուն
բնակած աշխարհքը գանք : Ահա հանդար-
տութիւնը կը դադրի, ալէկոծութիւն և
մըրիկ կը սկսի :

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՍԻՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՍԻՆԻ ԵՐԿՐՈՐԴ

ՄՈՒՈՒԹԵԼՆՑ ՎՐԵՅ

[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]

Handwritten text at the top of the page, possibly a title or header.

Second line of handwritten text.

Third line of handwritten text.

Fourth line of handwritten text.

Fifth line of handwritten text.

Large block of handwritten text in the middle of the page.

Extensive handwritten text at the bottom of the page, appearing as a list or detailed notes.

ԲԱՐՈՅԵԿԸ ՄԵՐԴԻ,



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Մոլորակաց վրայ :



Գ Լ Ո Ւ Խ Ա .

Տխրո-խեան վրայ :

Մարդուս համար՝ մարուք և անխառն զուարճու թիւն չկայ , երջանկու թեան վայրկեանը՝ իշտաց և ուրախու թեան մէջ եղած արագընթաց վայրկեանն է :

Մարդս շատ մը պիտոյքներ ունի որոնց մէկը նեղուի . բայց այս պիտոյքներն ատեն ատեն կը դադրին , աս դադարման ժամանակն է մարդուս զուարճու թեան ժամանակը . և մարդուն բոլոր հեշտու թիւնը ան զուարճու թեան վայրկեանները վայելելու մէջ կը կայանայ :

Մարդուն սկարու թիւնն այնչափ է , որ ուրախու թեանը մէջ անգամ՝ արումու թիւն և տաղտկու թիւն կը բերէ : Ինձի կ'երեւի թէ , եթէ ծերունի մարդ մը իր կենացը ուրախու թիւնները բոլոր ընդարձակու թեամբն

ուսեւոյն թեամբք ժողովել ու ամփոփել
 կարող ըլլար, պիտի տեսնէր որ կեանքը քա-
 նի մը ամսուան կեանք է, մատաղ մանկու-
 թեան օրերն ըսել կ'ուզեմ. թէպէտ ան
 հասակին մէջ ալ ուրիշ բան ըրած չէ բայց
 տառապել և լալ բայց և այնպէս ան հասա-
 կին մէջ միայն է որ զուարճութիւնները
 մաքուր են, քանզի պարզ են:

Մարդ յաւիտենական Արդարութեան
 հովանւոյն տակ կը ծնանի, կարծես թէ Ա-
 րարիչն անոր արշալուսին կը ժպտի, անոր
 օրօրոցը կը պահպանէ: Տղուն երջանկու-
 թիւնն՝ անոր անմեղութեանը վարձքն է,
 և կը ցուցնէ թէ ուրիշ բանով չեղծանիր է-
 թէ ոչ մեր կիրքերովը: Մէկ խօսքով, կեան-
 քը փոքր 'ի շատէ ծանրութիւն ունեցող
 շղթայ մըն է, թագաւորներն ալ նոյնը մեզի
 ուզէս կը կրեն: Թագաւորաց սուտակասպաս-
 ները կը ջանասն անոնց հաւտացնել թէ ան
 շղթաներէն ազատ են, ասկայն ազատ չեն,
 այն շղթան առեւնէն հզօր թագաւորին վրայ
 այնպէս ծանրացած է, ինչպէս ուրիշ որ և
 իցէ մէկու վրայ:

Գրեթէ մեր բոլոր գործքերը տկարու-
 թեան կնիքն իրենց վրայ տպաւորուած ու-
 նին. ունայնութիւնը մանաւանդ մեր գործ-
 քերուն գլխաւոր շարժիչն է: Մեր անստոյգ
 միտքը՝ ստուերի ուզէս կ'երկրայ, և մեր փա-

փառքները իրարու կը յաջորդեն, և իրար
կ'եղծանեն: Մեր կամացը մէջ ինչ փոփո-
խութիւն: Միտը բանի մը հաճելուն պէս .
իսկոյն հաճոյ եղած իրին թերութիւնները
կ'երևան . երբէք գոհ չենք ըլլար . ամենևին
հաստատութիւն չունինք, այլ ամէն բան կը
թողու մեր սրտին մէջ դատարկ տեղ մը որ
ոչընչին պատկերն է:

Մեր տկարութիւնը ամենէն յստակ աղ-
բիւրները կ'ապականէ . մեր կիրքերը՝ որ պա-
տիր արուեստով մը գեղեցկացած են, բնու-
թեան պարզութիւնը մեղի մերժել կուտան:

Ընհնար է որ մարդս իսպառ առաքինի
կամ իսպառ չար ըլլայ: Ընենէն իմաստուն
մարդն ան է, որոյ մտութիւններն առաքի-
նութիւնը սակաւ կ'աղտեղեն . մտութիւն-
ներն են որ մարդուն մարդ ըլլալը ճանչել
կուտան:

Եթէ գտնուէր մարդ մը որ միայն մտու-
թիւն կամ ախտ ունենար, արդարեւ հրէշ մը
կ'ըլլար . բայց այնպիսի Եակ մը չկայ, և ան-
հնար է որ ըլլայ . քանզի մարդ առաքինու-
թիւնը գիտնալուն համար է որ մտութեան
ալ հմուտ է: Ընմահ առաքինութիւնը մեղի
հետ կը ծնանի, այն է մարդուս խղճմտանքը:

Բայց ամենէն մեծ տկարութիւնը՝ մեծ ա-
մեծ ճշմարտութիւններ ճանչնալուն մէջ կը
կայանայ: Կարծես թէ մարդիկ առանձին կը

սովրին թէ յերկնուստ մեղի տրուած բանք
 կամ միտքը ինչպէս թիւրեմն և մոլորեցնեն ,
 այնպէս որ յետոյ ուրեմն միտքն ալ զմեզ մո-
 լորեցնելու կը նախաստէ : Թէպէտ Աստուծոյ
 Արդարութիւնը զմեզ կը զարմացնէ , սակայն ան-
 կէ քիչ կը վախնանք . քանզի արդարութիւնն
 ալ իր Աստուծոյն պէս աներևոյթ է : Իսկ
 մարդոց արդարութիւնը զմեզ կը տազնասպէ
 և կ'արգելու , քանզի կը լսուի և կը տեսնու-
 վի : Ոչմարտութիւնն զմեզ կը վշտացնէ ,
 ճշմարտութիւնն ըսելու , մանաւանդ ըսելու
 բնաւ քաջալերութիւն չունինք :

Իոյոր այս տկարութեանց մէջ կը ծնա-
 նինք : Արդարեւ կան մարդիկ որոնց հոգին
 ազդու է . այնպիսիները հասարակ մարդոց
 կարգէն վեր են . անոնց թէ առաքինու-
 թիւնները և թէ մոլութիւնները մեծամեծ
 են : Արկիրս ծածկող խառնիճաղանձ բաղ-
 մութիւնն առ հասարակ թոյլ և տկար է :

Ինձի կ'երևի թէ մեր վրայ բռնացող կը-
 րից և մոլութեանց մէջ , կան որ մեր առան-
 ձրին կողմութեանն ու խառնուածքին յար-
 մար են : Հպարտութիւնը , փառասիրու-
 թիւնը , զեղխութիւնը հզօր հոգիներու տը-
 կարութիւններն են : Անայնութիւնը , նա-
 խանձը , մախանքը , փաղաքշանքը , բարկու-
 թիւնը , ագահութիւնը , անգթութիւնն ան-
 գամ տկար միտքերու մոլութիւններն են :

Բայց ասով ամենևին ըսել չեմ ուզեր
 թէ հզոր մտքի տեր մարդոց վրայ տիրող
 կիրքը զանոնք միշտ տկար ըլլալէ կը պահէ,
 և չի թողուր որ տկարութենէ յառաջ եկող
 մտութեանց մէջ իյնան: Արք մարդս ան-
 գամ մը ախախ մը իսպառ անձնատուր է,
 այն անոր բնութեան պէս է և յետին ծայր
 զեղծման կը տանի:

Բայց քանի որ կիրք մը մարդուն տիրող
 կիրքը չէ, անոր բնութիւնն ալ չէ, և այն
 մասին մեծամեծ զեղծումներ ընել տարու-
 բաւ տկան չէ:

Մինք թէ առաքինութիւններն ինչպէս
 նաև մտութիւնները իրարու հետ նմանու-
 թիւն կամ ինամու թիւն մը ունին. բայց
 ան մեծ շարքին մէջ իրարմէ աւելի կամ
 նուազ հեռաւոր դիրք ունին: Այս հեռա-
 ւորութեան կէան է, որուն վրայ պիտի ճա-
 ռենք:

Այլ բանդրէն մեծ մէկը չեն գիտեր:
 Բայց և այնպէս պատմութիւնն առատա-
 ձեռնութեամբ և գթութեամբ, ինչպէս
 նաև հարստութեամբ և փառասիրութեամբ
 լի է: Արդարև անգթութեան գործքերով
 իր վարուցը վրայ որսառ բերաւ, բայց ա-
 նոնք անժուժկալութենէ կամ սնապաշտու-
 թենէ յառաջ եկող յանկարծական գործքեր
 էին: Օտորփինակ Աղիտոսն սպաննեց արքե-

ցու թեանս մէջ. իսկ առ անապաշտու թեան
քան և չորս հազար կուրացի Հեփեստիա
նին ուրուականին զո՛հ ըրաւ .

Ք Լ Ո Ւ Խ Բ .

Անճնասիրութեան այլ և այլ իերպերուն վրայ .

Պիտի խօսէի անճնասիրու թեան, իբրեւ
ամենայն մոլու թեանց սկզբան վրայ. առանց
խորհելու թէ սոյն սկիզբն է որ զվեզ առա-
քինու թեան հետ կը կապէ .

Ստոյգ է թէ անճնասիրու թիւնն Արդա-
րու թեան օրէնքներէն մէկը կը բովանդակէ .
և այն է որ ինձի անճնասիրու թեան գլխուն
ըսել տուաւ թէ՛ անճնասիրու թեան սահման
գնել գիտնալը՝ արդարու թէ յաղթանակն է .

Արդարեւ զգայու թիւններն անճնասիրու
թիւնը կ'ապականեն. մոլու թիւններն և ու-
ռաքինու թիւններն անդադար իրարու կը հա-
կառակին և իրարու վրայ կը յարձակին . Առ-
լու թիւններն, իրենց պէս կորստական բայց
տեսանելի զգայու թեանց համար կը կուռին,
ինչպէս որ բանն իրեն պէս անմահ, բայց
աներևոյթ առաքինու թեան համար կը կրո-
ուի, և կը յաղթէր, եթէ մարդս այնպէս
զգայուն և այնպէս տկար չ'ըլլար .

Մենք առաքինու թեան հետ իբր դեք-

ձանով կապուած կ'ըլլայինք . բայց դերձանք
բեկաւ :

Վարդ առանց անձնասիրութեան չի կրու
նար ըլլալ . և այս սերը որ անոր հետ կը ծը
նանի , կը ստիպէ զնա որ իր անձը վերջին
աատիճան սիրէ . այս սերը մարդուս բոլոր
խորհուրդներուն մէջ կը սպրդի . իր անջինջ
դրոշմը միշտ կը տա հէ :

Վարդս՝ առարկաները միայն այս մտա
կան հայելույն մէջ կը տեսնէ : Միձնասիրու
թիւնը մտերիմ փաղաքուշ մը չէ , այլ անձն
իշխան տէր մը , որ զմեզ ապականել կ'ուզէ .
մեր պահասու թիւններն անմեղադիր կ'ընէ
մեր սկարու թիւնները կը գոլէ , և մեր մու
շու թեանցը մէջ մեզի առաքինութիւն տես
նել կու տայ : Մեր հոգին այլևայլ զսպանակ
ներով կը շարժէ , ինչպէս որ մեր բնաւորու
թեանցը , մեր կազմութեանն ու մեր զօ
րութեանը նայելով սրատշաճ կը տեսնէ :

Վարկացոտ մարդուն առոյգ և հզօր ա
ռարկաներ կը մատուցանէ . և այնուհետև
անձնասիրութիւնը զարգանալով՝ կ'ամբար
հաւածէ , և հպարտութեան կերպարանօք
կ'երևայ :

Տկար մարդոց վրայ կ'ազդէ , շնչին և թե
թե բաներով զանոնք կը հրատուրէ . տեսա
րան կ'ելլէ , իր բոլոր շքեղութիւնը կը յայտ
նէ և ունայնութեան կը փոխուի :

Վերջապէս մոլութիւնները նշանաւոր
հանգամանքներ ունին որովք իրարմէ կը դա-
նադանին . բայց ամենուն ալ պատճառը մի
և նոյն է . և կը կարծեմ թէ մեր ունայնու-
թիւնն ու հպարտութիւնը տեսակ մը անձ-
նասիրութիւն են որ երկու այլևայլ կերպա-
բանքով կ'երևան :

Հպարտութիւնը մեզի փառաց առաջօր
տեսիլը կը մատուցանէ , մեզի պատիւներ ,
հարստութիւններ և յաղթանակներ կը ցու-
ցնէ : Խաբուած մարդը զինք խաբող լուսա-
ւորութեան մը մէջ կը քալէ , ցնորքի մը ե-
տեւէն կը վազէ , քաջութեամբ զնա կը պաշտ-
պանէ , իր բոլոր կիրքերը ձեռք կ'առնէ որ-
պէս զի այն ցնորքն արդիւնք ընէ . զինք իր
բոլոր ոտխներէն վեր կը կարծէ , ամենէն
փոքր արգելք մը զնա կը գրգռէ և կը բոր-
բորէ :

Եւս անմիտները գթութեան մանաւանդ
քան թէ սրտմտութեան արժանի են : Սու-
տիկ սպտկերներ զանոնք կը քարշէն կը տա-
նին : Հատ անգամ կը տեսնուի որ 'ի տուրն
ջեան կը կռուին , և եթէ երբեմն թաքչին ,
անոնց յանդուգն գլուխները իսկոյն միւսան-
գամ կ'երևան :

Բայց նոյն բանը շէնք կրնար ըսել ան սուտ
խմաստնոց համար սրտնք մեծ համեստու-
թիւն կը կեղծաւորեն : Ասոնք իրենց հպար-

տու թեան անսպառ մթերքն իրենց հոգւոյ
խորը կը համբարեն : Համեասի կերպարանք
ներու տակ կը ծայտին : Անոնց քալուածքը խը
րոխտ է . սրամտու թիւնն անգամ հանդարտ
է . անոնց սուտ սրարդու թիւնը ուրիշ բան
չէ , եթէ ոչ ամբարտաւան կեղծաւորու
թիւն : Աւրիշ բանի համար դիմակ չեն առ
ներ , եթէ ոչ փաղաքշանաց գովեստներ ըն
դուներու համար :

Այլ է այն մարդը , որուն շարժուածքը
միայն գոռողու թիւնը կը յայտնէ : Չայնին
հնչումովն անգամ կ'ուզէ ցուցնել թէ զինք
քեզնէ վեր և աւելի կը կարծէ : Ար յետին
աստիճան ամբարտաւանու թեանը մէջ այն
պէս կը համարի թէ իրեն մտեցողներուն
ատեն ու իշխանն է : Այլ թէ երբեմն երևնայ
թէ մարդասիրու թեամբ քեզ մտիկ ընել կ'ու
զէ , իսկոյն կ'իմացնէ թէ կ'ուզէ և կը պա
հանջէ ևս որ դու ալ անոր հիացմամբ մը
տիկ ընես :

Այլ է այն միւս մարդը՝ որ այս մեծ թատ
րոնին վրայ անհանգիտ կ'երևնայ : Արկշո
տու թիւնն անգամ հարարու թեանն ար
դիւնքն է . գովեստ անգամ ընդունել չու
զեր անոնցմէ որոնք իր իշխանու թեանը տակ
չեն : Այն անոնց որոնց բերնէն գովեստ լը
սէ . իրմէ զատ մէկը տեսնել չուզեր , իր
չուրջը կեցողները կը կործանէ . աչուրնե

բուն մէջ երևցած արդիւնքը ախորտ թիւն
կը յայտնէ . խօսքը պարսաւ կամ լաւ թիւն
է . անոր ողորկը՝ լռելն է :

Տեսէք աս խրոխտ մարդիկը որ իրենց
պատուոյն և հարստութեանը, և մանաւանդ
իրենց անուանը վրայ կը պարծին . անուն մը
զոր իրենց նախնիքը չունէին :

Անկը կ'ուզէ որ՝ ամէն մարդ իր վրայ
խորհի . կը ջանայ դմեզ համողել թէ, եթէ
քանակի մը հրամանատար ըլլար, բոլոր
աշխարհք իր յաղթութեանցը համբաւը պի-
տի հռչակէր . իսկ եթէ կառավարութեան
սանձը ձեռք անցունէր, թագաւորութիւնը
պիտի ծաղկէր : Նայց յայտնի է թէ, այսպի-
սի թագաւոր մը իր բոլորաիքը վտտ պալա-
տականներէ ուրիշ մարդ չիկրնար ունենալ :
Խիստ, կամակար, անողոր է, ուստի և բա-
րեկամներ գանձելու կը վախնայ, քանզի այն-
պիսւոյն հացկատակներ միայն պէտք են :

Չկայ անկարգութեան յետին ծայր մը ու
բուն հպարտութիւնը բաւական չըլլայ .
Մարդիկ եւս աւելի ողբալու արժանի կ'ըլ-
լային, եթէ հպարտութեան հետ անգթութե-
թիւն ալ կից ըլլար . բայց հպարտութիւնը
դուն ուրեք տկարութեան հետ ընկեր է .
անգութ ըլլալու համար ալ տկար ըլլալ
հարկ է :

Եւ արդ հպարտութեան նկարագիրն յա-
ռաջ տանինք :

Սենայնու թիւն ըսելով ես մտաւ որ յի-
մարու թիւն մը կ'իմանամ: Աշխարհիս տա-
րեգիրներն անոր գիւաններն են. ամենէն
անագորոյն պատերազմաց պատճառը խիստ
շատ անգամ ունայնու թիւնն է. աս ասին
է որ զուարճութեանց և երջանկութեան
կերպարանօք կը տիրէ, և անոր ատրեւու ար-
ուեսար՝ կեղծաւորութիւնն է:

Սենայնու թիւնը կուսք մըն է զոր մար-
դոց մեծ մասն ամէն հասակի մէջ կը պաշտէ:
Մանաւանդ կանայք անոր իշխանութիւնը
կը տարածեն և կը պաշտօտանեն. ամեն կողմ
կը պարտոյնեն այսպիսի աստուծոց մը պատկե-
րը որ իրենց ամեն բանէ աւելի սիրելի է.
կանայք իրենց ամենէն զուարթ օրերն անոր
կը նուիրեն: Սենայնու թիւնը բոլոր ատրեւերք
գրաւած է, և աշխարհս վարող ամեն զօրա-
ւոր միջոց կը շարժէ: Սենայնու թիւնը՝ որոյ
զհետ կերթան հեշտութիւնք և հաճոյք,
իրեն պաշտօն տանողները միշտ նոր նոր հրա-
պոյրներով կը խաբէ. իր թեթև շուքն ա-
նոնցմէ երբէք չի հեռանար: Սենայնու թիւնը
գեղեցիկները կը համոզէ թէ ամեն բան գե-
ղեցկութեան պարտի հնազանդել. այսպէս
գեղեցկութեան արժէքը կը ստուարացնէ.
և եթէ ոչ քաջալերութիւն, գէթ ամեն
բանի ձեռներեց նենգաւոր կեղծաւորու-
թիւն մը գեղեցիկներուն կ'ազդէ:

Բայց կիրքերն ունայնու թեան կը ծառայե-
յեն . ունայնու թեան համար շահն ու ազա-
հու թիւնն աշխարհիս կարողը կը խառնակէ .
ունայնու թեան համար է որ մարդիկ երկրիս
ընդերքը կը պատուեն , ունայնու թեան ըն-
ծայուած պատիւն հասուցանելու համար՝
ծովը նաւերով կը ծածկեն : Այլ թէ սիրոյ ա-
խոյեան մը տեսնուի , ունայնու թիւնն իսկոյն
անոր կորուստ կը նիւթէ . նախանձն ու ա-
տելու թիւնը զմարդիկ կը վառէ . կեղծաւո-
րու թիւնը կանանց դիմակ կ'ընծայէ , և ա-
նանց քաղցրու թեանն ու գեղեցկու թեան կեր-
պարանայը տակ մտեգնու թիւ կը ծածկըվի :
Այլ թէ ապէս՝ կանանց , կամ մանաւանդ , ունայ-
նու թեան յաղթանակն աւարինու թեան վրայ
անգամ յարձակում ընել է : Հասարակ մարդ
մը կաշկանդելը՝ բաւական չհամարելով , գիւ-
ցադուններն ալ իրենց գերի և մեղսակից
կ'ընեն : Այլ թէ գիւցադնայն հոգին անոնց
անխմաստ խորհուրդներուն հակառակելու
չափ որու թիւն չունի , գնա մեղկու թեան
ու թմրու թեան մէջ կ'ընկղմեն և իրենց առ-
յաջողու թեանը վրայ խնդալով , խաբուած
գիւցադնը կ'արհամարհեն : Բայց կան այն-
պիսի զօրեղ և քաջ կանայք որոնք խիստ մե-
ծամեծ մարդոց օրինակ կրնան ըլլալ :

Այլ թէ ունայնու թիւնը՝ շատ անգամ ար-
տաբուստ գուարթ է , երբեմն տխուր և

մաղձստ դէմքով ալ կ'երևի : Յասխճու թեան
 տխրագին կերպարանաց տակ՝ ճանճրու-
 թեամբ պաշարուած մէկն ալ կը տեսնեմ .
 մթին տրամու թեան մը ատեն՝ կենդանւոյն
 իր շիրիմը կանգնել կուտայ . Հարարու-
 թիւնն անոր խրոխտ օրինակ մը կ'ընծայե-
 ցընէ , և ունայնու թիւնը կը համարէ որ ան
 օրինակին զիջանի : Շինել տուած գերեզմա-
 նին վրայ հիանալով , իր ածիւնը կը մոռնայ :
 Աւնայնու թիւնը , սրտերն ապահանելու
 համար , մտու թիւնները յուզած ատենը , կը
 տեսնես որ ան ճանճաղամիտներուն առջևէն
 յիմարու թիւնն առաջնորդ եղած կ'երթայ :
 Աջ այնչափ մեր կիրքերն են որչափ մեր յի-
 մար ընդունայնու թիւնը որ իմաստուն մար-
 դոց դէմ ատելու թիւն կ'ազդէ :

Օտու արժանի են այն խղճահար և բը-
 ճասնդիր մարդիկ , որոնց վրայ ընդունայ-
 նու թեան ամեն յատկու թիւնները կը տես-
 նուին : Ար պարծին թէ ոչ որ սովորու թիւն-
 ներն իրենցմէ աղէկ գիտէ . անդադար մե-
 ծամեծաց վրայ կը խօսին : Ասոնց ամէն խօս-
 քին մէջ թեթեւամտու թիւն կայ , ամէն
 գործին մէջ շափն անցնիլ , գլխունուն խոյրը
 կամ ապարօշք քիչ մը թիւրելու ըլլայ , կը
 տրտմին , որպէս իրենց անձին վրայ անկար-
 գու թիւն կը տիրէ . վերջապէս եթէ փոշի մը
 ստոնց հանգերձին վրայ նստի , կը տազնա-

սին և կը տառապին : Աթէ ասոնց գտնը
 ւած ակնբնն մէջ առաջին աստիճանի արժա-
 նաւոր մէկը գայ , գլխէն մինչև ոտք մանր
 կը դիտեն , աչուքներով կը կռնեն . մարդուն
 շարժումքը , նայումքը , ամէն բան ասոնց
 զննու թե՛նէն չի վրիպիր : Աթէ մարդուն վը-
 րայ դիպումքով անպաճոյճ պարզութիւն մը
 տեսնեն , եթէ պարզութեամբ և համար-
 ձակ ողջոյն տայ կամ նստի , անխնայ կը դա-
 տապարտուի . մեր ծանձաղամիտը իսկոյն կը
 վճռէ թէ ան մարդը գուհիկ և գժուծ է :

Ճշմարիտ փիլիսոփոս մը ունայնութեան
 մէջ որչափ ծաղու նիւթ կը տեսնէ : Ար տես-
 նէ որ ունայնասիրին մէկն արագ արագ կը
 քալէ . մէկ ուրիշը ոտէկ կը կենայ , իր շար-
 ժումքներուն միտ կը դնէ , անձամբ անձին
 կը զարմանայ , որպէս թէ իր վրայ կը զմայլի .
 ոմանք ալ իրենց հանդերձին ժապաւէնը կամ
 ծոպը կը շարժեն . ուրիշ մ'ալ հետը հազիւ
 ծանօթութիւն ունեցած մէկուն ողջոյն կու-
 տայ , ժպտելով կուզէ իմացնել թէ ծանօթ
 և բարեկամ է :

Արեակայութիւնը հայելի մըն է , որ մի-
 այն առաջօք և խօլ տեսիլներ կ'ընծայեցընէ :

Ակարագիրս բազմադիմի է . որը նկարա-
 գրեմ . Վայց նկարագրումք իրերուն և ոչ
 մէկը հաստատուն և մնայուն է . հողմը բո-
 լոր նկարագիրներու օրինակները կը ցրուէ :

Փառասիրութեան վրայ :

Փառասիրութիւնն մարդուս իր անձը յետին ծայր սիրելն է . հպարտութիւնն այս սէրը կ'արժարժէ : Փառասէրը մեծա-մեծս գործել կ'ուզէ . ամեն արգելք զփառասէրը կը զայրացնէ և կը գրգռէ . բանի մը վրայ չի զարմանար անոր բորբոքեալ սիրտը երբէք վայելման մը համը չ'առնէր , այլ հանապաղ կը ցանկայ . ունեցածը կ'արհամարհէ , և չունեցածին համար կը տանջուի : Իր վրայ բարձր համարում մ'ունենալուն համար , իրմէ հեռու եղած բաներն իր վրայ կամ իրեն մօտ կը տեսնէ :

Փառասիրին առաջին նայուածքը զնա կը խաբէ . աչքը շատ բարձր բաներու կը ձրկտեցնէ , և կը կարծէ թէ իրեն համար խիստ ցած բաներ են . բայց դիտածներն իրեն համար ուրիշ բան չեն բայց եթէ իր սրտին ուղածները : Եթէ ցանկացած մէկ բանն անկէ խուսափի , ուրիշ ճամբով դարձեալ անոր ետեւէն կ'երթայ . իսկ եթէ բռնէ , իսկոյն կը տաղտկայ . կը լքանէ . կը սկսի նոր Նրկինք . ուրիշ բաներ երազել , և անոր հասնելու կը դիմէ . միշտ հանգստեան կը ցանկայ . և հասնելու համար իւր շարժումը կրկնապա-տիկ կ'ընէ , բայց վայրապար :

Փառասիրին վերջին իղձն է վերջին ալիքը
որ զնա պիտի տանի ան եզերքը, ընդ որ ապ-
շած է: Բայց փառասիրին համար բնաւ եզերք
չկայ: Ամենէն փոքր ձախորդութիւնն անոր
բոլոր կիրքերուն սոսկալի հարուած մըն է.
անոր սրտին մէջ կը մանէ և կը տանջէ զնա:
Անոր հակառակ յաջողութիւնը քաղցրաշունչ
հողմոց նման վայրկեան մը անոր հոգին կը
զովացնէ, բայց զնա տոչորող կրակն աւելի
կը բորբոքէ: Դամանակն իրեն համար կոր-
սըւած կը համարի. անոր միտքն անցեալէն
մխիթարութիւն չ'առնէր, ներկայն անոր
համար այնչափ հրապոյր ջունի որ՝ զնա յու-
սացնելու բաւական ըլլայ. իսկ ապագայն
զայն կը յուզէ և միշտ կը խաբէ: Անոր կեան-
քը մշանջենաւ որ զառայանք մըն է, անոր
սրտին մէջ այնչափ ազնուականութիւն չկայ
որչափ ամբարտաւանութիւն: Օրինք անձ-
նիշխան կը կարծէ, քանզի անձնասիրութիւնն
անկէ կը ծածկէ թէ գերի է: Թագաւորնե-
րու գերի ըլլալը սրտաք կը համարի, մեծա-
մեծաց ծառայ ըլլալը՝ քաղաքավարութիւն:
Իշխելու անկալութիւնն անոր իր շղթան
անդադար խեղդ ընդ անձն բերել կուտայ.
Միով բանիւ՝ բարձրանալու յուսով ամենէն
անարդ մարդոց առջև ընդ քարշ կուգայ:

Փառասէրներ, ուրեմն ձեր իղձերը ի՞նչ են:
Մենք ամեն բան պիտի ունենայինք, ե-

Թէ բանի մը չ'ցանկայինք . և որովհետեւ այս
անհնար է , ապա քիչ ցանկանք . ապաքէն
չստ ախտի ունենանք :

Ք Լ Ո Ի Խ Գ .

Յոփոթեան չափազանց աղաքոթեան վրայ :

Յոփոթիւնը՝ մտքի և բարուց ասպակա-
նութիւն կը ցուցնէ , մտլութիւնները կ'ա-
ճեցնէ , կամ մանաւանդ զանոնք անսանձ կ'ը-
նէ : Աիրք մը գրեթէ միշտ ուրիշ կիրքեր ի-
րեն հետ ընկեր ունի : Յոփոթիւնը կը ծը-
նանի ժայռհութիւն և վտութիւն ասոնք ալ
ամեն ոճիր :

Իանականութիւնը մեղմով և տակաւ կ'ա-
ղօտանայ . ուստի մենք պարտաւոր ենք միշտ
դառնալ առաքինութեան և ան լուսայ ճա-
ռագայթներուն՝ զորս առաքինութիւնը մեր
խաւարին մէջ անգամ կը ծագէ : Այժմ մար-
դիկ աւելի երկար ապրէին , և յանկարծ վաղ
վաղակի չար և անդգամ ըլլային , մարդկային
աղբը թիւըս վաղուց ջնջուած էր : Այժմ կը
տեսնենք որ մեծամեծ տէրութիւններ մտլու-
թիւններով կործանած են . կը տեսնենք նաև
որ՝ նոյն տէրութեանց հիմնարկութիւնը ա-
ռաքինութեամբք եղած է :

Հռոմի նոր հաստատուած ատենը՝ պարզ

և զգաստ քաղաքացիներ կը տեսնենք . անոնց տղաքն առաքինի էին , և անոնց թոռներէն դիւցազուներ ծնան : Հարարու թիւնն ու փառասիրու թիւնը զանոնք մեծացուց , և զեղխու թիւնը՝ որ ամեն մուլութեանց խառնուրդն է , վերջապէս զանոնք կործանեց :

Իարուց ցոփութիւնը օրէնքներն արհամարհելի կը թելադրէ . իսկ առանց օրինաց տէրութիւնները չեն կրնար երկար ապեն կանգուն կենալ : Այս ախար իշխաններն առնագորոյն կ'ընէ , մեծամեծները ժպիրհ , և ժողովուրդն ապստամբ :

Կեսար անհնարին քաջ մարդ էր , բայց և անհնարին ցոփ . կը կարծէր թէ բնութեան բոլոր արարածները միայն իրեն համար ըստեղծուած են . կը պնդէր թէ բոլոր Հռովմայեցի տիկնայք իրն են : Օ՛ անոնք հրապուրելէ և ապականելէ ձանձրանալով ամուսիններուն ձեռքերէն յափշտակել տալու սկսաւ . Պութումիան , Նոլիան , Տերտուղիան և Մուկիան հրապարակաւ առևանգեց :

Նիկիոմեոսի Նիւթանիոյ թագաւորին դէմ ըրած զրկանքներն ամենուն ծանօթ են : Մաւրիտանիոյ մէջ Մենայէ դշտայն հրապուրեց . իսկ Բաղդիոյ մէջ կանայք ծախու կ'առնէր ան ոսկիներով զորա անոնց ամուսիններէն բռնի կ'առնէր :

Վերջապէս կեսարին ցոփութիւնն ան առ

տիճան հատաւ որ Եննիոսի կիննայ Տրիբու-
 նի ձեռամբ Հռոմայեցւոց առաջարկեց այն-
 պիսի օրէնք մը՝ որով բոլոր Հռոմայեցի տիկ-
 նանց ամուսինը կ'ըլլար . որպէս զի, կ'ըսէր .
 Յեզիս սերունդը բաղմանայ : Բայց Եննիոս
 առ օրէնքն առաջարկելն ետքը, Աեսար այլ
 ևս Հռոմ մնալու չ'համարձակեցաւ : Պար-
 թեւոց դէմ պատերազմի երթալ պատճա-
 ռելով՝ Հռոմէն մեկնեցաւ :

Վ. Ես անզգամ օրէնքը կը ցուցնէ թէ Աե-
 սար ոչ միայն բնութեան օրէնքը՝ զոր կը
 բռնաբարէր, արհամարհեց, այլ և Հռոմա-
 յեցւոց իրաւունքն անարգեց, և յայտնեց
 թէ Հռոմայական ժողովուրդն իրեն գերի
 ըրած էր :



Գ Լ Ո Ւ Խ Ե .

Բարկո-Թեան վրայ :

Բարկո-Թիւնը սոսկալի կիրք մըն է . բա-
 նը կը հեղձուցանէ, և զմարդ վայրի գաղան-
 ներու նման կ'ընէ :

Բարկո-Թիւնը յառաջ կուգայ այնպիսի
 չարիքէ մը որմէ երկիւղ կայ . և մեր աւելի
 կամ նուազ տկար գործարաններն այն չարի-
 քը մեղ աւելի կամ նուազ մեծ կ'երևցնեն :

Չարիք ըսելով կը հասկնամ ամեն « շփել »
 ամեն ընդդրիմ-Թեան Եւ ... Եւ ... Եւ ...

գին այս չարեաց երեւոյթը տեսնելուն պէս .
կը խռովի . և երբ չարիքը վրայ հասնի , մեր
բոլոր կիրքերն անոր հակառակ կը մըցին , և
կը կռուին իբրև թշնամուց հետ՝ զոր վանել
կը ջանան :

Այս ախտը՝ մեզի այլ և այլ հանգամանօք ,
մերթ հզօր , մերթ տկար կ'երեւայ :

Տկար բարկութիւնը՝ որ սիրտը կը դառ-
նացնէ , սաստիկ կարճամտութիւն մըն է մա-
նուանդ քան թէ բարկութիւն : Իսկ հզօր
բարկութիւնը ուժգին և հրամայող կիրքերը
կը յուզէ , և կը զայրանայ այն անձանց դէմ
անգամ որոնք մեզի սիրելի են : Հայր մը
կամ տէր մը , կը զայրանայ երբ իր կամացը
հակառակ փոքր ընդդիմութիւն մը տեսնէ .
բարկացողն այնչափ աւելի բուռն է , որչափ
կը տեսնէ թէ իր կարողութիւնը մեծ է . ա-
սով կը տեսնուի թէ բարկութիւնը տկարու-
թենէ և վատութենէ յառաջ կուգայ , և
որովհետև դատողութիւնն ու բանը կը բառ-
նայ , զվեղ անիրաւութեան , երբեմն նաև
անգթութեան կը տանի :

Բարկացողին արտաքին ձեւերը , զոր օրի-
նակ՝ գելուքն և գալարելը կը ցուցնեն թէ
հոգին խառնակութեան մէջ է : Ինութիւնն
'ի սպառ կարգէ և կանոնէ խոտորած է . բար-
կացողն իբր թէ մոլի և խելացնոր է , որուն
ցնորումը կանանց և ծերոց վրայ աւելի յա-

Ճախ է . կանանց ջղերուն փափկու թեանը .
 իսկ ծերոց գործարաններուն մաշած ըլլալուն
 համար :

Բարկու թիւնն աւելի նուազ է ան մար-
 դոց վրայ որոնք հասակի միանգամայն հան-
 ճարոց զօրութիւն ունին . բայց այսպիսիներն
 ալ , եթէ ցասման գրգռուին , անոնց սրտմը-
 տութեան արդիւնքը սուկալի կ'ըլլայ : Անոնք
 որ տիրող կիրք մը ունին , կարծես թէ իրենց
 ուրիշ կիրքերն ան տիրող կիրքը հաճեցնե-
 լու համար միայն կը գործածեն :

Այլ թէ սիրալ որ մտութեանց նիստ է ,
 թշնամանուի , կը բորբոքի . բոլոր կիրքերն
 իսկոյն կարթննան , և վառօդի նման ահա-
 գին ուժգնութեամբ կը պայթին :

Ագահ մարդը բարկութեան կը գրգռու-
 ուի , երբ ստակի կորուստ մ'ընէ . հպարտը
 կը զայրանայ՝ երբ իր անձին անարգութիւն
 մը եղած տեսնէ :

Հպարտութիւնը քանէ մը այնպէս չի
 վախնար , ինչպէս անարգութիւն :

Կանայք , որ ընդունայնապարծ են մա-
 նաւանդ քան թէ հպարտ , ոչ այնչափ ա-
 նարգութիւն կը վախնան , որչափ գովեստ ըն-
 գունել կը սիրեն :

Բայց երիկ մարդն 'ի բարկութիւն կը
 բրդի , երբ տեսնէ թէ իրեն դէմ արհամար-
 հութիւն կայ : Արիկ մարդուն այս սաստիկ

զգայուս բառաթիւնը՝ զնա սասարգ բարկու-
թեան նշաւակ կ'ընէ . կարծես թէ արհամար-
հանաց նշան մը կը փնտռէ , որպէս զի իր
զայրոյթն ու վրէժխնդրութիւնը բորբոքել
տալու իրաւունք ունենայ :

Վ.յս կիրքը՝ մանաւանդ արբեցութեան
ատեն ողբալի արդիւնքներ կ'ունենայ . բայց
կարծես թէ բնութիւնը զմարդ կապել և
կաշկանդել ուղած է . անոր համար երբ արբե-
ցութեան աստիճանը հասնի , անզգայութիւնն
ալ իսկ և իսկ կը հասնի : Վ.թէ մարդ արբե-
ցութեան ան վայրկեանին մէջ գործել կա-
րող ըլլար , ապաքէն բարկութիւնը կարի
զարհուրելի կ'ըլլար :

Վիտած եմ թէ ամեն կիրք բանաւորու-
թիւնը կը մթացնէ , բայց 'ի սպառ շիջու-
ցանել չի կրնար : Վ.բեցութեան մէջ ան-
գամ անժուժկալութիւնը մարդուս քով բա-
նաւորութեան նշոյլ մը կը թողու , որով
մարդ կրնայ զինք ուղղել . և եթէ արբեցու-
թիւնն ան աստիճան է որ միտքը մթաղնի ,
ան ատեն մտքին կամ բանին հետ մէկ տեղ
մարդն ալ գրեթէ անհետ կ'ըլլայ , Վայց ար-
բեցութենէ դուրս , ուրիշ որ և իցէ վիճա-
կի մէջ , մարդս իր կարողութիւնն ու զօրու-
թիւնը կը պահէ և իր ամեն մտութեանցը
անձնատուր կ'ըլլայ :

Միտք կիրքն ուրիշ ամեն կիրքէ աւելի

արեան մնա կուտայ : Սիրող մը եթէ բար-
կուծեան գրգռուի, այնպիսի կատաղու-
թիւն կը յայտնէ որուն նմանը չ'կայ :


Եթէ զմարդ վառող այն կրակը չի գտնէ
արտաքուստ ճարակ որով անանի, իր մէջ կը
փակուի, մարմնայն սաստիկ յուզում մը կու-
տայ, և զնա 'ի սպառ կը տոչորէր, եթէ
հրդեհն երկար ժամանակ տեւէր :

Բարկութիւնն, ընդհանրապէս, վրէժ-
խնդրութեամբ միայն կը ցածնու. ոչ ամօթ
գիտէ, ոչ վտանգ, անոր զոհ մը պէտք է : Աս
կիրքը նման է որսաման որոյ ահաւորութիւնն
կյնայէն ետքը կը դադրի :

Ինչ գեղեցիկ տեսիլ մը կ'ընծայեցնէ մե-
զի՝ այն փիլիսոփան որոյ մէկ բարեկամը յան-
կարծ վրայ հասաւ, երբ փիլիսոփան գերի-
ներէն մէկուն բարկանալով բազուկը վեր-
ցուցած, բայց անշարժ կը կենար : Ար սպա-
սեմ որ, ըսաւ, բարկութիւնս անցնի որպէս
զի աս յանցաւոր մարդը պատժեմ. և քան-
զի ես դեռ ցասման մէջ եմ, կ'աղաչեմ որ
իմ տեղս աս մարդուն գու զարնես. իրա-
ւունք չէ որ այս գերին իր անձին տէր չե-
ղող տէրոջ մը իշխանութեանը տակ մնայ :

Սրտմտութիւնը բարկութեան հետ շփո-
թել պէտք չէ. սրտմտութիւնն աղնիւ և
բարձր զգացում մըն է, և մեծանձն ոգինե-
րու միայն պատշաճ է : Սրտմտութեան ար-

գիւնքն ալ երբեմն բարկութեան պէս աստ-
տիկ է, բայց անոր նիւթը տարբեր է. ե-
ւանդուն նախանձ մընէ (՝ ըզարութե՛ն՝ որ իր
նուիրական հուրը կը բորբոքէ. և պիտի հա-
մարձակէի ըսել թէ արամտութիւնն առա-
քինութեան բարկութիւնն է, եթէ բար-
կութեան անունն ասելի անուն մը եղած
ըլլար :



Ք Լ ՈՒ Խ Զ.

Մախանաց (չոր նախանձ) զրաց :

Մախանքը՝ երկու այլ և այլ կերպով կըր-
նանք նկատել : Հսկարա մարդոց մէջ նախան-
ձը մանաւանդ տաղանդներու և համբաւի
դէմ կը յարձակի. իսկ տկար մարդոց մէջ
հարստութեան, ընչից, պատուոց դէմ ան-
գամ կը յարձակի : Մախանաց միջոցներն այն-
չափ վատ են, որչափ անոր պատճառները
գծուծ են :

Ի տկարան, նախանձը գրեթէ միշտ մեր
նուաստութեանը մէկ դաղանի խոստովանու-
թիւնն է. այս բռնի խոստովանութիւնը կը
ընչէր ամբարտաւանութիւնը, եթէ ամբար-
տաւանութեան ջնջուիլ հնար ըլլար :

Մախացողն արդար չի կրնար ըլլալ, այս
ախարհ մանաւանդ իր բոլորտիքն եղող արար-

կայնեքուն դէմ կը կը ու ի : Աստուծոյ շատ
անգամ չ'տեսած մարդուն արժանաւորու-
թիւնը կը բարձրացնէ , և մի միայն նպա-
տակն է , տեսած մարդուն արժանաւորու-
թիւնը նուազեցնել կամ արհամարհել :

Սա ալ ճշմարիտ է թէ մարդ երբեմն մե-
կու մը վրայ կը յափշտակուի . և սա յափըշ-
տակու թիւնը տեսակ մը հիացման պատճառ
է , բայց սա զգացումը մարդ չ'ունենար ա-
նանկ մէկու մը վրայ , որուն հետ իր կենացը
բոլոր օրերը կ'անցնէ : Անոր ձեռքէն ելած
գործ մը եթէ թեթեւ արատ մը ունենայ ,
անհնարին արատաւոր կը կարծուի . անոր վը-
սեմ գործքերը՝ հասարակ գործեր կ'երեւին ,
անոր հնարագէտ հանձարը լսկ խելք է . ա-
նոր մէկ նոր գաղափարը հինցած գաղափար
կը համարուի . վերջապէս մարդուս բնու-
թեան մէջն է ընտանեանալ տաղանդի հետ ,
ինչպէս որ անձի հետ կ'ընտանեանայ . այսինքն
հարեւանցի նկատել :

Աքանջանալու համար՝ հիանալ կը պա-
հանջուի . ամենէն հանձարեղ հնարագէտն
անգամ , եթէ գամ մի հետն ընտանեանայ ,
մեղ չի հիացներ :

Անկ խօսքով , ինչ որ մախացողին քով կը
բարձրանայ , և կը թուի թէ իր ստուերովն
զնա պիտի ծածկէ , մախացողին համար հրա-
կայ մըն է գոր ոմնդար կը հարկանէ :

Վերջապէս կայ մէկը որ իր հայրենակից-
 ներուն բերնէն գովեստ լած ըլլայ : Մի և նոյն
 մարդը , որչափ իր ճննգեան տեղէն կը հե-
 տանայ , այնչափ կը թուի թէ կը զարգանայ
 ու կը մեծնայ . իր հայրենեացը մէջ գրեթէ
 միշտ մինչև ցմահ կը հալածուի , մահուանը
 հետ մախանքը կը գաղբի : Մնոր տեղը սնա-
 պարծութիւնը կուգայ . համազգիները կը
 սկսին անոր սկորներուն համար վիճել , ոմն
 անոր արժանաւորութիւնը կը գովէ , և ու
 բովհեան հայրենակիցն է , զնա գովելով ինք
 զինքը գոված և անոր փառացը բաժանորդ
 եղած կը համարի : Յունայ բոլոր քաղաքնե-
 րը վիճեցան թէ Հոմերոս իրենց քաղաքակից
 է : Այլ թէ անոր բուն հայրենիքն զնա կենդա-
 նութեան ատենը պատկած ըլլար , այնպիսի
 մեծ մարդ մը յառաջ բերած ըլլալուն պա-
 տիւր տարակուսի մէջ չէր իյնար :

Տկար մարդոց վրայ մախանքը ցեց ու որդ
 է որ հոգւոյն կը փակչի և զնա անդադար կը
 տանջէ : Այլոց երջանկութիւնն անոր յու-
 սահատութիւն է , և մախացողը իր յանցանքն
 ու պատուհասը միշտ հետը կը կրէ :

Մախանայ ցաւերն անոր համար սաստիկ
 են , քանզի մախանքը մեր սրտին մէջն է :
 Մնոր բնութիւնն այնպէս ատելի և անարգե-
 լի է , որ անձնասիրութեան բոլոր հնարքներն
 զնա հազիւ կրնան թաքուցանել : Այլ թէ այն-

պէս ըսել արժան է, մախացողն իր ողին
դառնացնող թոյնը կաթիլ կաթիլ կը ծո-
րեցնէ. և սիրտը ուրիշ կերպով չի յայտնու-
իթէ ոչ բարկութեամբ բորբոքած ատենը:

Այն ատեն մախացողին հողին տեսակ մը
հնոց է, որուն վառարանը միշտ կայ մնայ,
և հետզհետէ կը բորբոքի:

Իսկ, աղնուական մրցանք (բարի նախանձ)
ընդունէ մեր մեծարանքը, շատ անգամ մար-
դիկ զքեզ մախանաց հետ կը շփոթին. բայց
դուն առաքինութիւնն էս:

Մախանքը միտքը կը հեղձուցանէ. իսկ
մրցանքը կամ բարի նախանձը հնարագէտ
հանձար կը ստեղծէ. մախանքը հողւոյն ա-
մօթն է, և լոյսէն կը փախչի. իսկ մրցանքը
լոյս կը փնտռէ, և մեծամեծ մարդիկ կը ծը-
նանի:

Նեւտոն զկարգեօրոս տեսաւ այնպէս
ինչպէս որ էր, այսինքն՝ հսկայ մը. մրցանքն
անոր ըսաւ թէ կրնայ ինք ալ անոր պէս հըս-
կայ մ'ըլլալ: Իր զօրութիւնը զգաց, և կար-
գեօրոս իրեն նեցուկ և յենարան ընելով,
մինչև երկինք բարձրացաւ ու երկնից խելա-
մուտ եղաւ:

Նախանձ (Ժողովուրդ) վրայ :

Նախանձն այնպիսի նկարագրերն են , որովք մախանայց կը նմանի . բայց նախանձուն արդիւնքները շատ աւելի բուռն են . նախանձուն մէջ , մենք անձամբ յարձակում կրած ենք , և որովհետեւ իրը որուն համար նախանձու կը շարժինք , մեզի հետ անձուկ կապակցութիւն ունի , անոր համար մեր սրբախն յոյզերը աատիկ և բուռն կ'ըլլան :

Թեպէտ նախանձը գրեթէ միշտ տկարամիտ մարդոց սրտին կը տիրէ , բայց և այնպէս մախանայց չափ արհամարհելի չէ . և նախանձոտ սիրտը մախայցող սրտին չափ գրծուծ չէ : Արդարեւ , մախանքը կը ցանկաց յափշտակել բան մը որ իւրը չէ . ոչ այնչափ այնու վայելելու համար , որչափ ուրիշի մը վայելելը տեսնելով ցաւ չ'կրելու համար . իսկ նախանձը վրէժխնդիր է բանի մը որ իւրն է , կամ կը կարծէ թէ այնու վայելելու ինք միայն իրաւունք ունի : Սայն պահպանելու համար իր բոլոր զօրութեամբը կը ջանայ : Վրէժէ ամենայն մարդիկ , մեծամեծներն անգամ , կրնան այսպիսի կատաղութենէ մը բռնուիլ : Բայց երբ նախանձը մարդուն բընարոյս է , մանաւանդ անապարձութենէ և

ունայնու թե նէ յառաջ կուգայ քան թէ 'ի
ճշմարիտ սիրոյ :

Սակաւ արժանաւորու թեան կամ տկար
կազմուածոյ տէր մարդ մը , այնչափ 'ի նա-
խանձ չի յորդորուիր , երբ անոր նախանձելու
առիթ կը տրուի , որչափ երբ իր վրայ դառ-
նալով և խորհելով կը տեսնէ թէ իր անձին
մնաս մը կայ . այնպէս որ առաքինու թե նէ
անգամ կը սկսի կասկածել :

Այն թէ ապահով ըլլալու սկսի թէ իր ան-
ձին վտանգ չ'կայ , իսկոյն նախանձն ալ կը
սկսի նուազել : Անոր խօս ունայնու թիւնը
զնա իրեն խաղալիկ կ'ընէ . բայց նախանձոսն
այն ունայնու թիւնը սաստիկ սէր կը կարծէ .
կ'ուզէ որ իր դերի ըրած գեղեցկու թիւնը
համարուի իբր յաղթանակ զոր իր հանձա-
րովն ու անձին վայելչու թեամբը ստացաւ :

Աւելի կը փափաքի ուրիշի բերնէն լսել
թէ կը սիրուի , քան թէ բուն անոր բերնէն
զոր կը սիրէ :

Այս բռնաւոր կիրքը զուարճու թեան
արտաքին երեւոյթը կ'ընծայեցնէ . մեղմե-
խանօք կը սպրդի . իրմէ աւելի գեղեցիկ մը ,
իրմէ աւելի արժանաւոր մը , իրմէ աւելի
համբաւաւոր մը տեսնելու ըլլայ , կը արամի .
Ա երջապէս այսպիսի նախանձոս մարդու հա-
մար ամենայն քան ահարկու է :

Նախանձը հլու և խոնարհ է , մինչև այն

վայրկեանը ուր կը սկսի հրամայել : Աթէ
 չունենար ան կեղծաւորութիւնը որ միշտ
 անոր հետ կից է , իր ակնկալած զոհը կը
 կորսնցնէր : Հաղիւ երջանկութեան երե-
 ւոյթը կը վայելէ , իր յոյժ քաղցր զուար-
 ճութիւնները ինքնին կը թունաւորէ . ոչ
 ակնածութիւն գիտէ , ոչ վատահութիւն .
 միշտ ինքզինք կը խաբէ , և միշտ խորամանկ
 հետաքրքրութեան մայր է : Խաւարին կաս-
 կածներ անոր հոգին կը մթացնեն . աս կաս-
 կածները մէն մի կատաղիներ են որոնք կաս-
 կածուոր կը տանջեն :

Ասխանձատ մարդը միշտ կ'ուզէ հաւա-
 տալ թէ դժբաղդ է . յոյժն անգամ զնա կը
 խռովէ և անհանգիստ կ'ընէ :

Հաւասարից պատկերները կը մերժէ . կամ
 եթէ զանոնք տեսնէ ևս , անով զինք լափող
 բոցն աւելի կը սաստկացնէ : Ա երջապէս իր
 թշուառ ըլլալուն վրայ ստոյգ ըլլալու հա-
 ժար այնչափ հնարք կը հնարի , որ քողը կը
 պատռի և ճշմարտութիւնը յայտ կուգայ :
 Ասխանձոտն այնպէս տկար է որ , թէպէտ
 այս ահաւոր ճշմարտութիւնը երբեմն անոր
 կատաղութիւնը յանկարծ կը հանդարտեցը-
 նէ , սակայն սովորաբար անոր զայրոյթը յե-
 տին ծայր կը բորբոքէ . այսպէս յետին ծայր
 բորբոքելէ ետքը անոր կատաղութիւնն 'ի
 սպառ կը դադարի . նախանձոտն ամենէն ա-


Նազարոյն վարանայ մասնու ան է . երբեմն
կ'ուղէ տակաւին երկմտել . երբեմն անոր վի-
րաւորեալ անձնասիրու թիւնը ուրախ կ'ըլ-
լայ իբր թէ մթու թիւնը փարատեց , և ի
մացաւ ինչ որ իր յուսահատու թեանը պատ-
ճառ էր . բայց այսպէս արհամարհուած ըլ-
լայր խոստովանելու ատեն մխիթարու թեան
պատճառ կը խնդրէ :

Ն.յս խոստովանու թիւնը զնա կը զայ-
րացնէ , վերջապէս գոհ կ'ըլլայ այն մանր
պատմու թիւններէն և տեղեկու թիւններէն
որոնք իբր թէ զինք խաբելու համար գոր-
ծածուած միջոցներն անոր կը ցուցնեն :
Մարդ անգամ մը այս աստիճան տկարու-
թեան հասնելէ ետքը , ալ ուրիշ բանի ակն
ուներու չէ եթէ ոչ արհամարհանաց , ատե-
լու թեան կամ վրէժ խնդրու թեան :

Նայց և այնպէս կայ նախանձ մը որ ա-
ռաւել առաքիսու թեան մօտ է , քան մու-
լու թեան : Նախանձը ազգողը համեստու-
թեան և երկիւղածու թեան զգացումներն
են , և աս նախանձը փափուկ սրտի մը մէջ
խաղաղու թեամբ կը թագաւորէ : Ն.յս նա-
խանձն ուներցողը կը վախնայ թէ գուցէ բա-
ւական հաճոյ չէ , կամ թէ անհաճոյ է և
կամ թէ թերեւս չի սիրուիր :

Ն.թէ ամպ մը ելլէ , խկոյն զայն կը վա-
նէ՝ քաղցր զգացում մը և կը ցրուէ , և ան

պղտորու թէնէն ետքը, շնորհալի պարզու-
 թիւն մը խիստ ջինջ օր մը կը ծագէ : Սա
 նախանձուն այս շարժումն արդարեւ աղնու ա-
 կան և փափուկ է . բայց յայտնի է թէ ա-
 նօսը և անգիւտ է : Ստոյգ սկզբունք մըն է
 թէ մոլու թիւնները յաճախ առաքինու թեան
 գիմակը կ'առնեն . բայց առաքինու թիւնը
 երբէք մոլու թեան կերպարանքը չառնէր :
 Նախանձոտն 'ի դուր կը կեղծաւ օրի . խորա-
 մանկ հարցումներով, թշնամանալից յանդի-
 մանու թիւններով և տաղտկացուցիչ հսկո-
 դու թեամբ իր կասկածները կը յայտնէ : Նո-
 լոր այն խօսքերը, բոլոր այն գործքերը մո-
 լու թեան աղբիւրէ մը կը բղխեն . և մոլու-
 թիւնը յայտնուելուն պէս՝ ուրիշ բանի ըս-
 պասել պէտք չէ եթէ ոչ տխուր արդիւնք-
 ներու : Նաքինի և մեծանձն հոգի մը կը
 սիրէ վայելել միայն ան մեծարանքը որ իրեն
 արժանի է : Նմեղին հետ իբրև յանցա-
 ւորի հետ վարուիլը՝ անոր միտքը ոճիր դնել,
 և խղճին խայթը անկէ բառնալ է :



Գ Լ Ո Ւ Խ Ը .

Փաղաքաշանայ վրայ :

Փաղաքու շները կամ սուտակասպասք՝ մե-
 ծամեծաց և թագաւորաց քով կը ծնանին ,

անդատին օրօրոյէն անոնց հետ կը յարին .
 սուտակասպասին կործանիչ միտքը՝ մեծամեծ
 ծայ առաքինութեանցը և փառացը դէժ
 կուռելէ :

Հողին կրնայ բարձրանալ և խոնարհիլ .
 դօրանալ և տկարանալ : Արեւելի մարդիկ
 միշտ իրենց առջին մեծամեծ պատկերներ ու
 նին . պատկերներ՝ զորս առաքինութիւնը մի-
 այն յառաջ կը բերէ . և առաքինութիւնը
 միայն երեւելի մարդիկ դժուարին արահետ
 ներսի պատուոյ կը տանի : Փաղաքշանքը
 միայն պատրանք կը ցուցուէ . բայց այնպիսի
 պատրանք՝ որոյ հետ զուարճութիւններ կից
 են . և ան զուարճութեանց տակ մոլութիւն
 և ոճիր թաքուցեալ կան :

Փաղաքշանքը հրապոյր մի է զոր՝ մարդուս
 միտքը մոգելու համար մեր մոլութիւններն
 իրենց արբանեակ կ'ընեն . այսպէս հրապոյրը
 զմարդիկ կը յորդորէ այն բաներն ընելու ու
 բոնք մեր կարողութենէն կը սպասէ : Փա-
 ղաքշանաց հրապոյրը կը ճնանի կեղծաւորու-
 թիւն , նենգութիւն , և ՚ի բնէ սրտի ապա-
 կանութեամբ և հոգւոյ վատութեամբ խառն
 է : Ստախօսութիւնը մեծ վարդապետ մի է ,
 անոր արուեստը , գաղանիքը սուտակասպա-
 սին համար են . ասոնցմով սուտակասպար
 իր ուժը փորձելու , իր միջոցներն յարդարե-
 լու և ուղղելու դէպքերը ձեռք տանելու և

մեղի հետ յաջողութեամբ կուերու մահա-
բեր հանձար մը կը ստանայ : Անդ մենէ ա-
ղէկ կը ճանչէ , չկայ բան մը որ սուտակա-
սրասին խելամուտութեանը հաւատարի : Այս
խորամանկ լրտեսը երկար ատեն տեղոյն ամ-
բուծիւնը կը քննէ . և յարձակման չի սկը-
ած՝ ասպահովութիւն կը ստանայ թէ պիտի
յաղթէ : Այլ որովհետեւ նարատակը մեղի հա-
ճոյանալ և հրապուրիչ երեւոյթով մեր կիր-
քերը ողբել է , անոր համար աւելի ահա-
ւոր է :

Սուտակասպար որ ցած և քծնող է , բոլոր
մեղ կը բարձրացնէ , մեր ամբարտաւան միտ-
քին հպարտութիւն կ'ընծայեցնէ : Բռնա-
մարտիկ կուերի մէջ քաջ ըմբշի նման , կը
խոնարհի որ զմեզ աւելի դիւրաւ զգեսնէ :

Անձամե՛ծք և թագաւորք երկրի , դուք
որչափ ողբալոյ արժանի էք : Դուք ձեզ եր-
բէք չէք կրնար տեսնել այնպէս՝ ինչպէս որ
էք , ոչ ալ զմարդիկ ճանչել այնպէս՝ ինչպէս
որ են :

Այլ դու , սիրելի ժողովուրդ , յողորմող
և թեթեւամիտ դովութիւն սիրող ազգ ,
քու առաջին ժպիտդ սուտակասպասին կը
մատուցանես :

Անիկ մարդը որ իր անձին կաթողի է , միշտ
և անդադար ունայնութեան կը դոհուի . շատ
անգամ իր շամբուշ աստուծոյն բազմեր կ'ել-

լէ . և զինք կուռք կը կարծէ : Ար խաբուի .
 քանզի իւր երկրպագուն անկեղծ կը համա-
 րի : Օգայուն է , անոր համար երբ արտա-
 սուք կը տեսնէ՝ սրբելու կը փութայ , քանզի
 գիտէ թէ այն արտասուքն ինք միայն կրնայ
 ջնջել : Միշտ քաղցր խօսք կը լսէ , միշտ ա-
 նուշահոտ խունկեր կ'ընդունի : Արկրպագուն
 վայրկեան մը կը հեռանայ . խաբուած կինը
 կը սկսի մտքովը անոր 'ի նպաստ խօսել : Սու-
 տակասպասին դէմքը հրապուրեալ կնոջ սրբ-
 տին մէջ դրոշմուած է : Վ'նչ սիրուն է եր-
 կրպագուս , կ'ըսէ , նրչափ անկեղծ : Օ իս
 խաբելու ամենեւին պատճառ չունի : Վ'որ
 ի'նչպէս չլսեմ : Համար է չտեսնել այնպիսի
 մէկը որ , իմ նկարս հանելու համար , զիս
 թեթեւ ձեռքով այնպէս շնորհալի կը նկարէ ,
 և հակառակորդս այնպէս այլանդակ :

Վիւրահաւան աղգ կանանց , դուք ձեզ
 աղէկ ճանչնալ սովորեցէք , կամ էրիկ մարդն
 աղէկ ճանչցէք :

Սուտակասպասն ամէն բան առաջարկելու
 կը համարձակի , և բան մը դժուարին չի հա-
 մարիր : Արբ եղեռնագործութեան մը կը
 յորդորէ , կ'արծես բոլոր ցանկութիւնը ոճ-
 րագործին հաղորդ ըլլալ է : Աթէ միտքը ցո-
 փութիւն և անստակութիւն է , ինք անձամբ
 անստակութեան գործիք կ'ըլլայ , բաց թէ
 առաջարկած բանը հետը փռանդ կրնայ բե-

րել, գրեթէ միշտ ինք կը խորշի, կը խուսէ. գործին կատարումը բոլորովին հրապուրեալ անձին վրայ կը մնայ. թելադրող փաղաքուշը գործին փառացը բաժանորդ ըլլալու չափ քաջալերու թիւն չունի, միայն հեռուէն իր զարմանքը յայտնելով գոհ կ'ըլլայ:

Սուտակասպասին այս բնաւորութեանը վրայ չեմ զարմանոր, քանզի դեռ փաղաքուշ չեղած վատ էր:

Կ'արծես թէ մարդիկ իրարու հետ դաշինք ըրած են որ զիրար խաբեն որպէս զի ճշդիւ իրարու նման ըլլալու ուրախու թիւնը վայելեն:

Տկար մարդ, բաւական չէ որ քու զգայու թիւններէն փաղաքշանք կ'ընդունիս, ինչո՞ւ համար կ'ուզես որ քու նմաններդ ալ քեզ ողորելով խաբեն:

Գ Լ Ո Ւ Ն Թ.

Ղգահոսթեան վրայ:

Ղգահոսթեան արդիւնքը գիտենք. 'ի զուր խաւարի մէջ թաքչիլ կը փու թայ: Իր թաքստեան տեղը որչափ մթին ըլլայ, տաւ կաւին անոր հետամուտ եղողներ կան: Ղգահն ինչ է, սասկալի ցնորք մը: Ի՞նչ աս երևոյթը ազահին դիմակն է, անոր սիրտն ալ

Ճանչնալ պէտք է : Անոր սկզբանը կամ ծագմանը խելամուտ ըլլալ ով կարող է . բայց և այնպէս խելամուտ ըլլալու ջանանք , կամ գոնէ խելամուտ ըլլալու ճամբայ մը հորդենք :

Կը խոստովանիմ թէ բոլոր ախտից մէջ ազահու թիւնը միայն զիս աւելի կ'ապշեցընէ ու կ'ընդարմացնէ : Կը համարձակիմ ըսելու թէ ճշմարիտ ազահ մը քանի մը հարիւր տարին հազիւ անգամ մը կ'երեւնայ . այնպիսի ազահ մը երեւալու ալ ըլլայ , բոլոր ախտերը վկայելու է որ հաւատամ թէ արդարեւ ազահ է :

Ինչպէս հնար է մարդս որ ՚ի բնէ զուարճու թեան և բարեկեցու թեան կը միտէ , և ցաւ կը զգայ , մոլու թեան մէջ , ինչպէս է ազահու թիւնը , խոտամբեր և յետին աստիճան ժուժկալ երեւայ : Հարարու թեան ծոցն ըլլալով քաղց և ծարաւ կրէ : Ի՞նչ կ'ըսեմ . թշուառին սաստիկ տառապանքը տեսնելով ուրախու թիւն և փափկու թիւն իմանայ :

Ազահը բոլոր արարածոց մէջ այնպիսի է , որուն միտք և հանձար հասու ըլլալ չի կրնար : Այս վատանուն և մահաբեր կիրքը տկար հոգիներու կը տիրէ . ուստի և անոր սկիզբը պէտք է մնտուել այնպիսի մոլու թեց մէջ որոնք տկարու թեան կարի մօտ են :

Իարձեալ , բաւական չէ գիտնալ թէ որոնք են ազահու թեան պատճառները , և որ

Մոլու թիւններն են որոնք ազահու թիւն կը
 ծնանին . այլ հարկ է ևս գիտնալ թէ մարդ
 մը ինչո՞ւ համար ազահ է . Արդարեւ այս
 ինչ կամ այն ինչ մոլու թե՛նէ բռնուելու հա-
 մար կրնանք անդատին 'ի ծննդե՛նէ փոքր 'ի
 շատէ յարմարու թիւն ունենալ . բայց ոչ ա-
 դահ կը ծնանինք , ոչ շուայլ , ոչ փառասէր .
 և ոչ այլ ինչ որ ասոնց նման է :

Ազահու թիւնը գծուծ և տկար և երկչոտ
 հողւոյ մը յիմարու թիւնն է :

Այս յիմարու թեան պատճառն ի՞նչ է .
 Անոր պատճառը երեք յետին ծայր շամբուշ
 մոլու թիւններ են : Աստիկ անձնասիրու-
 թիւն , Արկիւղ և Անդդայու թիւն :

Առաջին բնական զգացումը անձին սերն
 է : Վարդ մը որ ան յիմարու թեան մէջն է
 զոր ես նկարեցի . և յորում ազահու թիւնը
 կը կայանայ , զինք այս ընդարձակ տիեզերաց
 մէջ մի միայն կը կարծէ . մինակ իր պահպա-
 նու թիւնը կը խորհի , և կը սիրէ զինք միայն
 կամ ինչ որ իրեն հետ ներքին աղերս (յարս-
 բերու թիւն) ունի :

Բնական է որ մարդ իր ընկերին սիրտը իր
 սրտէն լաւագոյն չի կարծեր : Ազահը որ ան-
 դու թ և խոտասիրտ է , 'ի հարկէ ուրիշներն
 ալ անդու թ և խոտասիրտ կը կարծէ : Արով
 հետև միայն ու փոյթը միայն իր անձին օ-
 գուսն է , իր շաղփաղփուն կեանքը , ուրիշ-

ներքե՛ն կը վախճնայ . ու սաթի կը ճնամնին սոգ ա-
 հին կասկածները , անվստահու թիւնը և սազ-
 նապները : Այսպէս ահիւ և դողու թեւամբ
 պաշարուած , ապաւե՛ն , սիրելու նիւթ մը կը
 խնդրէ : Մայց ուր կրնայ գտնել : Ար ընկեր-
 ներու՛ն մէջ : Աննոցմէ կը վախճնայ . ու սաթի
 հարկ է որ անշու՛նչ բան մը խնդրէ . իսկոյն
 սակին անոր կը մատուցուի . զայն կը բռնէ ,
 անոր կը յարի . ոսկին տեսնելով միայն զինք
 երջանիկ կը համարի . զայն իրեն ապաւե՛ն ,
 պաշտպան և տէր կը ճանչնայ . յաղթանա-
 կաւ կը կրէ . ու բիշ բանի չի ցանկար բայց
 սակայ , ոսկին կը ժողվէ , կը դիզէ , աչուը-
 ներով կը կլլէ , սրտին մէջ կը փակէ : Քաղ-
 մաթիւ բանակներու տէր աշխարհակալ մը
 իր զօրութեանը վրայ այնչափ ամբարտաւան
 չէ , որչափ ազահ մը ոսկիներուն վրայ կը
 խորհի : Քանի որ անունց կը նայի , բանէ մը
 չ'վախճնար , մանաւանդ զինք ահաւոր կը կար-
 ծէ :

Թեպէտ առանց օրինակի չէ , բայց դու՛ն
 ուրեք կը պատահի որ հարստութեան մէջ
 ճնած մարդ մը որ ամենեւին ընչից կամ ըս-
 տացուածաց կորուստ մը ըրած չէ , իյնայ այս
 օրհասական յիմարութեան մէջ որ կծծի ա-
 գահութեան կը տանի :

Այս մոլութիւնը կը հանդիպի սովորաբար
 այնպիսի մարդոց որոնք միջին վիճակի և խիչ-

ուսումնասիրութեան մէջ ծնած են, և այն վիճակէն կ'ելլեն :

Արդէն խիստ հարկի տակ ճնշուած ըլլալու տալորած ըլլալով, զինք նորէն անագորոյն ծառայութեան կը մատնէ : Ար մտնայ թէ ինչ է, որպէս զի խորհի թէ ինչ էր. իր առաջ չ'վայելելուն վրայ կը վայելէ, և իր անցած թշուառութեանը պատկերը գաղտնի հաճութեամբ կը նկատէ : Աչքին ամենայն ինչ գեղեցիկ և մեծ կ'երեւի. իր յետին ծայր կծծութիւնը՝ խոհեմութիւն և իմաստութիւն կ'անուանէ : իր վիճակին յաջողութիւն մտքին լայնութեանն ու խորութեանը կուտայ, իր սակիներուն համար հպատակուիլը նոյն իսկ ոսկիներուն կ'ընծայէ :

Ար թուի թէ ժամանակն ազահ մարդուն մտքին այլ ազգ կ'երեւի քան թէ ուրիշ մարդոց. ներկան ապագային մէջ միայն կը տեսնէ : Ներկան ազահին համար ապահով է, անոր հոգը ապագային համար է. քանզի իր անձը սաստիկ սիրելուն համար, բոլոր խորհուրդը սա է թէ արդեօք ապագային մէջ ալ այնպէս ապահով պիտի ըլլայ, ինչպէս ներկային մէջ է :

Այս բոլորովին չար կամ բոլորովին մոլի է :

Ազահը նախանձուս է, բայց գողութիւն ընելու անկարող է. օրէնքները կը սիրէ ու կը մեծարէ. իր պահպանութիւնն ու ապա-

հովու թիւնը հոն կը գտնէ . իր բարեկամներ
 բուն համար կը խօսի , անոնց ամեն հնարք-
 ներ կը խորհի , բայց եթէ անզգոյշ բարե-
 կամ մը ազահին սրբարանին ձեռնամուխ ըլ-
 լայ , իսկոյն բարեկամութիւնն անհետ կ'ըլ-
 լայ , սակի տալն՝ ազահին համար Աստուծոյ
 վրայ ձեռք վերցնելու պէս է :

Չկայ ազահ մը որ զինք ազահ համարի .
 զինք միշտ չափէն աւելի առատաձեռն կը
 կարծէ . և որովհետեւ ազահութիւնը մեծ
 առաքինութիւն կը համարի , իր չափէ դուրս
 կ'ծուլ թիւնը կատարելութեան վերջին ծայրը
 կը կարծէ :

Միշտ ուրախ է , քանզի հանգարտութիւն
 կը վայելէ սակիները որոնք երբեք իրմէ չեն
 պակսիր , հանապաղ կ'աճին , և անդադար
 կը նորոգուին . ազահը գրեթէ միշտ հզօր
 և առողջ է , և իր սա առողջութիւնը գոր-
 ծունեաց կենացը , ժուժկալ բարուցը և խո-
 տամբերութեանը արդիւնք է : Սւստի բը-
 նութիւնն անոր երկայն օրեր պիտի տար ,
 եթէ հանապաղ երկիւղէ չի տանջուէր : Ե-
 թէ այս ահաւոր հարուածը չունենար , ա-
 զահը երկրիս վրայ շատ երջանիկ պիտի ըլլար :

Կը վախճանամ թէ գուցէ մտացածին Վակ
 մը նկարագրեցի . կ'ըսուի թէ ասանկ էակ մը
 կայ , և եթէ այսպէս է , ապա կը կարծեմ
 թէ անոր մօլութեան աղբիւրը յայտնեցի .

բայց ազէ դայնեքը մեղմացնենք . զանազա-
նութիւնները թուլացնենք , ազահին բա-
րուցը ճշմարիտ սրատճառներն անշուշտ պի-
տի գանենք . աս սկզբունքը միշտ ճշմարիտ
է , հազիւ թէ կը վերապի :

Թեպէտ ազահը միշտ վարանման և եր-
կիւղի մէջ է , բայց և այնպէս 'ի սպառ գոհ ,
և միշտ խելքն ու միտքը վրան է : Ազահ մը
գիտեմ որ մեծ հանձարի տէր է : Վիշերու ան-
աղջամղջին մթութեանը մէջ իր խուցը մրու-
նել ուղեց . ուստի իր տղուն թեւէն բռնե-
լով ըսաւ . եկու , ճրագ ցցուր : Օգուշու-
թեամբ և անմառնչ փակները դարձոյց ,
դուռը բացաւ ու ներս մտաւ : Ազահը մոռ-
նալով պատուհան մը բաց ձգած էր , հովը
կը փչէ ու ճրագը կը մարէ , ուստի ոսկւոյ
և արծաթոյ դէղերուն մէջ որդւոյն հետ
մութը մնաց : Մհ , անդգամ կատուն , գո-
չեց . ծափ զարկ , որդեակ , ծափ զարկ : Տը-
ղան սկսաւ ծափ զարնել , հայրը մեղմով որ-
դին դէպ 'ի դուռը տարաւ ու դուռը գո-
ցեց . ապահով ըլլալով որ որդին ձեռք զար-
նելու զբաղած ըլլալով , ոսկիներէն առնելու
ժամանակ չունեցաւ :

Հայրն այս խորագիտութիւնը այնպիսի
բնական կերպով ըրաւ , որ որդին կը խառ-
տովանի թէ հազիւ քսանն չորս ժամ ետքը
կրցաւ հասու ըլլալ :

ունեցածէն աւելի մեծ բարեաց կը փափա-
քի . միշտ կ'երազէ և կը սանջուի . ցանկու-
թիւնն անոր զգայութիւնները կը սրէ . բո-
լոր հեշտութիւնները կը հրաւիրէ , անոնց
անձնատուր կ'ըլլայ . և ցոյսութիւնը զնա
մեղմով և յանդգայտ անառակութեան կը
տանի : Ս' յնուհետեւ բան մը զնա չի հաճե-
ցրներ , անսանձ փափաքները կը բաղմանան ,
անհանգիստ հոգին անկարգութեան յետին
ծայրը կը դիմէ , զեղիսութիւնը կ'երեւայ ,
անոր շողիւնը հաղիւ թէ ցոյսը վայրկեան մը
կը զարթուցանէ :

Ինչպէս սիրոյ , նոյնպէս մարդուն ու-
րիշ պիտոյիցը մէջ ալ յառաջ երթալ
հարկ է . նոյն ընթացքը , նոյն աստիճանը ,
նոյն տեսութիւնը պիտի տեսնուին : Այլ ե-
թէ տեսնուի թէ իմ դրած սկզբունքս հաս-
տատուն է , իրաւունք կ'ունենամ հետեւցը-
նելու թէ Օկեղիսութիւնը վերջին ծայր հասած ճո-
ղ-իւտան արդիւնքը եւ վերջին էղբն է : Իգահու-
թիւնն ալ այն մտութեանց մէջ կը դնեմ .
քանզի ազահութիւնն ալ զեղիսութիւնը
կազմելու մէջ մաս ունի . անոր յառաջանա-
լուն և տեւելուն կ'օգնէ , որպէս զի ինք ան-
կէ սնունդ և աճում առնէ :

Օկեղիսութիւնը ժողովրդոց թշուառու-
թեան և մեծամեծ տերութեանց կործանմա-
նը պատճառն է : Աս զմարդ կը ջղատէ , ա-

ապրինութեան բողբոջը կը հեղձուցանէ :
Եթէ երբեմն արուեստագէտ ձեռքերու մէջ
ասկի կը լեցնէ որպէս զի իրեն յաղթանակ-
ներ կանգնուին , անդին այնպիսի կարօտու-
թիւններ ալ կը ծնուցանէ , որոնք յառաջ
անձանօթ էին : Ան առ երեւոյթ օգուար զոր
զեղխութիւնը ծաղկեալ տէրութեան մը մէջ
յառաջ կը բերէ , ուրիշ բան չէ , եթէ ոչ
լոյս մը որ իսկ և իսկ աներեւոյթ կ'ըլլայ .
կամ մանաւանդ կրակ մը որ քիչ մը աւելի
լուսաւորուած ասե՛նք կ'այրէ :

Հռոմայեցիք , որ աշխարհի տիրեցին , մե-
զի ահաւոր օրինակ են :

Կուրիսաները , Կամիլոտները , Հռոմի աղ-
քատութեան ատենն ծնան , առ երևելի մար-
դիկը կռուելու կը բռնադատուէին , և եր-
բէք առանց յաղթութիւն կանգնելու զէնք
չառին : Փարիսոս , Ալիպիան , Հաեկուլոս ի-
րենց առաքինութեամբք բոլոր տիեզերաց
Հռոմայեցւոց օրինացը ասկէ ասպրելու փա-
փաքել տուին : Ազգերուն իրենց աս նոր
տեսարցը բերած հարստութիւնը՝ նենգաւոր
հպատակութիւն մը եղաւ . քանզի աշխար-
հակայներուն ետեւէն՝ զեղխութիւնն ալ
յաղթանակաւ Հռոմ մտաւ :

Կառավար իր հաւերուն խոտամբեր առա-
քինութեամբք երեւցաւ , իր քաղաքակիցնե-
րուն ապականութենէն փախնալով , դանոնք

ուրիշ բան չէր կոչէր բայց անարդ գերիներ .
 'ի դուր երկար առեն հասարակապետութեան
 համար կուտայաւ : Արք Հասարակապետութեան
 ջնջուիլը տեսաւ , զիւրովին գնաց :
 Անկ օրուան մէջ Հոռմ ազատութիւնը ,
 փառքն ու կատաղի միանգամայն կորցա :

Սիզդա , Վարխա , Կատիլինա , Աերան ի-
 բե'նց Հայրենեաց ազիբը փարատեցին , մինչ
 Հոռմի և նահանգներուն զեղխութիւնը
 տէրութիւնը հիմէն փորելով անոր անկումը
 կը պատրաստէր :

Մինեացւոց տարեգիրները կը պատմեն
 գիպուած մը որ կը ցուցնէ թէ , զեղխութեան
 արբեցութիւնը և մարդկային մտքին
 մոլեգնութիւնը մինչև ուր կը հասնին :

Քիա Մինեացւոց ընդարձակ տէրութիւնը
 վրայ խաղաղութեամբ կը թագաւորէր : Վիւ-
 ցազն մը ըլլալու համար ծնած էր . ունէր
 պայծառ միտք , սաստիկ հանճար , վայելչու-
 թիւններ , քաջութիւն և այնպիսի մեծ զօ-
 րութիւն մը որ ամէհի ձիերէ ձգուած կառք
 մը ձեռքովը բռնելով կը կեցնէր : Բայց կա-
 նանց վրայ տարփանք և ամպարիշտ միտք մը
 անոր սրտին մէջ զեղխութեան թոյնը դրին .
 անագորայն և շարաքարոյ եղաւ . անտա-
 կութեանցը և բաղմադիմի ամպարիշտ գործ-
 քերուն համար իր բոլոր ժողովրդոց սիրտը
 երմէ օտարացուց : Բայց դեռ երեք հաւա-


տարիս և նախանձայոյց քու բնէր ունէր , ու
 բնէր անոր անկարգութեանցը պատկերն ու
 նոր ցուցնելու համարձակեցան . կոյր և ան-
 գութ թագաւորը բարկանալով զանոնք իր
 առջեւը սպանել կուտայ :

Թագաւորը ամբարտաւան կնոջ մը սաս-
 տիկ կը զարնուի , և զնա բոլոր տէրութեանը
 մէջ գշխայ հրատարակել կուտայ : Ահնը կը
 սկսի խորհել թէ թագաւոր մը հարձի մը
 սիրոյն համար մէկ օրուան մէջ երկու հա-
 բիւր միլիոն կը վասնէ : Հպարտութիւնն
 կարծել կուտայ թէ իր գեղեցկութիւնը և ս
 մեծամեծ ծախուց արժանի է , և թէ բոլոր
 Ահնէացւոց հարստութիւնը իրեն վայելուչ
 եղած պատիւը հատուցանելու հարկ բա-
 ւական էն : Ահնայր կարծ է կ'ըսէ թագա-
 ւորին , ուստի արժանի է որ գիշերուան մը
 թութիւնն ալ անոր տեւողութիւնը և ս ա-
 ւելի կարճեցնելու գայ : Այս լուսոյ և խա-
 ւարի մշտնջենաւոր և տաղանկալի յաջորդու-
 թիւնն ինչ պիտի ըլլայ : Արանի թէ այնպի-
 սի սպարանից մէջ ըլլայինք , ուր սաստիկ
 պայծառութիւն մը միշտ լուսաւորէր , և այ-
 գուն գառնալուն սպասելու հարկ ըլլար :
 Աստուծոյ ձեռքը օղին մէջ հրեղէն գունտեր
 դրած է , բայց կը խաւարիտ և զմեզ մութը
 կը թողուն : Ահ թէ իմ թագաւորիս ձեռքը
 չի կրտար իր սպարանիցը մէջ ուրիշ սատղեր

դնել, որոնք միշտ լուսաւորեն և երբէք չ'
 շիջանին: Հաստատութեան ջահերը թող
 արեղերաց ու ընդ մասերուն լոյս տան, մեր
 ջահերը քեզի և ինձի համար միայն պիտի
 փայլին. ամենեւին պիտի չի նուազին և մեր
 երջանկութեան խորհրդաւոր նշանն ըլլան:
 Նիք մանանք, յաւել յիմար դշխոյն, անոնք
 երկնից մէջ անթիւ են. այլ դուն երկրիս վը-
 րայ միայն թագաւոր ես: Թող խաժամուժ
 ամբոխը ան մեհեաններուն մէջ աս անկա-
 րեկան խակներուն երկրպագութիւնն ընէ:
 Անոնք յԱղիմպոս աստղերու բոյլերուն մէջ
 կը թագաւորեն, դու երկրի վրայ քու ձե-
 ուագործ արեւներուդ մէջ թագաւորէ: Մի
 թէ քու զօրութիւնդ սահման ունի: Խօսէ,
 թող քու մեծութիւնդ աս նոր աշխարհին
 կազմուածոյն մէջ փայլի: Հեռացաւ քենէ
 թէ շորս ժամանակաց փափոխումները, թէ
 օդոյ անհարթութիւնները և թէ այն կերպի
 փափոխութիւնները զոր նիւթը իրաց վրայ
 յառաջ կը բերէ: Դուն այն կերպերն ըրէ
 ետեղակալ և հաստատուն, և մեր սիրտերը
 զուարճութեանց և դբօսանաց մէջ ընկրդ-
 մենք: Խաբենք ժամանակը որ իւր ազդեցու-
 թիւնը մինչև սրտերու վրայ անգամ կը տա-
 նի, և երբ ճակատագիրը մեր օրերուն թելը
 կտրելու գայ, մեր երկու համամիտ հոգի-
 ները հեշտութեանց անմահութեանը մէջ 'ի
 միասին սլանանք:

Թե բարձրութիւնը տկար հողինքը մէջ
 դիւրաւ կը սպրդի : Խորամանկ գշխոյին ազ-
 ուած բոլոր դրոշմը՝ դիւրահաւան թագա-
 ւորին սրտին մէջ կը տպաւորուի . անոր կոյր
 գութը թագաւորին հպարտութիւնը կ'ողո-
 քէ . թագաւորը զինք բնութեան հրամայող
 աստուած կը կարծէ . բիւրաւոր բազուկներ
 կը սկսին երերալ . հոյակապ ապարանք մը կը
 կանգնուի , ոսկին և կապոյտը հոն ամեն կողմ
 կը շողան : Ամեն գիէ ցորեկուան լուսոյն դէմ
 կը փակուի . հրեղէն նիւթերով լեցուն գուն-
 տեր այն ապարանքը լուսաւորող արեգակու նքն
 ու աստղերն են , հոն շնչուած օդը անուշա-
 հոտութիւն է , քաղցրահամ ըմպելեաց թէթե
 անձրե մը իբրև տեսակ մը ցօղ , այն նորա-
 շէն երկինքէն կը տեղայ : Թագաւորն ու գլշ-
 խոյն , կարաւուք նուագածութեամբ և խրն-
 ջոյիւք հանգերձ , այն սխրալի ապարանից մէջ
 կը մտնեն . հոն երկուքն ալ բնութիւն և
 տիեզերք կը մտնան . Մինեացուոց հարստու-
 թիւնը հոն կը թափի և կը սպառուի . բայց
 վաղվաղակի տժգահ ժողովրդեան մը ազադա-
 կը կը լսուի . դրացի թշնամի մը գէնք կ'առ-
 նէ , յառաջ կը խաղայ , այն ամօթալից շէն-
 քը կը կործանէ , և գահը կը նստի . բոլոր
 տէրութիւնն անոր դրօշին տակ կը մտնէ .
 Թշուառ Քիան կը թողուի , իբր երեք տա-
 ըի գաւառէ գաւառ թափառական կը շրջի .

վերջապէս անմիտ զեղխու թեան մը զոհ, գա-
 հին արհամարհանք և ժողովրդեան նախա-
 արինք ըլլալով կը մեռնի :
 Յետին ծայր զեղխու թիւնը մարդու օ-
 բարքը կ'եղծանէ և միտքը կը յիմարեցնէ :
 Անշափ զեղխու թեան վերջին կնիքը անկրօ-
 նու թիւնն է : Սեծամեծ տէրու թեանց տա-
 ընգիրները թող կարգացուին, պիտի տես-
 նուի որ զեղխու թիւնն ու անկրօնու թիւնը
 պետու թեան կործանմանը նշան և թուակիան
 եղած են : Վարդոց մէկ տիրութեան թիւնն է որ
 միայն յետին ծայր թշուառու թեան ատեն
 Աստուածու թեան կը դիմեն : Սեղխու թիւնը
 մարդոց կուտայ ինչ որ անոնց անամիձ կիր-
 քերը կը ցանկան : այն ատեն կը թուի թէ
 մարդս այլ ևս վերին զօրու թեան մը կարօտ
 չէ : լուծը կը թօթափեն, և հարստու թիւնն
 ու ամբարտաւանու թիւնը մարդու սիրքուն
 զօրու թեանը վրայ ապաւինել կուտայ : Խօսքս
 բոլոր կրօնքներու և բոլոր տէրու թեանց հա-
 մար է . թէպէտ յերկնուստ մէկ օրէնք մի-
 այն մեզի տրուած է, և այս կրօնքին մէջ մի-
 այն կը գտնէ մարդ այն անյայտ զօրու թիւ-
 նը զոր հին փիլիսոփայք բնու թեան դաստի-
 արակու թեան սկզբանց և մեր տկար առա-
 քինու թեանց մէջ վայրատար փնտռեցին :



Գ Լ Ո Ւ Խ Ժ Ա

Անկրօն-խեան վրայ :

Եթէ զեղիսու թիւնը բարբերը կ'ապակա-
նէ , բարուց ապականու թիւնն ալ մտաց զա-
ռանցում յառաջ կը բերէ , և սա զառան-
ցումը կրնայ կոչուիլ մտքի զեղիսու թիւն որ
տէրու թիւններ տապալող ահաւոր հարուած
մի է : Անոր հայրերուն նուիրական սրատ-
ուէրները՝ կանխակալ կարծիք կամ նախա-
պաշարում կը համարուին . անոնց տեղ ու-
րիշ կարծիքներ կը դրուին . ամօթ կը համա-
րուի խորհել այնպիսի ճշմարտութեանց վը-
րայ որոնք մարդուս յոյժ կարեւոր են . և
աս օրհասական ախտը դիւրաւ կը հաղորդի
խածամուժ ամբոխին որ միշտ իբրև գերի
ամեն բանի նմանել կը սիրէ :

Պիտանի արուեստներն ու օգտակար գի-
տութիւններն անգամ այս մտքի զեղիսու թե-
նէն կը կրեն : Պարզ իրաց , ուստի և բնու-
թեան վրայ անհոգութիւն կ'ըլլայ , միտքը
իր սահմանները կ'անցնի , մարդս բարձր ել-
լել կ'ուզէ , բայց սա սլացման ատեն կը գլու-
նէ Աստուած մը որ զնա կը մերժէ և կը կոր-
ծանէ :

Ես զառանցանայ կամ խելագարութեան
գաղաթը հասած կ'ըլլայ մարդ՝ երբ վեհա-

գոյն Վակի մը գոյու թիւնը կ'ուրանայ : Օրա
չճանաչելը՝ առաքինութենէ վախնալ է . ե-
թէ բնութեան մէջէն Վստուած պակսի ,
յանցանքը միայն կը մնայ :

Նոգամ մը Յաւիտենական Մրդարու-
թիւնը մերժելէ ետքը , երկրի վրայ այլ ևս
ուստի պիտի վախնանք : . . . - ()րէնք-
ներէն : Վայց հանդարտութեամբը կը գոր-
ծենք ամեն ոճիր որոնք ոչ կ'իմացուին , ոչ
ալ կը պատժուին :

Նհաւատութիւնն անդամ տկար հողւոյն
տիրելէ ետքը , ևս մեծամեծ անպատեհու-
թեանց ալ կը տանի : Եթէ անհաւատու-
թիւնը մտքին զօրութեամբը ծնած է , ով
զնա արգելուլ կարող է : Կարծիքը , պատիւն
անգամ այնուհետեւ աներեւոյթ կ'ըլլան :

Մրդարեւ , Նաստուածը շուրանար թէ
Վստուծոյ գոյութիւնը տղայութեան յոյժ
ըօրաւոր աղգեցութիւններէն մէկն է : Վայց
անգամ մը Վստուածութիւնը մերժելու
յանդգնելէ և բարձրեալ էակին պատկերը
սրտէն խլելէ ետքը , միթէ իւր շահուն հա-
կառակ կարծեաց կրնայ հանդուրժել :
Կրնան զնա արգելուլ մարդկեղէն իմաստու-
թեան թելադրութիւնները , եթէ ասոնք
անոր մոլեգին կիրքերուն գէմ ըլլան : Պա-
տիւր կրնայ անոր անիրաւ փառասիրութեա-
նը շափ և սահման գնել : Կրնայ արդարու-

Թիւն տեսնել հոն՝ ուր զՆստուած չի տես-
 ներ : Միայն մարդիկ կարող են զնա վախցը-
 նել . անոր սանձք՝ երկիւղն է . և առաքի-
 նու թիւնք՝ կեղծաւորութիւնն է : Ղարտար
 չարագործը , եթէ տեսութենէ խուսափէ ,
 եթէ կայծակէն պրծի , այս սկզբանց համե-
 մատ պէտք է որ զգաստ և իմաստուն ըլլայ :

Տայց անհաւատութիւնք՝ ցոփութիւն և
 անառակութիւն կը ծնանի . ասոնց երկուքն
 ալ իսկ և իսկ ամբարշտութեան ետեւէն կը
 հասնին . մոլութիւններն ու անկրօնութիւ-
 նք մի ըստ միով իրար կը զարգացնեն և կը
 զօրացնեն , մոլութիւնները կիրքերը կ'ոգո-
 քեն , հեշտութիւններն ու անառակութիւն-
 ները կը հրաւիրեն . անկրօնութիւնք զանտիք
 առանց խղճի վայելել տալու կը ջանայ :

Խիղճը կամ տարակոյսը ազահին ճիւղ
 մի է որոյ տեսութենէն յանցաւորին գոյնք
 կը նետէ . Տայց անհաւատութիւնն որ յան-
 ցանք գործել տուողն է , խիղճն ու տարա-
 կոյսը միանգամայն կը հեղձուցանէ :

Վնասրիչտը չուղեր բնաւ այնպէս երե-
 ւել որպէս թէ իր մոլութիւններն ու կիր-
 քերը կը գատապարտէ , ուստի ամբարտա-
 ւանութիւնն անոր կը թելադրէ որ նոյն ին-
 քըն Վստուծոյ դէմ յարձակի . այսպէս մո-
 ջեգնութեան և կուրութեան յետին ծայրը՝
 աներկիւղ իմաստութեան յաղթանակ կը

կարծէ : Մարեքախտու թեամբ չկայ քան մը
որ այնպէս նուազ ըլլայ ինչպէս անաստուա-
ծը . մոլու թեանց ջերմու թեանը և մարդկա-
յին մտքին զառանցանացը մէջ ճնամ ճի-
ւաղ մի է :

Մարտիկն և Մարաժոյ մէջ պաշտօն մը ,
հաղորդակցութիւն մը պիտոյ է . կրօնք մը
պիտոյ է , քանզի աներեւոյթ շղթայ մի է
որոյ մէկ ծայրը երկինք , միւս ծայրը
երկիրն է :

Իրեթէ բոլոր մարդիկ այս մեծ ճշմար-
տութիւնը կ'ընդունին . բայց մեծ մասը ի-
րենց կրօնը համեմատ կրօնքներ ընդունելու
միաբանած են . կարծես թէ իրենց սոյն ան-
գամ արարիչը իրենք ըլլալ կ'ուզեն : Օ՛հստ-
ուած իրենց մտքին մէջ կը նկարեն այն-
պիսի կերպարանօք որ իրենց հաճոյական է .
և իրենց ցանկութեանը համեմատ Մստուած
կը յարդարեն :

Սակայն եթէ Մստուած մը կայ , հարկ է
որ անիկայ նոյն իսկ ճշմարտութիւնն ըլլայ .
և քանզի ճշմարտութիւնը մի է , ապա մի
միայն կրօնք կայ :

Իր Մարտիկն ու իր ընկերը սիրել . ահա
բնական կրօնքը , ահա Մոլիսիսական և Մե-
տաբանական օրէնքը :

Յերկնուստ մկայուած այս երեք կրօնք-
ները մի են , չեն կրնար այլայլել ոչ իրենց
նիւթը և ոչ իրենց սկզբունքը :

Վսեմ կրօնք մը թէ Մսուճոյ մեծու-
 թեանը և թէ մարդուն տկարութեանը կա-
 ընուոր էր . հարկ էր որ միջին օրէնք մը քան
 զսա կանխէր . օրէնք մը որ ամենէն կատա-
 ընալ կրօնքին պատկերը և եթ էր : Մտաբե-
 անոր (այս կրօնքին) խորհուրդներն անհաս-
 են , և յաւիտենական արդարութիւնը պար-
 տական էր պարզամիտ և առաքինի մարդոց
 ան խորհուրդներուն գոյութեանը ասպացոյց-
 ները միայն տալ . միանգամայն հրամայելով
 որ խաւար մը ամբարտաւան մարդուն միա-
 թը պատէ :

Մտաբե անոր մը գոհ կ'ըլլայ , եթէ հա-
 մոզուելու ըլլայ թէ Մսուճոյ խօսեցաւ .
 Մսուճոյ անհրաժեշտ ատեղծելու համար խօսք
 մը միայն ըսաւ . բայց իւր օրէնքը տալու հա-
 մար՝ զինք յայտնեց , զինք զգալի ըրաւ : Քա-
 նիցս անգամ մարդիկ անոր ձայնը լսեցին :

Մտաբե անոր օրէնքը նոյն միտքը յաղթահա-
 ընելու համար հարկաւոր էր . հարկ էր որ
 Քրիստոնէական կրօնքին խորհուրդներուն պատ-
 կերը կամ օրինակը ըլլար : Քրիստոնէութիւնն
 անդասին աշխարհի սկիզբէն զինք յայտնեց .
 բնութիւնը իւր բոլոր հրաշակերտները մի-
 անգամայն կը յուցնէ . դիպուածներու շարք
 մը բոլոր ազգաց մէջ զգալի և անընդհատ
 ասպացոյցներ կը մատուցանէ : Այն իսկ մար-
 դիկ են որոնք , չորս հազար տարի , պատրաստ-

տեցին այնպիսի տեսարան մը որ երկիրը զար-
մացուց :

Այս սքանչելի կրօնքը ուլ յերկիր բերե-
լու կարող էր : Աստուած միայն : Աստուած
մարդ կ'ըլլայ . ահա խորհուրդը : Արեւմտեան
խորհուրդն Աստուածու թեան մէջ է : Այն,
կը համարձակիմ ըսելու , Քրիստոնէութիւնն
Աստուծոյ զօրութեանը վերջին եզրն է , չը-
սենք թէ նոյն իսկ Քրիստոնէութե մէջն է :

Աստուած միայն կարող է ինք իրեն հա-
սու ըլլալ . ուստի չ'հաւտալ անոր համար
որ այն խորհուրդներն անհաս են , յանդըգ-
նութեամբ ըսել է . Չեմ ուզեր Քրիստոնե-
այ ըլլալ , քանզի Աստուած չեմ :

Ի՞նչը դմեզ կը յորդորէ . զգայութիւն-
ները կը ձգեն . Աստուած իւր խորհուրդնե-
րը մեր մտքին , իւր քարոյականը՝ մեր զգա-
յութեանցը կ'յնծայեցնէ :

Բայց այն անհաս խորհուրդները պարտին
մեր ամբարտաւանութիւնը խոնարհեցնել ,
և այն քարոյականը պարտի մեր կիրքերը նը-
ւաճել :

Ստրին հնադանդութիւնը՝ այն ամբար-
տաւանութեան զոհն է . ամբարտաւանու-
թիւնը՝ որ արարածոյ մը առաջին ոճիրն է .
Բարձրեալ Ասկը կը պահանջէ որ մեր մտ-
քը անոր առջև խոնարհեցով խոնարհի . աս
արժանաւորութիւնը մեզի կը թողու , բայց

մի թէ կրնայի նք այս արժանաւորութիւնն
ունենալ, եթէ չհաւտալ անհնարին ըլլար :

խորհուրդը՝ Վատուծոյ և մարդոց մէջ
կատուած քող մի է : Երկիրը կը խոնարհի,
Վատուած կ'երեւի, և խորհուրդները պայ-
ծառ և յայտնի կ'ըլլան, մարմնոց փոշին աչ-
խարհի աճիւններէն դուրս կ'ելլէ, ժամանա-
կին պատկերը կ'եղծանի : հոն կը սկսի յաւի-
տենաականութիւնը :

Վնհաւատ դու, եթէ թագաւորի մը չափ
հզօր ըլլայիր, տակաւին քեզի պիտի ըսէի .
Երուսաղէմին տաճարը կանգնէ, եթէ այն
կանգնուի, քրիստոսն ալ թիւնը կործանած է,
բայց եթէ քու ջանքերդ անուշաւտ ըլլան, կը
հաւատան : — Ահ :

Ի՞նչպէս վերցնենք խորհուրդներն ու Հա-
ւաքը սրտնք նոր օրէնքին էութիւնն են .
արդէն ըսի թէ յերկնաստ վկայեալ կրօնը-
ներուն ամենն ալ, մի միայն են : Արարիչը
սիրելի, ահա օրինաց ձայնը և մարդու սառա-
ջին պարտքը : Մեր հոգին Վատուածութեան
մէկ ճառագայթն է, Վատուածութիւնը սի-
րելը՝ անդրէն իւր կեդրոնը գարձնել է այն
նշոյլը որով մենք ազի և շուէչ ունինք :

Ի՞նչպէս կ'աւելնի, ո՞վ կարող է քու
երախտեացի հասալ ըլլալ : Կարգաւոր ոչ պի-
տի է բայց հոգ, անմահ միտք մը յանձնի
ունի, աշխարհի բոլոր արարածոց մէջէն մարդ

միայն մինչև առ Քեզ թափանցելու ու Քե-
զի հետ միանալու, զՔեզ ճանաչելու և սիր-
ելու իշխանութիւն ունի:

Երկնաւոր սոսիւններ, դուք ալ մեզի նման
արարածք էք. կրնայիք մարդիկ ըլլալ. բայց
օչ ապարէն առաւել սիրելու պարտական
պիտի ըլլայիք:

Վարդուս երկրորդ պարտքն է, իւր ընկե-
րը սիրել:

Աս պատուէրը կատարելով, մարդ իւր ա-
ռաքինութեամբքք հանդերձ կը բարձրանայ.
Իւր թշնամեացը ներելն արդարեւ մեծ խն է.
բայց ներելուն վրայ սէր ալ յաւելուլ Քը-
րիստոնեայ ըլլալ է:

Տարոյական առաքինութիւնները ժողո-
վորդոց երջանկու թիւնն են. մոլութիւններն
անգամ այն երջանկու թեան կը նպաստեն:
Նազորոյն միտք ունեցող մարդ մը կրնայ,
վրէժխնդրութեան մէջ դժնեայ զուարճու-
թիւններ վայելել. բայց փառաց ցանկացող
ըլլալով, շատ անգամ կը սիրէ մանաւանդ
գովեստներ լսել քան թէ հեծու թիւններ.
կը ներէ առ 'ի ցոյցս. հպարտութիւնն ա-
նոր անգթութիւնը կը կասեցունէ. կ'ուզէ
բարեբար երեւիլ, թէպէտ իր զոհը կորսըն-
ցընելուն համար սրտէն կը ցաւի:

Վարկոս Աւրեղիոս, Տիտոս, այս մեծ մար-
դիկը, որոնք իրենց պաշտած գիբերէն ալ մեծ

էին, աշխարհիս սիրելի եղան, իրենց ամե-
նէն քաղցր օրերը գթութեան մէջ կը գրա-
նէին. բայց անոնց ներել գիւրին էր, քանով
պատժելու կարողութիւն ունէին: Օտարմանք
յորդորելու սովրած ըլլալով, անոնց զգայուն
սիրտը իրենց ցուցուցած սիրով արբեալ էր.
ուստի նոյն իսկ հպարտութիւնը գիւցազն
մարդոց ձեռնառու է:

Բայց մեծամեծ զրկանք կրելէ ետքը, զըր-
կանաց փոխարէն միայն հառաչանք հատու-
ցանել, և մերջապէս ներել՝ ահա առաքի-
նութիւն իւր մեծապայծառ պայծառութիւն:

Եթէ մարդ մը այս սքանչելի ճիգն ընելու
կարող է, որչափ ևս առաւել պիտի ըլլայ ա-
նոր սիրոյն սահմանը անոնց համար որ զինքը
վշտացուցած չեն: Թշուառի մը տեսութիւնն
անոր սիրտը կը կեղեքէ, եթէ մարդոց թըշ-
ուառութեանն ամբողջ պատկերը տեսնէր,
անհնարին թշուառ պիտի ըլլար. բայց կը
տեսնէ այնչափ միայն՝ որչափ իւր հոգւոյն
մեծութիւնը յայտնելու բաւական է: Անոր
բնածին բարքը միշտ օրինաց համեմատ է:

Աստուածեղէնք օրէնք, բու արքայութիւնդ
խաղաղութեան արքայութիւն է:

բու շանթերդ Յաւիտենականութեան մէջ
կը գոռան:

Վիւցազնական բաջութիւն, դուն որ
այնպիսի առաքինութիւն մի ես որով մար-

գիկ այնչափ կը պարծին , ուր այնչափ գորու-
 թեամբ և բերցաւ որչափ մեր նահատակաց
 վրայ : Չանոնք տանջելու տանողը յուսա-
 հատու թիւնը չէր : Կոնք տանջուելու հան-
 գարտու թեամբ կ'երթային : Փոխանակ յանձ-
 նապատան ըլլալու , իրենց սկարու թենէն
 մեծապէս կը կասկածէին : Արչափ իմաստու-
 թեամբ հալածանաց վտանգներէն կը խորշե-
 ին : Իսկ ուր վտանգներէն խոյս տալ ան-
 հնար էր , որչափ աներկիւղու թեամբ կը
 խիզախէին : Կանայք . ճերուհիք , տղայք
 անգամ , Սահ , կը գոչէին , և աներկիւղ
 կ'իյնային :

Հասարակաց քաջութիւնը մահը իբրև
 վախճան թշուառու թեան կարծել կուտայ :
 Իսկ երկնաշնորհ քաջութիւնը՝ մահն իբրև
 երջանկու թեան մը սկիզբը նկատել կուտայ :
 — Իսկ ամբարշտին ճայնը կը լսեմ :

« Եթէն կրօնք իր նահատակներն ունի , ու-
 թ թեմն նահատակները քու կրօնիդ ճշմարտու-
 թեանն ապացոյցը չեն կրնար ըլլալ : Եւ ալ
 ո՞րքաքիս երկրպագու թիւն կրնեմ , և ինչ
 որ կը կամիմ որ ինձի ըլլայ , ընկերիս նոյնը
 ո՞ր կ'ընեմ : Ինչպէս ան քրիստոնեան կը
 ո՞ր կարծէ թէ Կատուած իրեն խօսած է . ա-
 ո՞ր նոր խորհարարներուն երկրպագու թիւն կ'ընե .
 ո՞ր բայց ես կ'անսամ քանի՞ն՝ զոր նոյն Կատ-
 ո՞ր ուածը ինձի տուած է ո՞ »

Ինչ կրօնս թէ Արարչիդ երկրպագու
թիւն կ'ընես . բայց քու Աստուածաբանու
թիւնդ ինչ նշանով ճանչնանք : Թշուառնե-
րը կը սիրտիս : Ներանդ սուտ խօսելու , և
սիրտդ վրէժխնդրու թեան դէմ փակուած է :
— Արդար ես : . . . Եթէ արդար ըլլայիր ,
եթէ կատարելիք այն օրէնքները զորոնք ան-
դադար կը յեղ յեղուս , ապաքէն Քրիստոնե-
ու թեան անհաշտ թշնամին չէիր ըլլար , այլ
մանաւանդ անոր Առաքեալն ու մկան կ'ըլլայիր :

Արդարեւ , եթէ առաքինի անհաւատ մը
գտնուէր , ուղիղ մտօք ճշմարտութիւնը կը
փնտռէր , և իսկոյն կը ճանչնար զԱստուած
որուն կը պաղատի : Աստուած անոր սիրտը
միայն կուզէ . ուստի հաւատքն Աստուծոյ
գործն է : Բայց անհաւատը , իր կիրքերէն
յափշտակուելով , պիտի ճանչնայ թէ բնու-
թեան օրէնքն անդամ կատարելու բաւական
չէ : Քրիստոնեութիւնը կրնայ միտքը կամ
բանն ապշեցնել , զգացու թիւնները զար-
հուրեցնել , բայց յերկնուստ լուսաւորուե-
լով , պիտի տեսնէ թէ այն գործքերը զորոնք
կատարել ամբարտաւան մարդուն անհնար
է , պարզ մարդուն դիւրին են :

Սարդ իւր կիրքերուն շունչէն հանապազ
կը կործանի . բայց երբ Աստուծոյ ձեռօքը
վառեալ ըլլայ , հեշտութիւնն ու ցաւը մի-
անգամայն կը յաղթէ :

Արարչին և անոր սրբաշուն տարուելուն
 վրայ խօսեցայ. ով դուն * մեր թագաւորնե-
 րուն օգոստական դուստրը. երանի թէ քու
 սրտիդ մէջ ալ թափանցէի. քու խորհուրդ
 պարզէի, և զանոնք համօրէն աշխարհին առ-
 ջել յայտնէի: Ապաքէն մարդոց միտքը կը
 կը լռէր, քանզի հաւատացելոյ մը օրինակը
 տուած կը լլայի և գործս անմահ եղած կ'ըլլար:

* Լուսիչ Տիկին Գաղղոյ:

ԱՒԱՐՏ



ՅԼՆԿ ԳԻ ԽՈՑ

ԱՌԱՋՆՈՅ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ . Ա .	Երկիր-ընդհանուր և հիմնական վրայ .	1
»	Բ . Լճակներու-և-հոսանքներու վրայ .	10
»	Գ . Բարձրագույն-և-հիմնական վրայ .	15
»	Դ . Մերայ վրայ .	20
»	Ե . Բարձրագույն-և-հիմնական վրայ .	24
»	Զ . Խոնհիմն-և-հիմնական վրայ .	33
»	Է . Բարձրագույն-և-հիմնական վրայ .	35
»	Ը . Բարձրագույն-և-հիմնական վրայ .	43


ՄԱՍՆ ԵՐԿՐԱՐԻ

ԳԼՈՒԽ . Ա .	Տիրու-և-հիմնական վրայ .	61
»	Բ . Լճակներու-և-հոսանքներու և-այլ-և-այլ կերպերու-և-վրայ .	66
»	Գ . Փառասիրու-և-հիմնական վրայ .	75
»	Դ . Յոգի-և-հիմնական շախմատայն աղապու-և-հիմնական վրայ .	77
»	Ե . Բարձր-և-հիմնական վրայ .	79
»	Զ . Մախանայ վրայ .	84
»	Է . ՆԱխանայն (Ժաշու-ընդ) վրայ .	88
»	Ը . Փառասիրու-և-հիմնական վրայ .	92
»	Թ . Լճակներու-և-հիմնական վրայ .	96
»	Ճ . Օգի-և-հիմնական վրայ .	103
»	ՃԱ . Լճակներու-և-հիմնական վրայ .	111

ՎՐԻՊԱԿԻ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Երեւ.	ՏՆ.	ՍԽՆ.	ՈՒՆ.
ն	12	արդեւքները	արդիւնքները
1	22	արարածներով	արարածներով
5	13	չարէ	չարը
11	14	վայրավար	վայրապար
28	6	փնտռելով	փնտռելով
41	2	դեղրոնն	կեղրոնն
44	3-4	արիւթիւն	արիւթիւն
"	26	պաշտպանել	պաշտպանել
56	27	քինովներէն	քովիններէն

10 լայն մասի-տեղից . 3 . ՎՐԻՊԱԿ
 22 լայն մասի-տեղից . 2 . "
 23 լայն մասի-տեղից . 4 . "
 25 լայն մասի-տեղից . 4 . "
 27 լայն մասի-տեղից . 4 . "
 29 լայն մասի-տեղից . 4 . "
 31 լայն մասի-տեղից . 4 . "
 33 լայն մասի-տեղից . 4 . "
 35 լայն մասի-տեղից . 4 . "
 37 լայն մասի-տեղից . 4 . "
 39 լայն մասի-տեղից . 4 . "
 41 լայն մասի-տեղից . 4 . "
 43 լայն մասի-տեղից . 4 . "
 45 լայն մասի-տեղից . 4 . "
 47 լայն մասի-տեղից . 4 . "
 49 լայն մասի-տեղից . 4 . "
 51 լայն մասի-տեղից . 4 . "
 53 լայն մասի-տեղից . 4 . "
 55 լայն մասի-տեղից . 4 . "
 57 լայն մասի-տեղից . 4 . "
 59 լայն մասի-տեղից . 4 . "
 61 լայն մասի-տեղից . 4 . "
 63 լայն մասի-տեղից . 4 . "
 65 լայն մասի-տեղից . 4 . "
 67 լայն մասի-տեղից . 4 . "
 69 լայն մասի-տեղից . 4 . "
 71 լայն մասի-տեղից . 4 . "
 73 լայն մասի-տեղից . 4 . "
 75 լայն մասի-տեղից . 4 . "
 77 լայն մասի-տեղից . 4 . "
 79 լայն մասի-տեղից . 4 . "
 81 լայն մասի-տեղից . 4 . "
 83 լայն մասի-տեղից . 4 . "
 85 լայն մասի-տեղից . 4 . "
 87 լայն մասի-տեղից . 4 . "
 89 լայն մասի-տեղից . 4 . "
 91 լայն մասի-տեղից . 4 . "
 93 լայն մասի-տեղից . 4 . "
 95 լայն մասի-տեղից . 4 . "
 97 լայն մասի-տեղից . 4 . "
 99 լայն մասի-տեղից . 4 . "





1669-1678

<< Ազգային գրադարան



NL0025848

8485200

5485200

<< Ազգային գրադարան



NL0025843

4.20

<< Ազգային գրադարան



NL0025847

5485200

2485200

<< Ազգային գրադարան



NL0025842

4.20

<< Ազգային գրադարան



NL0025846

9485200

1485700

<< Ազգային գրադարան



NL0025841

5.20

<< Ազգային գրադարան



NL0025845

5485200

0485700

<< Ազգային գրադարան



NL0025840

2.20

<< Ազգային գրադարան



NL0025844

4485200

6485700

<< Ազգային գրադարան



NL0025839

1.20

01.20

6.20

8.20

7.20

9.20

